

TA 8998-REG: Հայաստանում սնանկության ոլորտի օրենսդրության
զարգացում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանում սնանկության ոլորտի օրենսդրության
զարգացում

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

Միջազգային փորձագետներ՝

Ջոն Մարտին
Սքոթ Աթկինս
Ռոդ Բրեթեզ

Ազգային փորձագետներ՝

Տիգրան Մարկոսյան
Վարազդատ Ասատրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ	6
3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ	13
4. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ	28
5. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՌՈՂՋԱՑՈՒՄ/ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	48
6. ՄՓՄՁ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԼՈՒԾԱՐՈՒՄՆԵՐ	60
7. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԵՎ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	79
8. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ՝ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	87
9. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	96
10. ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ	101
11. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ	106
12. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	113

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Նորթոն Ռոու Ֆալբրայթ Ավստրալիան (Norton Rose Fulbright Australia) ներկայացնում է սույն ռազմավարական զեկույցը՝ բացահայտելով Հայաստանում սնանկության ոլորտի իրավական դաշտի զարգացման ուղենիշային սկզբունքներն ու շրջանակները: Այն ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն (ՀՀ ԱՆ) և Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)¹ համաձայն TA 8998-REG Տեխնիկական առաջադրանքի պահանջների (ՏԱ):

1.2 Սույն զեկույցը պատրաստվել է Տեխնիկական առաջադրանքի հիման վրա ընտրված սնանկության ոլորտի ազգային և միջազգային մասնագետների կողմից համատեղ: Ազգային մասնագետները պատասխանատու էին 3-րդ և 4-րդ գլուխների և հավելված «Ա»-ի պատրաստման համար, իսկ միջազգային մասնագետները՝ սույն Զեկույցի մնացած հատվածի պատրաստման համար:

1.3 Սույն Զեկույցը առաջին հերթին բացահայտում է հաստատված և ընդունված այն հիմնական սկզբունքները, որոնցով ուղղորդվում են սնանկության ժամանակակից իրավական դաշտը մշակելիս (**Գլուխ 2**): Այնուհետև, **Գլուխ 3**-ում ուսումնասիրվում են Հայաստանում սնանկության մասին օրենսդրության հետ հետ կապված վերջին ռազմավարական աշխատանքները (փաստաթղթերը), որպեսզի այդ զեկույցներում ներկայացված տեսակետները հաշվի առնվեն սույն ռազմավարական զեկույցում:

1.4 Գլուխ 4-ում ամփոփված են ազգային մասնագետների ներգրավմամբ լայնածավալ խորհրդատվական գործընթացի արդյունքում ստացված արձագանքները (ազգային մասնագետների ներգրավմամբ լայնածավալ խորհրդատվական գործընթացի արդյունքում ստացված արձագանքները առավել մանրամասն ներկայացված են Հավելված Ա-ում¹):

1.5 Զեկույցի մյուս հատվածներն անդրադառնում են կորպորատիվ սնանկության մասին օրենսդրության առանձին ասպեկտներին, մասնավորապես.

ա) բարեփոխումներ, որոնցով առաջարկվում է սահմանել ժամանակակից և արդյունավետ կորպորատիվ առողջացման ընթացակարգեր (**Գլուխ 5**).

բ) առաջարկություններ ՄՓՄՁ-ների սնանկության գործընթացի ներդրման մասին՝ հարմարեցված ՄՓՄՁ-երի հատուկ կարիքներին (**Գլուխ 6**).

գ) անդրադարձ է կատարվում պարտապանի և պարտատիրոջ միջև հարաբերությունների վերաբերյալ բարեփոխումների գործընթացին (**Գլուխ 7**).

¹ Հավելված Ա-ն չի հրապարակվել՝ ելնելով տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունից:

դ) **Գլուխ** 8-ում ներկայացված են սնանկության գործով կառավարիչների կարողությունների զարգացման մասով առաջարկվող միջոցները.

ե) **Գլուխ** 9-ում քննարկվում են դատական համակարգի կարողությունների զարգացման հնարավորությունները.

զ) **Գլուխ** 10-ում ներկայացված են ՄԱԿ Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովի Անդրասահմանային սնանկության մասին մոդելային իրավունքի ընդունման վերաբերյալ առաջարկությունները.

է) **Գլուխ** 11-ում քննարկվում են խորհրդակցությունների ընթացքում բարձրացված մյուս կարևոր հարցերը:

1.6 Զեկույցն ավարտվում է անվճարունակության վերաբերյալ Հայաստանի օրենքների բարեփոխումների՝ առաջարկվող շրջանակի և գործընթացների նշմամբ, որպեսզի լայնածավալ խորհրդատվության արդյունքում ստացված արձագանքը հասցեագրվի այնպես, որ արտացոլի լավագույն փորձում առկա գործիքները և գործընթացները: Կատարվել է նաև անվճարունակության գործընթացում հիմնական շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացման հնարավորությունների ուսումնասիրություն (**Գլուխ** 12):

1.7 Սույն զեկույցի յուրաքանչյուր հատվածում հղում է կատարվում ժամանակակից, արդյունավետ սնանկության մասին օրենսդրության համապատասխան հիմնական սկզբունքներին: Այս կապակցությամբ առկա են չորս հրապարակումներ, որոնց հատուկ անդրադարձ է կատարվում այդ սկզբունքների բացահայտման նպատակով: Այդ հրապարակումներն են.

- Սնանկության օրենսդրության բարեփոխումների զարգացման գործում տարածաշրջանային համագործակցության խթանում, Ասիական զարգացման բանկ, 2008 (այսուհետ՝ ԱԶԲ օրենսդրության բարեփոխումների ուղեցույց).
- Սնանկության օրենքի մասին օրենսդրական ուղեցույց, մաս 1 և 2, (2005) և մաս 4 (2013), ՄԱԿ-ի Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով (այսուհետ՝ ՄԱԿ ՄԱԻՀ օրենսդրական ուղեցույց).
- Արդյունավետ սնանկության սկզբունքները և պարտատերերի/պարտապանների ռեժիմները, Համաշխարհային բանկ, 2015 (այսուհետ՝ Համաշխարհային բանկի սկզբունքներ), և
- Պարտատերերի իրավունքների սնանկության չափանիշներ՝ հիմնված Համաշխարհային բանկի արդյունավետ սնանկության սկզբունքների և պարտատերերի/պարտապանների ռեժիմների և ՄԱԿ ՄԱԻՀ Սնանկության օրենքի մասին օրենսդրական ուղեցույցի վրա, Արժույթի միջազգային հիմնադրամ, 2011 (այսուհետ՝ ԱՀՄ պարտատերերի իրավունքների սնանկության չափանիշներ):

1.8 Սույն զեկույցի գլուխների մեծ մասում նախ և առաջ բացահայտված են վերը նշված չորս աղբյուրների սկզբունքները, որոնք վերաբերելի են այդ գլխի առարկային: Յուրաքանչյուր գլուխ եզրափակվում է հիմնական համառոտ առաջարկություններով:

1.9 Ամփոփելով վերոնշյալը՝ հարկ ենք համարում նշել, որ սույն աշխատանքին մեծապես օժանդակել են նաև օրենսդրական բարեփոփոխումների և ռազմավարական աշխատանքների (փաստաթղթերի) մանրամասն ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են վերջին մի քանի տարիների ընթացքում և ամփոփվել են երեք փաստաթղթերում, որոնք ներկայացված են սույն զեկույցի Գլուխ 3-ում: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ նշված հարցերի քննարկման մասով մի փոքր այլ մոտեցում է ցուցաբերվել, ի տարբերություն այդ զեկույցներում առկա մոտեցումների: Մենք ընդունում ենք, որ Հայաստանի առջև ծառայած խնդիրները, որոնք այս ուսումնասիրության առարկան են կազմել, հատուկ չեն միայն Հայաստանին: Դրանք ծագել և լուծվել են աշխարհի տարբեր երկրների կողմից տարբեր ժամանակներում: Միջազգային լավագույն փորձի սկզբունքները և տարբեր իրավագործությունների փորձը նույն կամ նմանատիպ հարցերի լուծման վերաբերյալ օգտակար են սնանկության ոլորտում Հայաստանի առջև ծառայած խնդիրների լուծման տարբերակներ գտնելու համար: Ակնհայտ է, որ այդ լուծումները պետք է գնահատվեն՝ հաշվի առնելով Հայաստանին հատուկ հանգամանքներն ու սովորույթները, բայց ամեն դեպքում միջազգային պրակտիկան և լուծումները արդյունավետորեն կարող են ուղղորդել բարեփոխումների գործընթացը:

2. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Հիմնական սկզբունքներ

Արդյունավետ սնանկության ռեժիմը պետք է.

- ա) շուկայում ապահովի որոշակիություն՝ խթանելու տնտեսական զարգացումն ու կայունությունը².
- բ) առավելագույնի հասցնի ընկերության ակտիվների արժեքը և պարտատերերի պահանջների բավարարումը³.
- գ) ապահովի թափանցիկ ընթացակարգեր, որոնք բովանդակում և հետևողականորեն կիրառում են ռիսկերի բաշխման հստակ կանոններ⁴.
- դ) նպաստի սնանկության ժամանակին, արդյունավետ և անկողմնակալ լուծմանը⁵.
- ե) ինտեգրվի երկրի լայն իրավական և առևտրային համակարգերին⁶:

Ներածություն

2.1 Վարկերի վրա հիմնված շուկայական տնտեսությունը բոլոր դեպքերում ենթադրում է ռիսկերի, ներառյալ՝ ֆինանսական ռիսկերի ստանձնում: Երբեմն այս ռիսկը կարող է դրսևորվել ֆինանսական դժվարությունների ձևով: Նշվածը երբեմն կարող է առաջանալ վատ կառավարման, երբեմն էլ խարդախության հետևանքով, սակայն ավելի հաճախ մրցակցային շուկայի կամ սպառողների վարքագծում կառուցվածքային փոփոխությունների (օրինակ՝ առցանց գնումներ) կամ անսպասելի ազդեցությունների արդյունքում, ինչպիսին համաճարակն է: Նման բազմաթիվ դեպքերում ֆինանսական դժվարությունները կարելի է բացատրել շուկայական տնտեսության մեջ առաջացած բնական անկումով:

2.2 Սնանկության մասին օրենքները պետք է անդրադառնան նման ֆինանսական դժվարություններին, և դրանց արդյունավետությունը, ընդհանուր առմամբ, առավելություն է տնտեսության համար, և, մասնավորապես. սնանկության առանձին գործով շահագրգռված անձանց համար: Դժվարությունների մեջ գտնվող բիզնեսի առողջացումը բարենպաստ է վերջինիս աշխատակիցների, ինչպես նաև այն պարտատերերի համար, ովքեր զբաղվում են առևտրային բիզնեսով և ցանկանում են դրանք պահպանել նաև հետագայում:

² ՄԱԿ ՄԱԻՀ-ի Սնանկության մասին ուղեցույց, մաս 1 և 2, (2005), էջ 14:

³ Նոյն տեղում, էջ 10:

⁴ Համաշխարհային բանկ, Արդյունավետ սնանկության սկզբունքներ և պարտատերերի/պարտապանների ռեժիմներ, 2015, էջ 20, ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 14:

⁵ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 14:

⁶ Նոյն տեղում, էջ 10:

Երբեմն ամբողջ գյուղեր կամ քաղաքներ կախված են այնտեղ գործող առանձին բիզնեսների շարունակական գործունեությունից:

2.3 Ինչպես նշվել է Առևտրի խորհրդի նախագահի կողմից 1883 թվականին Բրիտանիայի վաղ շրջանի սնանկության օրենսդրության վերաբերյալ տրված բնորոշման մեջ, սնանկության մասին օրենքները մշտապես ձգտել են հավասարակշռել երկու նպատակ.

«Սնանկության մասին յուրաքանչյուր լավ օրենք պետք է դիտարկի երկու գլխավոր, և միևնույն ժամանակ, տարբեր նպատակներ: Առաջին, սնանկ ճանաչված անձին պարկանող գույքի բարեխիղճ կառավարում ակտիվների արագ և արդար բաշխման համար այն պարտավորելի միջև, ում սեփականությունը դրանք հանդիսացել են: Երկրորդ, հիմք ընդունելով այն գաղափարը, որ կանխարգելումն ավելի լավ է, քան բուժումը՝ առևտրային բարեվարքության ընդհանուր մակարդակը բարելավելու և ձախողումների քանակը նվազեցնելու համար գործողությունների իրականացում: Այլ կերպ ասած, Խորհրդարանը պետք է հնարավորինս ջանքեր գործադրեր առողջացումները պաշտպանելու և սնանկության դեպքերը նվազեցնելու համար»:

2.4 Այսինքն, պետք է ուսցիոնալ լուծում գտնել արդար և արդյունավետ լուծարման գործընթացի միջև, երբ ընկերություններն անդառնալիորեն ձախողվել են, բայց միևնույն ժամանակ ապահովել կորպորատիվ առողջացման այնպիսի շրջանակ, որը կնվազեցնի ձախողված ընկերությունների թիվը: Այս երկու նպատակները այսօր մնում են իրական, և տարիների ընթացքում մշակվել են բազմաթիվ գործիքներ և ձեռնարկվել փորձեր՝ ապահովելու, որ սնանկության մասին օրենքները դա իրականացնեն և՛ արդյունավետ, և՛ շահավետ կերպով՝ հավասարակշռության հասնելու նպատակով:

2.5 Բավականաչափ շատ միջազգային ուղեցույցներ են առկա սնանկության մասին օրենքի մշակման լավագույն փորձի վերաբերյալ: Մասնավորապես, առկա են սույն զեկույցի առաջին գլխում նշված երեք հրապարակումները, որոնք հրապարակվել են ՄԱԿ-ի Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովի, Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից: Ստորև ներկայացվում է յուրաքանչյուր հրապարակման մեջ քննարկված հիմնական սկզբունքների համառոտ շարադրանքը, որին հետևում է այդ կարևոր տեքստերից բխող ուղենիշային սկզբունքների առավել ընդհանուր նկարագրությունը, որոնց պետք է անդրադարձ կատարվի:

ՄԱԿ-ի Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովի Սնանկության օրենքի մասին օրենսդրական ուղեցույց

2.6 Օրենսդրական ուղեցույցի նպատակն է օժանդակել պարտապանների ֆինանսական դժվարությունները հաղթահարելու համար արդյունավետ և շահավետ իրավական դաշտի ստեղծմանը: Այն նախատեսված է կիրառել ազգային իշխանությունների և օրենսդիր մարմինների կողմից՝ նոր օրենքներ և կանոններ մշակելիս կամ գործող օրենքների և կանոնների համապատասխանությունը (բավարարությունը) գնահատելիս:

2.7 Նշվում է, որ իրավական համակարգերը պետք է ապահովեն համարժեք իրավական մեխանիզմներ այն իրավիճակների կարգավորման համար, երբ պարտապանը ի վիճակի չէ մարելու պարտքերը և այլ պարտավորությունները, որոնց վճարման ժամկետը լրացել է:

2.8 Այս արդյունքին հասնելու համար անհրաժեշտ է պաշտպանել մի շարք շահեր, ներառյալ՝ այն անձանց շահերը, որոնց առնչվելու է դատավարությունը, պարտատերերի, երաշխավորների, ինչպես նաև իրավաբանական, առևտրային և հասարակական կազմակերպությունների շահերը, որոնք էական նշանակություն ունեն սնանկության մասին օրենքի գործողության (կիրառման) համար:

Համաշխարհային բանկի սկզբունքները

2.9 Այս հրապարակումը մշակվել է այն առկա չափանիշները հստակեցնելու համար, որոնք կիրառվում են սնանկության մասին օրենքների արդյունավետությունը գնահատելիս: Այն բացահայտում է մի շարք նպատակներ և խնդիրներ, որոնք էական են արդյունավետ սնանկության համակարգի համար, ներառյալ.

ա) պատշաճ ինտեգրում տվյալ երկրի ավելի լայն իրավական և առևտրային համակարգերի.

բ) ապահովել, որ ընկերության ակտիվների արժեքը առավելագույնի հասցվի, որպեսզի պարտատերերի պահանջների բավարարումը ևս առավելագույնի հասնի.

գ) ապահովել լուծարման արդյունավետ գործընթաց ոչ կենսունակ բիզնեսի համար, ինչպես նաև կենսունակ այն բիզնեսի համար, երբ լուծարումը կրերի պարտատերերի համար ավելի մեծ շահույթի.

դ) կայուն հավասարակշռություն լուծարման և կորպորատիվ առողջացման միջև.

ե) ապահովել արդարացի վերաբերմունք նույն կարգավիճակում գտնվող պարտատերերի նկատմամբ.

զ) ապահովել սնանկության ժամանակին, արդյունավետ և անկողմնակալ լուծումը.

է) կանխել սնանկության համակարգի ոչ պատշաճ կիրառումը,

ը) առկա պարտատերերի իրավունքների ճանաչումը՝ առաջնահերթություններին համապատասխան, և

թ) անդրսահմանային սնանկության իրավական մեխանիզմների ստեղծում:

ԱՄՀ պարտավորների իրավունքների սնանկության չափանիշներ

2.10 ԱՄՀ ավելի շատ է ներգրավվում իր անդամների շրջանում կանոնակարգված և արդյունավետ սնանկության համակարգերի խթանմանը: Սնանկության համակարգի բարեփոխումը կարող է հատկապես կարևոր լինել անցումային փուլում գտնվող տնտեսությունների համար, որտեղ այն կարող է էական դեր խաղալ այնպիսի խնդիրների լուծման հարցում, ինչպիսիք են անվճարունակ պետական ձեռնարկությունները:

2.11 ԱՄՀ զեկույցում ընդգծվում են հետևյալ հիմնական կետերը.

ա) առանց կանխատեսելի ձևով կիրառվող արդյունավետ ընթացակարգերի պարտատերերը կարող են ի վիճակի չլինել ստանալու իրենց պահանջների բավարարումը, ինչը հետագայում բացասաբար կանդրադառնա վարկերի հասանելիության վրա.

բ) առանց կանոնակարգված ընթացակարգերի, պարտապանների (և նրանց աշխատողների) իրավունքները կարող են պատշաճ չպաշտպանվել, և տարբեր պարտատերեր հավասար վերաբերմունքի կարող են չարժանանալ:

Թափանցիկություն և կանխատեսելիություն

2.12 Սնանկության մասին արդյունավետ օրենքներն ու ինստիտուտները կարող են օգնել պետություններին իրենց տեղական ֆինանսական համակարգերը միջազգային ֆինանսական համակարգ ինտեգրելու հարցում:⁷ Համաշխարհային շուկա մուտքը հեշտացնելու տեսանկյունից կարևոր տարրեր են՝ ողջամիտ աստիճանի վստահությամբ սնանկության վարույթի արդյունքները կանխատեսել հնարավորությունը և այդ համատեքստում տարբեր շահագրգիռ անձանց վարքագիծը⁸: Արդյունավետ սնանկության ռեժիմի հիմնական առավելություններից մեկը մասնակիցներին որոշակիության տրամադրումն է,

⁷ Նույն տեղում, էջ 10:

⁸ ԱԶԲ, Սնանկության օրենսդրության բարեփոխումների զարգացման գործում տարածաշրջանային համագործակցության խթանում, 2008, էջ 3:

որն իր հերթին նպաստում է տնտեսական կայունությանը, ներդրումներին և զարգացմանը:⁹

2.13 Սնանկության արդյունավետ ռեժիմը պետք է թույլ տա կողմերին կանխատեսել, թե գործարքի մասնակցի կողմից իր վճարման պարտավորությունը չկատարելը ինչ ազդեցություն կարող է ունենալ իր իրավաչափ իրավունքների վրա:¹⁰ Ռեժիմի թափանցիկությունն ու կանխատեսելիությունը ուղղակիորեն ազդում են մասնակիցների՝ սնանկության վարույթի իրականացման ընթացքն ընկալելու ունակության վրա:¹¹ Հետևաբար, արդյունավետ ռեժիմը թույլ կտա պարտատերերին գնահատել իրենց ռիսկերը՝ սկզբում վարկերի և ներդրումների հարցը դիտարկելիս, և թե պարտապանների, թե պարտատերի համար հուսալիորեն որոշել ու գնահատել իրենց տարբերակները ֆինանսական դժվարությունների դեպքում:

2.14 Այսպիսով, հստակ և արդյունավետ ռեժիմի մշակումը կարող է նպաստել որոշակի և կանխատեսելի առևտրային միջավայրի ստեղծմանը, որն, իր հերթին, կընդլայնի վարկեր ձեռք բերելու հնարավորությունները¹², քանի որ պարտատերերը վստահ են, որ նախքան սնանկությունը պարտապանի և նրա ակտիվների նկատմամբ ունեցած իրավունքները կճանաչվեն և կիրառելի կլինեն սնանկության ցանկացած գործընթաց հարուցելուց հետո:¹³

2.15 Ընդհակառակը, սնանկության ռեժիմների ազդեցության կամ կիրառման թույլ կողմերը կամ հնարավոր անկանխատեսելիությունը կարող են խոչընդոտ հանդիսանալ վարկավորման և վարկի տրամադրման համար ընդհանուր առմամբ, ուստի պետք է խուսափել դրանցից:¹⁴ Հետևաբար, էական առավելություն կա ապահովելու, որ սնանկության ռեժիմի պայմաններում իրավունքներն ու պարտականությունները պարզ լինեն, և կիրառվեն հետևողականորեն, թափանցիկ և արդյունավետ:¹⁵

Արդյունավետություն և անկողմնակալություն

2.16 Սնանկության արդյունավետ ռեժիմը պետք է ձգտի առավելագույնի հասցնել պարտատերերի, աշխատողների, բաժնետերերի և պարտապանի

⁹ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 10, Արժույթի միջազգային հիմնադրամ, Պարտատերերի իրավունքների սնանկության չափանիշը՝ հիմնված Համաշխարհային բանկի արդյունավետ սնանկության սկզբունքները և պարտատերերի/պարտապանների ռեժիմները և ՄԱԿ ՄԱԻՀ Սնանկության մասին օրենսդրության մասին ուղեցույց, 2011:

¹⁰ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 15:

¹¹ Նոյն տեղում, էջ 13:

¹² ԱԶԲ, վերը նշված՝ 7, էջ 1-2:

¹³ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 13:

¹⁴ ԱԶԲ, վերը նշված՝ 7, էջ 1:

¹⁵ Համաշխարհային բանկ, վերը նշված՝ 3, էջ 11:

սնանկությունից տուժած բոլոր այլ անձանց համար հասանելի ակտիվների արժեքը:¹⁶ Նշվածին հնարավոր է հասնել ոչ միայն ակտիվների իրացմանն և առողջացմանն առնչվող հատուկ լիազորությունների միջոցով, այլ նաև սնանկության գործընթացի գործողության և կառավարման թափանցիկության և արդյունավետության միջոցով:

2.17 Արդյունավետությանը նպաստում են օրենքները, որոնք հստակ և կայուն են իրենց գործողության և կիրառման մեջ, ներառյալ այն մեխանիզմները, որոնք թույլ են տալիս՝

ա) ապահովել նախնական հասանելիություն սնանկության ընթացակարգերին՝ հստակ և օբյեկտիվ չափանիշների հիման վրա, որպեսզի նվազագույնի հասցվի ձգձգումների ռիսկը և հարուցման հետ կապված վեճերը.

բ) ապահովել պարտապանի ակտիվների ճանաչման, հավաքագրման, պահպանման և վերականգնման հարմար միջոցներ,

գ) ապահովել պարտատերերի և շահագրգիռ այլ անձանց մասնակցությունը սնանկության գործընթացին նվազագույն ծախսերով և ձգձգումներով.

դ) ապահովել վարույթների վերահսկման և կառավարման պատշաճ համակարգ.

ե) ապահովել գործընթացում ներգրավված կողմերի համար կանխատեսելի և կայուն արդյունքներ:¹⁷

2.18 Հստակ չափանիշների հիման վրա գործող արդյունավետ ռեժիմը, հավանաբար, կնպաստի պարտատերերի պահանջների առավել լավ բավարարմանը՝ նվազագույնի հասցնելով վեճերի ռիսկը, նպաստելով սնանկ ընկերությունների ակտիվների արդյունավետ լուծարմանը և ստեղծելով հնարավորություններ կենսունակ բիզնեսի ժամանակին վերականգնման համար:¹⁸ Օրենքի անարդյունավետ կամ անկանխատեսելի կիրառումը խարխլում է ոչ միայն սնանկության ռեժիմի մասնակիցների վստահությունը, այլ նաև վարկ տրամադրելու և այլ ներդրումային որոշումներ կայացնելու նրանց պատրաստակամությունը:

Ինքեզրում

2.19 Սնանկության ռեժիմը սերտորեն փոխկապակցված է երկրի ավելի լայն իրավական և առևտրային համակարգերի հետ:¹⁹ Սնանկության ռեժիմը կախված

¹⁶ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 10, Ասիական զարգացման բանկ, վերը նշված՝ 7, էջ 2:

¹⁷ Նույն տեղում, էջ 12:

¹⁸ Նույն տեղում, էջ 10:

¹⁹ Համաշխարհային բանկ, վերը նշված՝ 3, էջ 8-10:

է իր հիմքում ընկած բազմաթիվ մեխանիզմների հիման վրա գործող ավելի լայն համակարգերից, ներառյալ.

ա) աշխատանքային իրավունք.

բ) կորպորատիվ կառավարում և իրավագործության սահմաններում գտնվող ձեռնարկությունների գործունեություն.

գ) մեխանիզմներ, որոնք հեշտացնում են պարտապանի ակտիվներով ապահովումը (գրավադրումը), ներառյալ՝ այդպիսի ապահովման վերաբերյալ գրանցման և ծանուցման համակարգերը:

2.20 Հետևաբար, լավ մշակված սնանկության մասին օրենքը պետք է գործի և համապատասխանի ավելի լայն առևտրային համակարգերին, որպեսզի նպաստի արդյունքների որոշակիությանը, երբ ձեռնարկությունը ընթացիկ բիզնես ռեժիմից անցնում է սնանկության վարույթին:

2.21 Բացի այդ, հաշվի առնելով այն շահերի շրջանակը, որոնք պետք է հաշվի առնվեն ֆինանսական ճգնաժամի կամ պարտապանի սնանկության խնդիրների լուծման համար մշակված իրավական մեխանիզմներով²⁰, պետք է հավասարակշռություն հաստատվի ոչ միայն գործարար միջավայրում գործող տարբեր շահերի միջև, այլ նաև համապատասխան իրավագործության ավելի լայն մշակութային, տնտեսական, իրավական և սոցիալական միջավայրում:²¹ Այս նկատառումները կարող են առաջանալ նաև տարածաշրջանային մակարդակում:²² Չնայած հաջող ռեժիմի հիմքում ընկած որոշ հիմնարար սկզբունքներ կարող են ճանաչվել՝ անկախ նրանից, թե ինչ մոտեցում ի վերջո կընդունվի, սնանկության մասին օրենքը պետք է համապատասխանի այն պետության իրավական և սոցիալական արժեքներին, որտեղ այն պետք է գործի:²³

2.22 Այս սկզբունքներից յուրաքանչյուրը սերտորեն փոխկապակցված են և միասին ընկած են այն մոտեցման հիմքում, որը պետք է ձեռնարկվի սնանկության ռեժիմի մեջ ներառվող դրույթները քննարկելիս:

²⁰ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 9:

²¹ Համաշխարհային բանկ, վերը նշված՝ 3, էջ 2:

²² ԱԶԲ, վերը նշված՝ 7, էջ 3:

²³ Համաշխարհային բանկ, վերը նշված՝ 3, էջ 10:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Առկա բարեփոխումներին ուղղված առաջարկություններ

3.1 Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը ավանդաբար դիտարկվում է ռոմանոգերմանական (մայրցամաքային) իրավական ընտանիքի շրջանակներում, որում, սակայն, զգալի տեղ է հատկացվում նաև բարձրագույն դատական ատյանի նախադեպային որոշումներին: Մասնավոր իրավունքը կարգավորող հիմնական ակտը Հայաստանում 1998թ. ընդունված քաղաքացիական օրենսգիրքն է, որի համար հիմք է հանդիսացել ԱՊՀ պետությունների համար մշակված մոդելային քաղաքացիական օրենսգիրքը:

3.2 ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ի տարբերություն ՀՍՀ քաղաքացիական օրենսգրքի, որը Հայաստանի անկախացումից հետո շարունակել է գործել մինչև 1999թ., որոշակի անդրադարձ է կատարում նաև սնանկությանը՝ դրա հետ կապված հարաբերությունների կարգավորումը վերապահելով առանձին օրենքներին:

3.3 Նախքան սնանկության հարաբերությունները կարգավորող գործող օրենսդրությանը անդրադառնալը՝ պետք է նշել, որ սնանկության ոլորտում առաջինը եղել է 1995թ. ընդունված «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» օրենքը, որը շուտով փոխարինվել է 1996թ. ընդունված «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների եվ անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) եվ ֆինանսական առողջացման մասին» օրենքով:

3.4 Սնանկության ոլորտում հաջորդ փոփոխությունը եղել է 2003թ., երբ ընդունվել է «Անվճարունակության (սնանկության) մասին» օրենքը: Այն, ի տարբերություն նախորդ երկու օրենքների, ստացել էր ավելի ծավալուն տեսք, որը պայմանավորված էր մի շարք նոր, այդ թվում՝ կեղծ և կանխամտածված սնանկության, սնանկության գործով կառավարչի գործունեության հետևանքով պատճառված վնասների հատուցման ինստիտուտների, պարզեցված ընթացակարգերի ներդրմամբ:

3.5 «Անվճարունակության (սնանկության մասին» օրենքը 2006թ. փոխարինվել է «Սնանկության մասին» օրենքով, որը գործում է առ այսօր և այս ընթացքում ենթարկվել է 25 փոփոխությունների: Թե օրենքի, թե դրանում կատարված փոփոխությունների մշակման ընթացքում որոշակիորեն ուսումնասիրվել են նաև օտարերկրյա փորձը և միջազգային փաստաթղթերը, օրինակ՝ ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) սնանկության ոլորտի վերաբերյալ ուղեցույցները: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ գործող

օրենքը չի հիմնվում որևէ կոնկրետ երկրի փորձի վրա և իր մեջ ներառում է տարբեր երկրների օրենսդրություններում կիրառվող ինստիտուտներ:

3.6 Սնանկության մասին գործող օրենսդրության զարգացման շրջանակներում հատկապես հիշատակման է արժանի 2019թ. «Սնանկության մասին» օրենքում կատարված ծավալուն փոփոխությունները և դրանց հիման վրա Արդարադատության նախարարի կողմից 2020թ. ընդունված շուրջ մեկ տասնյակ նորմատիվ իրավական ակտերը, որոնք միտված են սնանկության ինստիտուտը թափանցիկ, հաշվետու և արդյունավետ դարձնելուն: Ընդ որում, այս փոփոխությունների համար հիմք են հանդիսացել նաև Հայաստանի սնանկության ոլորտի ՎՋԵԲ հաշվետվությունը, Միացյալ Թագավորության կառավարության Լավ Կառավարման հիմնադրամի ֆինանսավորմամբ 2019թ. պատրաստված «Սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվությունը» և «Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր» փաստաթղթերը, ինչպես նաև Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) մեթոդոլոգիան և Հայաստանի վերաբերյալ տարբեր տարիների զեկույցները:

3.7 Ասվածի հետ մեկտեղ սնանկության ոլորտի շարունակական բարեփոխման հրամայականը շարունակում է մնալ Հայաստանի առաջնահերթությունների շարքում, որի մասին է վկայում Կառավարության 10.10.2019թ. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը եվ դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշմամբ, ի թիվս այլնի, Սնանկության մասին օրենսգրքի նախագծի մշակման միջոցառման նախատեսումը:

3.8 Միաժամանակ, հարկ է նկատել, որ սնանկության ոլորտում ֆինանսական կազմակերպությունների սնանկության համար գործում է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքը, որը, բարեբախտաբար, ներկայումս գործնական կիրառություն չունի:

3.9 Սնանկության վարույթը, ի տարբերություն այլ դատական վարույթների, չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով, և ներառում է այն բոլոր հարցերի լուծմանն ուղղված վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում, կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին: Ընդ որում, սնանկության վարույթը առաջին հերթին ուղղված է պարտապանի ֆինանսական առողջացմանը, իսկ դրա անհնարինության դեպքում պարտապանի լուծարման

վարույթի շրջանակներում նրա գույքի իրացման արդյունքով պարտատերերի պահանջների բավարարման:

3.10 Վերոգրյալով պայմանավորված «Սնանկության մասին» օրենքը նախատեսում է ինքնուրույն, իրար հաջորդող կամ զուգահեռ ընթացող մի շարք ընթացակարգեր, որոնցից են.

- (1) Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության վարույթը, որը հարուցվում է պարտատիրոջ կամ պարտապանի դիմումի հիման վրա, քննվում է դատական նիստում կամ առանց դրա և ավարտվում է սնանկ ճանաչելու մասին կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճռով:
- (2) Սնանկության վտանգի վարույթը, որը հաշվեկոշային անվճարունակությունը կանխելու և ֆինանսապես առողջանալու նպատակով հարուցվում է պարտապանի դիմումի հիման վրա, քննվում է դատական նիստում և ավարտվում է պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու կամ դիմումը մերժելու մասին վճռով:
- (3) Պահանջների գրանցման վարույթը, որի շրջանակներում պարտապանին սնանկ ճանաչելու մասին ի գիտություն հասարակության տրված հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում պարտատերերը, այդ թվում՝ ապահովված պարտատերերը, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք դուրս են եկել սնանկության վարույթից, դատարան են ներկայացնում իրենց պահանջները, որի հիման վրա դատարանը կայացնում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշում՝ դրանում ներառելով պարտատիրոջը, նրա պահանջի չափը և բավարարման հերթը:
- (4) Սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու վարույթը, որը հարուցվում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին ի գիտություն հասարակության տրված հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում ապահովված պարտատիրոջ կողմից դատարան ներկայացված դիմումի հիման վրա, քննվում է դատական նիստում կամ առանց դրա և ավարտվում է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու կամ դիմումը մերժելու մասին որոշմամբ:
- (5) Պարտապանի ֆինանսական առողջացման վարույթը, որի կապակցությամբ կարելի է հիշատակել հետևյալ հանգամանքները.
 - ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանված են օրենքով և այն ներկայացնելու իրավունք ունեն պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, ինչպես նաև

պարտապանի կանոնադրական (բաժնետեղապատ, փայտափայտ) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք.

- Ֆինանսական առողջացման ծրագիրը ներկայացվում է մինչև պարտատերերի առաջին ժողովը, իսկ դատարանի որոշմամբ այս ժամկետը ևս 30 օրով երկարաձգվելու դեպքում՝ նաև այդ ժամկետում.
 - նախքան դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը՝ այն պետք է ընդունվի պարտատերերի ժողովի կողմից.
 - Ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատվում է 36 ամիս ժամկետով, որը կարող է երկարաձգվել ևս 36 ամսով.
 - Ֆինանսական առողջացման ծրագրի ավարտից հետո սնանկության գործով կառավարիչը հաշվետվություն է ներկայացնում դատարան, որի հիման վրա դատարանը կայացնում է վճիռ հաշվետվությունը հաստատելու և սնանկության վարույթը ավարտելու մասին, եթե բոլոր պահանջները բավարարվել են, կամ որոշումը հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին:
- (6) Պարտապանի լուծարման վարույթը, որը սկսվում է որևէ պատճառով ֆինանսական առողջացման վարույթ չսկսվելու կամ այն հաջողությամբ չավարտվելու դեպքում, ենթադրում է պարտապանի ակտիվների հավաքագրում և վաճառք, որի արդյունքում վճիռ է կայացվում սնանկության գործը ավարտելու մասին, եթե բոլոր պահանջները բավարարվել են, կամ պարտապանի լուծարման հետևանքով սնանկության գործը ավարտելու մասին:
- (7) Ֆիզիկական անձի սնանկության վարույթը, որի շրջանակներում կիրառելի են վերոշարադրյալ ընթացակարգերը, եթե օրենքով բացառություն սահմանված չէ:
- (8) Պարզեցված ընթացակարգերը, որոնք իրականացվում են կամավոր լուծարման վիճակում գտնվող իրավաբանական անձի, բացակայող պարտապանի և սնանկության գործով կառավարչի գործը գույքի անբավարարության հիմքով վաղաժամկետ ավարտելու միջնորդության դեպքում:

- ՀՀ դատական համակարգը

3.11 Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ, որը կազմված է առաջին ատյանի, վերաքննիչ դատարաններից և Վճռաբեկ դատարանից: Միաժամանակ, պետք է հիշատակել նաև Սահմանադրական դատարանը, որը դուրս է մյուս դատարանների համակարգից և ունի սահմանադրական արդարադատություն իրականացնելու բացառիկ առաքելություն:

3.12 Առաջին ատյանի դատարաններն իրենց հերթին բաժանվում են ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների, որոնք ներկայումս երկուսն

են՝ վարչական և սնանկության դատարանները: Վերաքննիչ դատարանները տարանջատված են ըստ դատավարությունների ճյուղերի և դրան համապատասխան գործում են վերաքննիչ քաղաքացիական, վարչական և քրեական դատարանները:

3.13 Վճռաբեկ դատարանը Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանն է, որն ունի նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը ապահովելու և իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու կարևորագույն գործառույթներ: Այս առաքելությունը Վճռաբեկ դատարանը իրականացնում է քաղաքացիական և վարչական պալատի և քրեական պալատի միջոցով:

3.14 Վերոգրյալի համատեքստում պետք է նշել, որ մինչև 2019թ. սնանկության գործերի քննությունը ապահովվում էր ընդհանուր իրավասության դատարանի մասնագիտացված դատավորների կողմից, իսկ սնանկության դատարանի ստեղծումից հետո դրանք ամբողջությամբ կենտրոնացվեց սնանկության դատարանում:

3.15 Սնանկության դատարանի կողմից կայացված դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան, իսկ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ:

3.16 Միաժամանակ, հարկ է նկատել, որ Կառավարության 10.10.2019թ. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը եվ դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1441-Լ որոշմամբ քննարկվում է վերաքննիչ սնանկության դատարանի ստեղծման անհրաժեշտությունը:

- Սնանկության մասին օրենսդրության և այլ օրենսդրության հարաբերակցությունը

3.17 Սնանկության մասին օրենսդրությունը իրավական նորմերի բարդ համակարգ է, որը պայմանավորված է այս ոլորտում ծագող հարաբերությունների համալիր բնույթով: Այդ պատճառով սնանկության հետ կապված հարաբերությունները կարգավորող աղբյուրների շարքին են դասվում ինչպես «Սնանկության մասին» օրենքը, այնպես էլ մի շարք այլ նորմատիվ իրավական ակտեր:

3.18 Դրանցից առաջին հերթին հիշատակման է արժանի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որի միջոցով կարգավորվում են սնանկության վարույթում առաջացող դատավարական հարաբերություններն այն դեպքերում, երբ դրանք կարգավորված չեն «Սնանկության մասին» օրենքով:

3.19 Հաջորդ հիմնական աղբյուրը ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն է, որի միջոցով իրականացվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների, այդ թվում՝ իրավաբանական անձանց իրավական վիճակի, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգի, պայմանագրային և այլ պարտավորությունների կարգավորումը, ինչպես նաև այլ գույքային, այդ թվում՝ գրավի, ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունների, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունների կարգավորումը:

3.20 Սնանկության հետ կապված հարաբերություններ կարգավորող դրույթներ են առկա նաև ՀՀ դատական օրենսգրքում, ՀՀ քրեական օրենսգրքում, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքում, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում և բազմաթիվ այլ նորմատիվ իրավական ակտերում:

Կենտրոնական Ասիայի երկրների սնանկության մասին օրենսդրությունների համեմատական վերլուծություն

3.21 Ուզբեկստանում սնանկության հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական ակտը 1994թ. ընդունված «Սնանկության մասին» օրենքն է, որը ներառում է 192 հոդված: Տաջիկստանում սնանկության մասին օրենսդրության հիմքը 2003թ. ընդունված «Սնանկության (անվճարունակության) մասին» օրենքն է, որը բաղկացած է 100 հոդվածից, իսկ Ղազախստանում այս դերը վերապահված է 128 հոդվածից կազմված 2014թ. ընդունված «Առողջացման և սնանկության մասին» օրենքին:

3.22 Վկայակոչված օրենքների և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ դրանց միջև առկա են բավականին շատ ընդհանրություններ: Միևնույն ժամանակ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի հետ դրանցից յուրաքանչյուրի ինստիտուցիոնալ առումով իրավահամեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ որոշ հարցերում այս երկրների օրենսդրությունները ունեն այնպիսի իրավակարգավորումներ, որոնք Հայաստանի սնանկության վարույթում բացակայում են:

3.23 Այսպես, Ուզբեկստանի օրենքում ուշադրության են արժանի հետևյալ կարգավորումները:

- Օրենքի 2-րդ գլուխը նվիրված է պարտապանի նախադատական առողջացմանը և սահմանում է այս ընթացակարգը նախաձեռնելու հիմքերը, կարգը, գործընթացի սուբյեկտներին և օբյեկտը, ինչպես նաև իրականացվող միջոցառումների շրջանակը,
- Արտաքին կառավարման սահմանման կառուցակարգը, որը ենթադրում է պարտապանի կառավարման մարմինների լիազորությունների դադարեցում և հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնելու նպատակով արտաքին կառավարչի նշանակում: Այս ինստիտուտի հետ կապված հարաբերությունները կարգավորված են օրենքի 6-րդ գլխում,
- պարտապանի ձեռնարկության (բիզնեսի) որպես մեկ գույքային համալիրի վաճառքի ինստիտուտը (հոդված 110),
- Օրենքի «Հաշտության համաձայնությունը» վերտառությամբ 8-րդ գլուխը նախատեսում է ոչ միայն հաշտության համաձայնություն կնքելու հնարավորությունը, այլև սահմանում է հաշտության համաձայնության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, սնանկության տարբեր ընթացակարգերում հաշտության համաձայնության առանձնահատկությունները, դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման պայմանները և հետևանքները, հաշտության համաձայնության հաստատման մերժման հիմքերը և հետևանքները, հաշտության համաձայնության անվավեր ճանաչումը, ինչպես նաև հաշտության համաձայնությունը խախտելու հետևանքները,
- Օրենքի 9-րդ գլխով նախատեսված առանձին կատեգորիայի իրավաբանական անձանց սնանկության առանձին ընթացակարգերը, որոնց շրջանակներում հատուկ շեշտադրման են ենթակա քաղաքաստեղծ և գյուղատնտեսական ձեռնարկությունների սնանկության առանձնահատկությունների նախատեսումը:

3.24 Տաջիկստանի «Սնանկության (անվճարունակության) մասին» օրենքի կարգավորումներից կարելի է հիշատակել հետևյալները.

- պարտապանի նախադատական առողջացման ինստիտուտը, որը կարգավորվում է օրենքի 2-րդ գլխի դրույթներով,
- Օրենքի «Արտաքին կառավարումը» վերտառությամբ 6-րդ գլուխը նախատեսում է պարտապանի արտաքին կառավարում սահմանելու հնարավորությունը և դրա իրացման հետ կապված մանրամասները,
- հաշտության համաձայնության հետ կապված օրենքի՝ որպես «Հաշտության համաձայնություն» (բարեկամական կարգավորում, հաշտարարություն) վերնագրված 8-րդ գլխի դրույթները, որոնք վերաբերում են հաշտության համաձայնության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին, դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման պայմաններին և հետևանքներին, հաշտության համաձայնության հաստատման մերժման հիմքերին և հետևանքներին, հաշտության համաձայնության խախտման

հետևանքներին, հաշտության համաձայնության անվավեր ճանաչման և լուծման հետ կապված հարցերին:

3.25 Ղազախստանի սնանկության մասին օրենսդրության տարբերվող կարգավորումների շարքին են դասվում.

- պարտապանի ձեռնարկության որպես մեկ գույքային համալիրի վաճառքի վերաբերյալ դրույթները (հոդված 99. 1)
- հաշտության համաձայնության հետ կապված իրավանորմերի ամբողջությունը, որոնք սահմանում են հաշտության համաձայնության բովանդակությանը ներկայացվող պահանջները և այն կնքելու պայմանները, պետական մարմնի կողմից հաշտության համաձայնության կնքման կարգը, դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման պայմանները և հետևանքները, հաշտության համաձայնության հաստատման մերժման հիմքերը, հաշտության համաձայնության լուծման կարգը, ինչպես նաև հաշտության համաձայնության կնքումից հետո նոր սնանկության վարույթ հարուցելու դեպքերը (գլուխ 6. 1),
- քաղաքաստեղծ ձեռնարկությունների սնանկության վարույթը, որը ներառում է այս վարույթի իրականացման կարգի և դրանց շրջանակում հաստատված պահանջները պետական բյուջեի հաշվին մարելու մասին դրույթներ (գլուխ 8),
- գյուղատնտեսական ձեռնարկությունների սնանկության վարույթը, որը կարգավորվում է օրենքի 9-րդ գլխով:

3.26 Ուզբեկստանի, Տաջիկստանի և Ղազախստանի սնանկության մասին օրենսդրությունները Հայաստանի սնանկության օրենսդրության համեմատ ունեցած ինստիտուցիոնալ առավելություններից բացի աչքի են ընկնում օրենսդրական տեխնիկայի առումով որոշակի հաջող լուծումներով: Ասվածի օրինակ է համապատասխան օրենքների սկզբում դրանցում կիրառվող հասկացությունների սահմանումը:

3.27 Մեկ այլ ուշագրավ լուծում է սնանկության կոնկրետ ընթացակարգի մասնակիցների շրջանակի և նրանց իրավունքների և պարտականությունների ամրագրումը: Այս և նմանատիպ այլ մանրամասն կարգավորումները վստահաբար առավել որոշակի և կանխատեսելի են դարձնում քննարկվող երկրների օրենսդրությունը և կարևոր են միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովման համատեքստում:

Ներկայումս որդեգրված քաղաքականության շրջանակներում իրականացվող գործողությունների և առաջարկների ներկայացում

3.28 Աշխատանքներն իրականացնելիս ուշադրություն են դարձվել նաև այն զգալի աշխատանքներին, որոնք վերջին տարիներին արդեն իրականացվել են

փորձագետների կողմից Հայաստանի սնանկության մասին օրենսդրության հնարավոր բարեփոխումները դիտարկելիս: Մասնավորապես, մանրամասն ուսումնասիրվել են հետևյալ երեք հրապարակումները (այսուհետ՝ բոլորը միասին՝ Հրապարակումներ).

- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի՝ սնանկության մասին օրենքի վերանայում, մշակված Դիէլէյ Փիփեր Միացյալ Թագավորության ՍՊԸ և Հովհաննիսյան և գործընկերներ ՍՊԸ կողմից (ՎՋԵԲ վերանայում).
- Սնանկության համակարգի գնահատման հաշվետվություն, ֆինանսավորված Միացյալ Թագավորության Լավ Կառավարման Հիմնադրամի կողմից (Գնահատման հաշվետվություն).
- Սնանկության համակարգի բարեփոխումների ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր, ֆինանսավորված Միացյալ Թագավորության Լավ Կառավարման Հիմնադրամի կողմից (Ճանապարհային քարտեզ-զեկույց):

3.29 Այս փաստաթղթերը շատ օգտակար են եղել հասկանալու սնանկության մասին Հայաստանի օրենսդրությանն առնչվող հնարավոր խնդիրները, և զեկույցներում ներկայացված տեսակետներն ու առաջարկությունները նմանապես ներկայացնում են հիմնական շահագրգիռ կողմերի հետ Հայաստանում կայացած խորհրդակցությունների արդյունքները:

3.40 Հաջորդող կետերում ներկայացվում են այս երեք զեկույցներում ներկայացված առանցքային դիտողությունների և առաջարկությունների համառոտ ամփոփումը, որոնք առնչվում են ուսումնասիրության առարկայի առանձին հարցերին:

Կորպորատիվ առողջացում

3.41 Հրապարակումներում նշվում է, որ արդյունավետ կորպորատիվ առողջացման գործընթացն էական է սնանկության արդյունավետ համակարգի համար: Ճանապարհային քարտեզ-զեկույցում նշվել է, որ այն դուրս է պարզապես լուծարումից և պարտքերի մարումից՝ ներառելով վերակազմակերպումն ու վերակազմավորումը:

Կառավարիչների վարքագիծը և կանոնակարգումները

Կառավարիչների որակավորումը

3.42 Հրապարակումները մատնանշել են պատշաճ որակավորման կամ կառավարիչների²⁴ մասնագիտական շարունակական զարգացման բացակայության մասին, որոնք հայտնի են նաև սնանկության կառավարիչների կազմակերպություններին և կառավարիչներին ևս:²⁵ Ներկայումս մասնագիտություն ձեռք բերելու համար ընդունելության քննությանը կարող է մասնակցել անձը, ով ունի ցանկացած մասնագիտությունից բարձրագույն կրթություն, և առնվազն վեց ամսվա աշխատանքային փորձ ինքնակարգավորվող կազմակերպություն կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ հաշվապահական կամ այլ տնտեսագիտական գործունեության ոլորտում: Նրանք, ովքեր հավաքում են 90 % կամ ավելի բարձր միավորներ, հրավիրում են հարցազրույցի: Սակայն մասնագիտությունը ձեռք բերելուց հետո դրա շարունակական մասնագիտական զարգացումը չի վերահսկվում և չի համապատասխան հայաստանյան խնդիրներին: Հետևաբար, ինքնակարգավորվող կազմակերպությունը չունի իրավասություն կամ իր անդամների գնահատման տվյալները՝ ապահովելու, որպեսզի պրակտիկայում վերջիններս քննեն իրենց որակավորմանը համապատասխան գործեր կամ բողոքները վերահսկելու միջոց:

3.43 Կոլեկտիվ լուծումը ենթադրում էր ընդունելության պահանջների համապատասխանեցում համապատասխան առարկայի դասավանդմանը: Առաջարկվել է նաև, որ Արդարադատության նախարարությունը վերանայի քննությունները և փոփոխի դրա անցկացման չափորոշիչները՝ ապահովելու համար մասնագիտություն ձեռք բերող անձանց պատշաճ ուսուցումը:²⁶ Ճանապարհային քարտեզ-զեկույցը նշում է, որ 2011 թվականի որոշմամբ նախատեսվում է բողոքարկման ընթացակարգ, սակայն բացակայում է շահերի բախման մեխանիզմը: Հարկ է ներառել նաև նման մեխանիզմներ:

3.44 Ճանապարհային քարտեզ-զեկույցն ընդլայնում է այս առաջարկությունը՝ առաջարկելով հետևյալը.

²⁴ Հայտնի են նաև որպես Սնանկության կառավարիչներ (IOH) և Սնանկության գործով կառավարիչներ (BA):

²⁵ Տես Գնահատման հաշվետվություն, էջ 45, Ճանապարհային քարտեզ զեկույց, էջ 13, ՎՋԵԲ զեկույց, էջ XX:

²⁶ ՀՀ ԱՆ-ն ունի համապատասխան իրավասություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի սնանկության գործով կառավարիչների որակավորման կարգի:

ա) մշակել համապարփակ ուղեցույցներ, ձեռնարկներ, գիտագործնական մեկնաբանություններ և այլ ուսումնական նյութեր՝ հաշվի անելով դատական պրակտիկան և ընթացակարգերը:

բ) փոփոխել որակավորման կարգը՝ պահանջելով, որ հավակնորդները անցնեն տարեկան նվազագույն քանակի դասընթացներ:

գ) վերանայել և փոփոխել ամենամյա վերապատրաստման ծրագրերը՝ դրանք կառավարիչներին հատուկ հարմարեցնելու համար, և ապահովել, որ յուրաքանչյուրն արտացոլի գործող օրենսդրությունը և համապատասխան դատական գործերի ուսումնասիրությունը: Վերապատրաստման ծրագրերը պետք է լինեն բազմակողմանի՝ ապահովելու մասնագիտացումները, մասնագիտական պատասխանատվությունը և էթիկայի կանոնները, ինչպես նաև գենդերային զգայունության կրթական մաս, որ համապատասխանում է պարտատեր կանանց կարիքներին:

դ) ներդնել էլեկտրոնային սնանկության հարթակը՝ ներառելով առաջարկվող նյութերը, միջազգային փորձագետների կողմից առցանց վերապատրաստման դասընթացների և սեմինարների անցկացման համար:

Կառավարիչների վարքագիծը և վարձատրությունը

3.45 Հրապարակումներով շոշափվող հիմնական թեման թափանցիկության և արդարության բացակայությունն էր՝ կառավարիչների նշանակումից մինչև նրանց վարձատրության հարցերը, և նրանց ընդհանուր վարքագծի վերաբերյալ հարցերը:

3.46 Հրապարակումներում նշվում է, որ սնանկության գործով կառավարիչներին ներկայումս տրվող վարձատրության մոդելը խթանում է, որպեսզի վերջիններս նախապատվությունը տան լուծարման գործընթացին ֆինանսական առողջացման փոխարեն:²⁷ Օրինակ, ՎՋԵԲ զեկույցում նշվել է, որ գործող օրենքով վարձատրությունը սահմանվում է լուծարման ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման չափի՝ 10%-ից մինչև 3% տոկոսադրույքով, որն էականորեն գերազանցում է ֆինանսական առողջացման դեպքում վարձատրության հնարավոր չափին:²⁸ Նույն կերպ, Ճանապարհային քարտեզ-զեկույցում նշվել է, որ պարտապանների 53.5%-ը կարծում է, որ կասկածելի ու ոչ թափանցիկ սնանկության համակարգը էական խնդիր է:²⁹ Կառավարիչները սահմանափակված են վարքագծի կանոնագրքով, որը սահմանում է վարքագծային չափանիշներ: Այնուամենայնիվ, Ճանապարհային քարտեզ-զեկույցում նշված է, որ գործնականում առկա են ռիսկեր այդ չափանիշների պահպանման առումով:³⁰

²⁷ Ճանապարհային քարտեզ-զեկույց, էջ 31, Գնահատման հաշվետվություն, էջ 45:

²⁸ ՎՋԵԲ զեկույց, էջ 12:

²⁹ Ճանապարհային քարտեզ-զեկույց, էջ 29:

³⁰ Ճանապարհային քարտեզ-զեկույց, էջ 29:

3.47 Ի պատասխան՝ Ճանապարհային քարտեզ-զեկույցում առաջարկվում է հետևյալը:

3.48 Ներկայումս սնանկության գործով կառավարիչները դատական գործերով նշանակվում են պատահականությամբ: Սա առաջ է բերում որոշ բարդություններ, երբ առանձին գործերով ներկայացվում են այնպիսի կառավարիչներ, որոնց հմտությունները չեն համապատասխանում այդ գործին: Հրապարակումներն առաջարկում են նվազեցնել դատական հայեցողությունը՝ առավել շատ լիազորություններ շնորհելով պարտատերերին գործընթացին մասնակցելու միջոցով և ներդնելով գործերի վարման ընթացակարգ՝ պատահական ընտրության հետևանքները չեզոքացնելու համար:

3.49 ՎՋԵԲ զեկույցը մի շարք առաջարկություններ է ներկայացրել վարձատրության արդյունավետ համակարգ ներդնելու առումով, որը կապվում է աշխատանքի բարձր ցուցանիշների հետ և հիմնական շեշտադրությունն արվում է վերակազմակերպման վրա՝ լուծարման փոխարեն, եթե պարտապանը կենսունակ է: Նշվածը ներառում է կառավարիչների վարձատրության դրույքաչափերի նվազեցում և բոնուսային համակարգի ներդնում, որը խրախուսում է սնանկության վարույթների ժամանակին իրականացումը:

3.50 Ճանապարհային քարտեզ-զեկույցը ընդլայնում է դրանք, բայց նշում նաև, որ օրենսդրությունը բավարար չէ: Փոխարենը, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն եղանակի վրա, որով իրագործվում են վարձատրության վերաբերյալ առաջարկները: Նախքան որևէ մոտեցում որդեգրելը, հարկ է հաշվի առնել երկրում մշակութային և պատմական միջավայրը: Նշվածի հաշվառմամբ Ճանապարհային քարտեզ-զեկույցն առաջարկում է բոլոր տեսակի գործերով բավականաչափ բարձր վճարներով առողջացման/համամասնակցության վրա հիմնված մեխանիզմ:

3.51 Հարկ է ներկայացնել և ներդնել ծախսերի հաշվետվողականության կառուցակարգեր: Նշվածը պետք է ներառի նաև ՎՋԵԲ զեկույցի առաջարկությունները, ինչպիսիք են՝ բոլոր վարչական ծախսերի համար հաշվի առնել պարտատերերի համաձայնությունը և ինքնակարգավորվող կազմակերպության հետ խորհրդակցելով՝ հրապարակել ուղեցույց, ծախսերի քաղաքականությունը և արտաքին աուդիտի կարգը:

3.52 Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը վերանայում է կառավարիչների վարքագծի կանոնադիրքը՝ միջազգային լավագույն փորձը արտացոլելու համար: Վերանայումները պետք է մասնավորապես վերաբերեն կառավարիչների օբյեկտիվության և անկախության ամրապնդանը, պրակտիկայում գործող կառավարիչների կոմպետենտության չափանիշներին և

ներառեն շահերի բախման և գենդերային կողմնապահության ուղեցույցներ: Անհրաժեշտ է նաև մշակել վարքագծի կանոնագրքի վերաբերյալ ուսուցողական ուղեցույցներ:

Կանոնակարգումներ

3.53 Հրապարակումներում բարձրացված մեկ այլ ընդհանուր եզրահանգումն այն էր, որ սնանկության համակարգում մասնակիցների կարգավիճակի ու պարտականությունների վերաբերյալ առկա է ցածր ընկալում: Նշվածը բարդանում է այն փաստի ուժով, որ համապատասխան մարմինները սահմանափակ լիազորություններ և իրավասություններ ունեն՝ չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար:

3.54 Առաջարկությունները ներառում էին.

ա) վերանայել վերահսկող մարմինների վերահսկողական լիազորությունները՝ օրենսդրությունը և կանոնակարգումները հստակեցնելու և ամրապնդելու նպատակով.

բ) սահմանել բողոքարկումների նոր ընթացակարգ և ապահովել, որ Արդարադատության նախարարությունը իրավասություն ունենա այն իրականացնելու և վերահսկելու: Այս առաջարկությունը նպատակ ունի լուծելու առկա իրավիճակի հետ կապված մարտահրավերները, երբ Արդարադատության նախարարություն ստացվող բողոքները, որոնք այնուհետև փոխանցվում էին ինքնակարգավորվող կազմակերպություն, ընթացք չէին ստանում³¹.

գ) մեծացնել մասնագիտական խորհրդատուների ներգրավվածությունը և դիտարկել մասնագիտացված տրնկերություններին որպես սնանկության կառավարիչ հանդես գալու հնարավորության ընձեռումը.

դ) ներդնել սնանկության համակարգի իրավական մշտադիտարկում, որը հնարավորություն կտա Արդարադատության նախարարությանը ներգրավված և բավարար չափով տեղեկացված լինել սնանկության համակարգի ցանկացած խնդրի կամ մարտահրավերի մասին:

Դատավորների կարողությունները

3.55 Ճանապարհային քարտեզ-զեկույցը նշել է, որ չնայած 2019 թվականի հունվարին ստեղծված սնանկության նոր դատարանի առկայությանը, սնանկության համակարգի դատական բաղադրիչի հետ կապված դեռևս առկա են էական խնդիրներ: Բոլոր կարևոր դերակատարներից ամենաքիչ վստահություն վայելում էին դատավորները:³² Բացի այդ, Հրապարակումներում

³¹ Տես, օրինակ, Ճանապարհային քարտեզ-զեկույց, էջ 19:

³² Ճանապարհային քարտեզ-զեկույց, էջ 26, տես նաև Գնահատման զեկույց, էջ 61:

ուշադրություն է դարձվել դատավարության արդյունավետությանն ու ժամանակին:

3.56 Ճանապարհային քարտեզ-գեկույցը նպատակ ունի բարելավել սնանկության դատարանի դատավորների դերն ու արդյունավետությունը՝ թե պարտապանի և թե պարտատիրոջ համար ավելի արդար և լավ արդյունքներ ապահովելու նպատակով՝ հետևյալ առաջարկությունների միջոցով.

ա) էլեկտրոնային սնանկության հարթակի թարմացում, ինչպես նշվեց վերևում՝ ապահովելու դատավորների հասանելիությունը տեղեկատվությանը և բոլոր ռեսուրսներին (օրինակ՝ պրակտիկան և ընթացակարգերը), որոնք անհրաժեշտ սնանկության գործերը լսելու համար: Ակնկալվում է, որ նշվածը կսահմանափակի նրանց հայեցողությունը՝ սահմանելով հստակ գործընթացը, որը պետք է իրականացվի.

բ) ներգրավել նոր դատավորներ՝ օժանդակելու գործող դատավորների ծանրաբեռնվածությանը և նվազագույնի հասցնել ձգձգման հնարավորությունը.

գ) դատավորների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացման պահանջի ներդրում: Առաջարկվում է, որ այս դասընթացներն անցկացվեն ինչպես Սնանկության դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի համար: Այն պետք է կազմակերպվի երկու մակարդակով. նախ պետք է կատարվի գործող դատավորների իրազեկվածության մակարդակի գնահատում, այնուհետև պետք է կազմվի վերապատրաստումների ծրագիր, որը կլրացնի բացերը և կապահովի, որ դատավորները հիմնական ոլորտներին լավ տիրապետեն: Սնանկության դատարանի համար առաջարկվում է, որ վերապատրաստումների ծրագիրը մասնավորապես կենտրոնանա էլեկտրոնային սնանկության համակարգի և գործերի վարման, ֆինանսական առողջացման ծրագրերի դերը թե իրավակարգավորումներին և թե պրակտիկայում.

դ) բարելավել սնանկության դատարանի տեխնիկական հնարավորությունները, ինչպիսիք են համակարգիչները և այլ թվային սարքավորումները, և վերապատրաստումներ անցկացնել դատավորների և համապատասխան աշխատակիցների տեխնիկական գիտելիքների բարձրացման համար: Ճանապարհային քարտեզ-գեկույցը առաջարկում է դիտարկել թափանցիկ մրցույթի միջոցով առկա տեխնոլոգիայի բարելավումը.

ե) բարձրացնել դատարանի առջև կառավարիչների հաշվետվողականությունը՝ դատարանի որոշումները չկատարելու դեպքում սնանկության կառավարչի նկատմամբ սանկցիաներ սահմանելով: Բացի այդ, թափանցիկությունը ապահովելու նպատակով կարող է պահանջվել դատարան ներկայացնել հաշվետվություններ և այն հասանելի դարձնել սնանկության էլեկտրոնային հարթակում.

զ) քննարկել Վերաքննիչ սնանկության դատարան ստեղծելու անհրաժեշտությունը, որը կօգնի գործերի վարմանը և կապահովի արդարություն արագ զարգացող օրենսդրական միջավայրի լույսի ներքո:

Անդրսահմանային սնանկություն

3.57 Հրապարակումներում այս հարցերի մասին չի խոսվում:

Գույքի գնահատումը և վաճառքը

3.58 Հրապարակումները նշել են, որ գույքի ընթացիկ գնահատման և աճուրդի գործընթացները թափանցիկ չեն և թերի կարգավորված են, մասնավորապես՝ գնի որոշման և մեթոդաբանության առումով:

3.59 Ճանապարհային քարտեզ-գեկույցը, առաջնորդվելով «ստանալ պարտապանի գույքի համար առավելագույն գինը՝ նվազեցնելով աճուրդի հետ կապված գործառնական ծախսերը» տեսակետով³³, առաջարկում է հետևյալը.

ա) ներկայացնել կարգավորումներ գնահատման և աճուրդի գործընթացների շուրջ՝ սնանկության կառավարչի հայեցողությունը նվազագույնի հասցնելու համար: Նման կանոնակարգերը պետք է մշակվեն՝ բարելավելու հաշվետվողականությունը և թափանցիկությունը.

բ) դիտարկել աճուրդի գործընթացն առցանց դարձնելու հարցը: Սա կբարձրացնի հայտատուների մասնակցությունը և կապահովի թափանցիկությունը.

գ) քննարկել լոտերի նվազագույն գին նախատեսելու հնարավորությունը՝ կանխելու գույքի՝ շուկայականից ցածր արժեքով վաճառքը:

³³ Ճանապարհային քարտեզ-գեկույց, էջ 33

4. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Սույն զեկույցը պատրաստելու համար նախաձեռնված խորհրդակցությունների ընթացքը ընդգրկել է հետևյալ հարցերը.

- **Քացեր կամ թերություններ** - «Սնանկության մասին» ՀՀ օրենքով ներկայումս առկա գործընթացներում ի՞նչ քացեր կամ թերություններ կան՝ ֆինանսական դժվարությունները հաղթահարելու համար: Արդյո՞ք առկա են կարգավորումներ ֆինանսական առողջացման համար և արդյո՞ք առկա մեխանիզմները բավարար են (և եթե ոչ, ապա որո՞նք են թերությունները): Առկա է արդյո՞ք հատուկ գործընթաց ՄՓՄՁ-ի համար:
- **Վարկավորման պրակտիկա** - Որո՞նք են վարկատուների և վարկառուների գործողությունները, երբ առկա են ֆինանսական դժվարություններ:
- **Սնանկության կառավարիչ/սնանկության մասնագետ** - Ինչպե՞ս են կարգավորվում սնանկության կառավարիչների հետ կապված իրավահարաբերությունները: Ինչպե՞ս են նրանք պատասխանատվություն կրում իրենց կողմից իրականացված խախտման համար: Ինչպե՞ս կարելի է ապահովել մասնագիտական կարողությունների մակարդակը: Օրինակ, ի՞նչ վերապատրաստման կամ կարողությունների զարգացման դասընթաց կարելի է կազմակերպել, և ինչպե՞ս կարելի է վերջիններիս համար մատչելի դարձնել տեղեկատվական նյութերը, ուղեցույցները և ուսումնական նյութերը:
- **Դատարանների կարողություններ** - Անհրաժեշտ է արդյո՞ք կարողությունների զարգացումը: Ինչպե՞ս կարելի է կազմակերպել կամ կատարելագործել վերապատրաստումները և կարողությունների զարգացումը:
- **Գույքի վաճառք** - Ի՞նչ բարելավումներ կարող են կատարվել պարտապանի գույքի գույքագրման, գնահատման և աճուրդի հանման գործընթացում: Անհրաժեշտ է արդյո՞ք օգտագործել ուղեցույցի նշումներ ու ձևանմուշներ:
- **Անդրսահմանային օրենքներ** - Գնահատել ՀՀ օրենսդրության լույսի ներքո միջսահմանային սնանկության մասին իրավական կարգավորումների հեռանկարը և համապատասխանությունը: Օրինակ՝ արդյո՞ք միջազգային ընկերությունները իրականացնում են

ձեռնարկատիրական գործունեություն Հայաստանում, և ինչպե՞ս է գործող օրենքը կարգավորում այլ երկրների դատարանների և սնանկության կառավարիչների հետ համագործակցությունը Հայաստանում գործունեություն ծավալող արտասահմանյան սնանկացած ընկերությունների վերաբերյալ գործերով:

- **Լրացուցիչ նկատառումներ** - Խորհրդատվական գործընթացում հայտնաբերված այլ թեմաներ կամ խնդիրներ:

4.2 Սնանկության ոլորտում առկա օրենսդրական և գործնական խնդիրների բացահայտման նպատակով փորձագետների և Արդարադատության նախարարության ներկայացուցիչների կողմից համատեղ մշակվել են համապարփակ հարցումների նախագծեր, որոնք ներառել են հետևյալ հարցերը.

- (a) Ի՞նչ օրենսդրական և այլ բնույթի խնդիրներ են առկա սնանկության ոլորտում, այդ թվում՝ ֆինանսական առողջացման մեխանիզմների արդյունավետ կիրառման, ինչպես նաև պարտապանի գույքի գույքագրման, գույքի գնահատման և աճուրդների կազմակերպման առումով և ինչպես կարելի է դրանք հաղթահարել.
- (b) արդյո՞ք նպատակահարմար է մինչև լուծարման վարույթը պարտապանի ընթացիկ գործունեությունը ապահովելու համար պարտատերերի որոշմամբ պարտապանի ակտիվների վաճառքի հնարավորությունը նախատեսելը, եթե այո՝ որ դեպքերում և ինչ ընթացակարգով.
- (c) սնանկության վարույթում կիրառելի ո՞ր փաստաթղթերի (օրինակ՝ ֆինանսական առողջացման ծրագիր, գույքագրման ակտ և այլն) տիպային ձևերի մշակումը և օգտագործումը կնպաստի սնանկության վարույթի արդյունավետության բարձրացմանը.
- (d) արդյո՞ք առկա է սնանկության վարույթի որևէ ընթացակարգի կամ դրա շրջանակում կատարվող առանձին գործողության վերաբերյալ ուղեցույցների կամ խորհրդատվական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն, եթե այո, ապա ո՞ր.
- (e) ի՞նչ կարիքներ (ուսումնական և տեղեկատվական նյութերի, ուղեցույցների մշակում և այլն) են առկա դատավորների և սնանկության գործով կառավարիչների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու հարցում.
- (f) սնանկության վարույթի ո՞ր հարցերը ունեն հրատապ հանրային իրազեկման կարիք և ինչու՞.
- (g) այլ ին՞չ առաջարկներ են առկա սնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առումով:

4.3 Դրանք 17.10.2020թ. Արդարադատության նախարարության անունից ուղարկվել են հետևյալ շահագրգիռ անձանց և մարմիններին.

- (1) «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպություն (ընդգրկում է սնանկության գործով բոլոր կառավարիչներին).
- (2) Փաստաբանների պալատ (ընդգրկում է բոլոր փաստաբաններին).
- (3) Բանկերի միություն (ընդգրկում է բոլոր բանկերը).
- (4) Արդյունաբերողների և գործարարների միություն.
- (5) Արդարադատության ակադեմիա.
- (6) Մարդու իրավունքների պաշտպանին.
- (7) Կենտրոնական բանկ.
- (8) Էկոնոմիկայի նախարարություն.
- (9) Ֆինանսների նախարարություն.
- (10) Պետական եկամուտների կոմիտե.
- (11) Բարձրագույն դատական խորհուրդ (ընդգրկում է բոլոր դատարանները):

4.4 Սնանկության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, այդ թվում՝ կամավոր սնանկության դեպքերի դինամիկայի և սնանկ ճանաչելու պահանջով դիմումների հիմքում դրված պարտավորության չափերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով փորձագետների և Արդարադատության նախարարության ներկայացուցիչների կողմից համատեղ մշակվել են հարցումների նախագծեր, որոնք Արդարադատության նախարարության անունից 19.10.2020թ. ուղարկվել են.

- (1) Դատական դեպարտամենտ.
- (2) «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպություն.
- (3) Բանկերի միություն.
- (4) Պետական եկամուտների կոմիտե:

4.5 Հարցումներից ստացված պատասխանների հիման վրա կազմված հետազոտության արդյունքները (130 էջ) ամփոփ ներկայացված են Հավելված Ա-ում:

4.6 Հարցումների արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա փորձագետները արձանագրել են ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներ, որոնք խմբավորվել են ըստ իրենց բնույթի և հակիրճ ներկայացված են ստորև.

Սնանկության ոլորտում առկա օրենսդրական խնդիրներ

Ֆինանսական առողջացման վերաբերյալ.

4.7 Ֆինանսական առողջացման վերաբերյալ բարձրացված օրենսդրական խնդիրները հանգում են նրան, որ օրենքը մի շարք դեպքերում պարունակում է այնպիսի կարգավորումներ, արգելքներ և սահմանափակումներ, որոնք, մի կողմից չեն բխում ֆինանսական առողջացման նպատակից, և մյուս կողմից՝ չեն համապատասխանում ֆինանսական առողջացման վարույթների ժամանակակից և արդյունավետ կարգավորումներին և ֆինանսական առողջացումը չեն դարձնում գրավիչ: Այսպես՝

4.8 Ֆինանսական առողջացման ցածր արդյունավետության հիմնական պատճառներից մեկը, ըստ էության, առողջացման համար անհրաժեշտ գրավի առարկայի օգտագործման հարցն է: Բանն այն է, որ գործող օրենսդրության համաձայն՝ գրավի առարկան ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում կարող է օգտագործվել բացառապես ապահովված պարտատիրոջ համաձայնությամբ, մյուս կողմից՝ գրավի առարկան մինչև ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը ապահովված պարտատիրոջ կողմից կարող է դուրս բերվել սնանկության վարույթից դուրս բերելու և իրացվել: Չնայած որպես հակակշիռ նախատեսված է համարժեք պաշտպանության ինստիտուտը, սակայն այն պրակտիկ կիրառություն չի ստանում: Մասնավորապես, եթե բացակայում է ապահովված պարտատիրոջ համաձայնությունը իր գրավի առարկան ֆինանսական առողջացման ծրագրում օգտագործելու մասով, ապա պայմանագիր կնքելու մասով այն գործնականում ևս առկա չի լինում: Այդ մասով ճիշտ կլիներ հստակեցնել արդյոք օրենսդիրը նկատի ունի պարտատիրոջը, թե այլ սուբյեկտի: Հետևաբար անհրաժեշտ է ներդնել այնպիսի կարգավորումներ, որոնք մի կողմից կպաշտպանեն ապահովված պարտատիրոջ շահերը, մյուս կողմից՝ չեն ազդի ֆինանսական առողջացման արդյունավետության վրա, երբ գրավի առարկան անհրաժեշտ կլինի ֆինանսական առողջացման համար:

4.9 Արդարադատության նախարարության կողմից որպես առաջարկ նշվել է, որ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետների կրճատման դեպքում ապահովված պարտատերերը ավելի շահագրգռված կլինեին գործընթացին մասնակցելուն՝ գրավադրված ակտիվների իրացում սկսելու փոխարեն, ինչը կարող է էական լինել բիզնեսի փրկման հարցում:

4.10 Օրենսդրությունը որոշ սահմանափակումներ է նախատեսում առանձին կատեգորիայի սուբյեկտների (սնանկության վարույթի մասնակիցների), օրինակ՝ ապահովված պարտատերերի համար, որի արդյունքում առաջանում են ռիսկեր

պարտապանի ֆինանսական առողջացման վարույթում պարտապանի և այլ պարտատերերի կողմից իրենց իրավունքների չարաշահման հետևանքով նման սուբյեկտների իրավունքների հնարավոր խախտումների առումով: Սա ըստ էության հակասում է սնանկության վարույթին հայտնի այն էական սկզբունքին, ըստ որի՝ ֆինանսական առողջացման դեպքում պարտատերերը չպետք է զրկվեն նրանից, ինչ կստանային պարտապանի լուծարման դեպքում: Հետևաբար այս համատեքստում ֆինանսական առողջացման վարույթը վերանայելիս պետք է դրվի պարտապանի և բոլոր պարտատերերի շահերի առավելագույն հավասարակաշունտան սկզբունքը: Արդարադատության նախարարության կարծիքով՝ նշված սկզբունքը կարող է կյանքի կոչվել միայն այն դեպքում, եթե գրավի առարկան օգտագործվի առողջացման ծրագրի շրջանակներում: Նշված գաղափարի իրացման լավագույն տարբերակը բոլոր շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության ապահովմամբ բարեփոխումների հաջորդ փուլում հարցին անդրադառնալն է:

4.11 Մյուս խնդիրը առնչվում է ֆինանսական առողջացման ծրագրերի առավելագույն ժամկետներին, որոնք նախատեսված են գործող օրենսդրությամբ, ինչը գործնականում խնդրահարույց է հատկապես երկարաժամկետ ֆինանսավորման կամ ներդրումային ծրագրերի դեպքում: Արդյունքում, կենսունակ ֆինանսական առողջացման ծրագրով պարտապանի առողջանալու իրական հնարավորությունը կարող է բաց թողնվել ծրագրի երկարաժամկետ լինելու հետևանքով: Չնայած մի կողմից սա ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանությանը՝ նրանց պահանջների հնարավորինս սեղմ ժամկետում բավարարումն ապահովելուն, սակայն մյուս կողմից պետք է հնարավորություն տրվի պարտատերերին դիտարկելու նաև երկարաժամկետ ծրագրերը՝ որպես պարտապանի լուծարման այլընտրանք: Ամեն դեպքում, գործող կարգավորումների համատեքստում հնարավորություն չկա ծրագրի ժամկետը ի սկզբանե օրենքով սահմանված առավելագույն ժամկետով սահմանելու համար: Փոսլային առումով էլ ֆինանսական առողջացումը սահմանափակված է մինչև պարտատերերի առաջին ժողովը, այնինչ պրակտիկայում շատ հաճախ առողջացման հիմքեր առաջանում են լուծարային վարույթի ընթացքում, իսկ այդ ժամանակ հնարավոր չէ հաստատել ֆինանսական առողջացման ծրագիր:

4.12 Անհրաժեշտ է ոչ միայն վերանայել ֆիզիկական անձանց ֆինանսական առողջացման դեպքում որոշումների կայացման կանոնակարգումները, այլ նաև վերախմաստավորել ֆիզիկական անձանց ֆինանսական առողջացման կառուցակարգերը, քանի որ դրանք իրենց էությամբ չեն կարող նույնացվել իրավաբանական անձանց ֆինանսական առողջացումների հետ, որոնք հենց դասական առումով ֆինանսական առողջացումներ են: Այնինչ ֆիզիկական անձանց առողջացումը, ըստ էության, կարող է իրականացվել պարտքի վերակառուցման ձևով, իսկ սնանկության վարույթում գտնվող ֆիզիկական անձ-

պարտապանի դեպքում, որպես կանոն, այդ հնարավորությունը արդեն առկա չի լինում:

4.13 Հստակեցման ենթակա են նաև ֆինանսական առողջացման ժամանակ կիրառվող միջոցառումների իրականացմանն ուղղված կարգավորումները: Չնայած օրենքը նման միջոցառումների ցանկ չի սահմանում և դրանց իրականացումը թողնում է առողջացման ծրագրի կարգավորմանը, սակայն անհրաժեշտ է մտածել որոշ դեպքերում այդ միջոցառումների իրականացման ընթացքի և դրանց հետևանքների վերաբերյալ օրենսդրական հստակ կարգավորումներ նախատեսելու մասին, որոնք կվերաբերեն, օրինակ, ֆինանսական առողջացման ընթացքում պարտքի նկատմամբ տոկոսների և տույժերի հաշվարկմանը, պարտավորությունների մարման ժամանակացույցի խախտման տևողության սահմանմանը և այլ հարցերի: Այլապես առկա են հայեցողական որոշումների կայացման ռիսկեր:

4.14 Ֆինանսական առողջացման գրավչությունը բարձրացնելու հիմնական գործիքներից մեկը կարող են հանդիսանալ սնանկության կառավարչի խրախուսման միջոցները: Չնայած գործող օրենքը նախատեսում է նման մեխանիզմներ, օրինակ՝ պարզևավճարներ ֆինանսական առողջացման հաջող ավարտի դեպքում, սակայն անհրաժեշտ է դիտարկել նաև խրախուսման այլ ձևեր, սակայն անհրաժեշտ է, որ նշված խթանների կիրառման համար չնախատեսվեն լրացուցիչ պայմաններ: Նշված խնդիրները հարկ է մանրամասն ուսումնասիրել հետագա բարեփոխումների շրջանակներում:

4.15 Օրենսդրությունը ներկայումս չի նախատեսում տնտեսության համար կարևոր դեր ունեցող տնտեսավարողների ֆինանսական առողջացումը պետության կողմից խթանելու կառուցակարգեր: Օրենսդրության արդիականացումը և լավագույն միջազգային փորձի ներդնումը անհրաժեշտ աջակցություն կտրամադրի ձեռնարկություններին՝ հնարավորություն տալով հաղթահարել ֆինանսական դժվարությունները: Պետությունը պետք է օրենսդրորեն ամրագրված՝ լաված լինելու հնարավորություն ունենա պարտապան կազմակերպության սնանկության վարույթներում առողջացման ծրագրերի վերաբերյալ որոշում ընդունելիս:

4.16 Մինչև լուծարման վարույթ սկսելը պարտապանի գույքի վաճառքը թույլատրող կարգավորումները նույնպես ենթակա են վերանայման, հատկապես այն դեպքերի համար, երբ գույքի վաճառքը կարող է նպաստել պարտապանի առողջացմանը և չհասցնել նրա լուծարման:

Գույքագրման վերաբերյալ.

4.17 Գույքագրման վերաբերյալ բարձրացված օրենսդրական խնդիրները հիմնականում հանգում են նրան, որ անհրաժեշտ է սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք՝

- արդյունավետորեն կկանխեն սնանկության վարույթի մասնակիցների կողմից գույքագրման աշխատանքների խոչընդոտումը, ներառյալ այն դեպքերում, երբ գույքագրման գործընթացին ներգրավվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը և գույքագրմանը խոչընդոտելու համար բողոքարկվում են հարկադիր կատարողի գործողությունները.
- կլուծեն գույքագրման ժամկետների խնդիրը, որպեսզի մի կողմից ապահովվի սնանկության գործով կառավարիչների կողմից գույքագրման իրականացումը օրենքով սահմանված հստակ ժամկետներում՝ միաժամանակ հստակ հետևանքներ նախատեսելով գույքագրում չիրականացնելու համար, և մյուս կողմից էլ՝ հնարավորինս ապահովվի ժամկետների ճկունությունը գույքագրման մեծ ծավալների կամ գույքագրման խոչընդոտների առկայության դեպքերում:

Գույքի գնահատման վերաբերյալ.

4.18 Գույքի գնահատմանն առնչվող կարգավորումների վերաբերյալ բարձրացված էական խնդիրը վերաբերում է գույքի գնահատման համար հստակ ժամկետների բացակայությանը: Արդյունքում առկա է իրավիճակ, երբ գույքի գնահատմանն ուղղված հիմնական կարգավորումների բացակայության պայմաններում կարող են խախտվել պարտապանի և պարտատերերի շահերը, քանի որ գույքի պատշաճ գնահատումից են կախված գույքի վաճառքի դեպքում դրա ճակատագիրը և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունները: Բացի այդ, պետք է ապահովվի օրգանական կապը գույքագրման և գույքի գնահատման միջև: Մյուս կողմից, օրենքը թեև նախատեսում է կառավարչի կողմից ինքնուրույն (առանց գնահատողի) գնահատման հնարավորությունը, սակայն չի նախատեսում այն իրականացնելու կարգը, մեխանիզմները, մեթոդները և այլն:

4.19 Արդարադատության նախարարության կողմից նշվել է, որ թեև Օրենքի 57-րդ հոդվածը չի անդրադառնում գույքի գնահատմանը, սակայն այն պետք է կատարվի 58-րդ հոդվածով նախատեսված՝ ֆինանսական վիճակի վերլուծության համար նախատեսված ժամկետների հաշվառմամբ, որը, սակայն, գույքի գույքագրման ժամկետների հետ համակարգային գնահատելիս, ողջամիտ չէ: Ուստի Արդարադատության նախարարությունը գտնում է, որ այս հարցը պետք է օրգանական կապի մեջ դիտարկվի ինչպես գույքագրման, այնպես էլ

Ֆինանսական վիճակի վերլուծության մասով սահմանված ժամկետների հետ՝ ապահովելով նշված գործընթացների, ինչպես նաև գույքի վաճառքի արդյունավետությունը:

Աճուրդների վերաբերյալ.

4.20 Աճուրդների վերաբերյալ բարձրացված խնդիրները հանգում են հետևյալին՝

- սնանկության վարույթում աճուրդների հիմնական խնդիրներից մեկը գույքի վաճառքի գինն է, ինչը մշտապես չարաշահումների տեղիք է տալիս և՛ ի վնաս պարտապանի, և՛ ի վնաս պարտատերերի: Չնայած օրենքում կատարված վերջին փոփոխություններով կանխվեց այն պրակտիկան, երբ մի քանի աճուրդների ընթացքում առաջին աճուրդի ժամանակ ձևավորված մեկնարկային գինն էականորեն իջեցվում էր, սակայն դեռևս առկա են աճուրդի գնի սահմանման, այդ թվում՝ մեկնարկային գնից ավելի բարձր գին առաջարկելու դեպքերում չարաշահումներ թույլ տալու ռիսկեր:
- չնայած այն հանգամանքին, որ օրենքը սահմանել է աճուրդն էլեկտրոնային եղանակով իրականացնելու պահանջ, սակայն մինչև աճուրդի էլեկտրոնային համակարգի ներդրումն այն իրականացվում է դասական եղանակով, ինչը շատ դեպքերում պահանջում է, որ կառավարիչը աճուրդի պատշաճ կազմակերպման իրավական գործիքներ ունենա, երբ, օրինակ, աճուրդի մասնակիցները խոչընդոտում են աճուրդի ընթացքը: Բացի այդ, կարևորվում է նաև այնպիսի կարգավորումների նախատեսումը, որպեսզի հնարավոր լինի գույքը աճուրդում հաղթողին հանձնել «մաքուր» վիճակում՝ բացառելու համար այդ գույքի նկատմամբ այլ անձանց առկա կամ հնարավոր ազդեցություններից, ինչը տարածված երևույթ է հայաստանյան իրականության մեջ:
- աճուրդների արդյունավետությունը կախված է նաև նրանից, թե որքան ճկուն են դրանք՝ փուլերով և տարբեր պարբերականությամբ իրականացվելու դեպքերում, հատկապես երբ խոսքը գնում է մեծաքանակ գույքերի վաճառքի մասին:
- անհրաժեշտ է հստակ կարգավորումներ նախատեսել աճուրդի ընդհատման պահի և դեպքերի առումով: Հարկ է նաև քննարկել «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:
- անհրաժեշտ է վերանայել մինչև լուծարման վարույթ սկսելը պարտապանի գույքի վաճառքի կառուցակարգերը, հստակեցնել այն դեպքերը և չափանիշները, որոնց պարագայում պարտատերերը հնարավորություն կունենան որոշում կայացնելու գույքը մինչև պարտապանի լուծարումը վաճառելու մասին, հատկապես այն դեպքերում, երբ պարտապանը ունի գործող բիզնես, ընկերության ակտիվները գերազացնում են պարտավորությունների (պահանջների) չափը և գույքի իրացումը թույլ

կտա բավարարել բոլոր պահանջները, ինչի արդյունքում չեն կիրառվի ոչ ֆինանսական առողջացման և ոչ էլ լուծարման բարդ ընթացակարգերը: Օրինակ՝ մինչև լուծարման վարույթ սկսելը պարտապանի ակտիվների վաճառքը կարող է նախատեսվել այն դեպքում, երբ այդ գույքը ակնհայտորեն չի կարող օգտագործվել ֆինանսական առողջացման շրջանակներում, օրինակ՝ փչացող, արագ արժեզրկվող կամ պահպանության համար անհամաչափ ծախսեր պահանջող ակտիվները:

- աճուրդների արդյունավետությունը կախված է նաև նրանից, թե ինչպիսի երաշխիքներ են սահմանվում աճուրդում հաղթած անձի իրավունքների պաշտպանության առումով: Ուստի այս համատեքստում կարևորվում է այնպիսի մեխանիզմների ներդրումը, որով կբացառվեն իրավունքի չարաշահումները աճուրդի արդյունքում կնքված գործարքների վիճարկման մասով:
- գույքի վաճառքի կանոնակարգումների վերանայմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է հստակեցնել նաև վաճառքի արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների, դրանց ճիշտ հաշվարկման և բավարարման հետ կապված հարցերը՝ միաժամանակ ապահովելով, որ դրա արդյունքում չխախտվեն նաև մյուս պարտատերերի շահերը:

Դատավարական բնույթի խնդիրներ

4.21 Ինչպես ընդհանուր քաղաքացիական դատավարության համատեքստում, այնպես էլ սնանկության վարույթում, որպես քաղաքացիական դատավարության կարգով իրականացվող գործընթաց, ուշադրության է արժանի պատշաճ ծանուցումների իրականացման, այդ թվում՝ դատավարական փաստաթղթերի հանձնման հարցը: Սա առաջնային լուծում պահանջող խնդիրներից է, որը ներհատուկ է Հայաստանում քննվող բոլոր տեսակի դատական գործերին: Սնանկության վարույթի դեպքում խնդիրը առավել քան սուր է, քանի որ սնանկության վարույթի արդյունավետությունը կախված է վարույթի բոլոր մասնակիցների պատշաճ տեղեկացվածությունից և գործընթացում ակտիվ ներգրավվածությունից և գործի քննության սեղմ ժամկետներից: Այս առումով անհրաժեշտ է վերանայել այն կարգավորումները, որոնք հնարավորություն չեն տալիս դատավարության մասնակիցներին հաղորդակցությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ միաժամանակ ներդնելով նաև էլեկտրոնային ծանուցումների պատշաճ մեխանիզմներ:

4.22 Սնանկության վարույթի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ներդնել նաև վարույթի մասնակիցների կողմից իրենց դատավարական իրավունքների չարաշահումները կանխելու գործուն մեխանիզմներ: Այս առումով կարող է հիմք ընդունվել լավագույն միջազգային փորձը: Խոսքը գնում է հատկապես այն դեպքերի մասին, երբ սնանկության վարույթի մեկնարկին պարտապանի անվճարունակության հիմքում ընկած

պարտավորությունը և դրա անվիճելի լինելը կասկածի տակ դնելու նպատակով հարուցվում են սնանկության գործին հարակից այլ քաղաքացիական գործեր, ինչը արհեստականորեն ազդում է սնանկության գործի քննության վրա: Օրինակ, սնանկ ճանաչելու հարցի քննության ժամանակ պարտավորության այլ գործով վիճարկումը պետք է ոչ թե պահանջի մերժման հիմք դառնա, այլ օրենքում պետք է լինի վարույթը այդ հիմքով կասեցնելու հնարավորություն: Չարաշահման տեղիք կարող է տալ նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված պարտավորությունները և նույնաբնույթ, սակայն դատական ակտով չհաստատված պարտավորությունները միևնույն հերթում դիտարկելը:

4.23 Արդարադատության նախարարության կողմից նշվել է, որ, ըստ ձևավորված դատական պրակտիկայի, միայն հայցադիմումը վարույթ ընդունելը չի կարող բավարար ապացույց դիտվել պարտավորությունը վիճելի գնահատելու համար, օրինակ այն գործերով, որոնցով ներկայացվել է գործարքն անվավեր ճանաչելու պահանջ: Հաշվի առնելով, որ առավելապես ներկայացվում են գործարքն անվավեր ճանաչելու պահանջներ, մյուս կողմից՝ քանի որ պահանջի բավարարման դեպքում դրա դատավարական հետևանքը երկկողմանի ռեստիտուցիան է (եթե պայմանագրի գինը գերազանցում է երկու միլիոնը), ապա դատարանը չի մերժում անձին սնանկ ճանաչելու պահանջը: Միջազգային լավագույն փորձը վկայում է, որ պարտապանը հայց կամ դիմում ներկայացնելու հետ միաժամանակ պետք է կարողանա դատարանին ապացուցել, որ պահանջը ներկայացված է բարեխղճության սկզբունքի պահպանմամբ (*bona fide*) և առկա է հնարավորություն հերքելու այն պահանջը, որոնց վրա հիմնված է սնանկությունը:

4.24 Հստակեցման են ենթակա նաև վարույթի մասնակիցների՝ պարտապանի, պարտատերերի դատավարական իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ այն հարցը, թե պարտատերը որ պահից է ձեռք բերում նման իրավունքներ և պարտականություններ: Զգայուն է նաև պարտապանի և սնանկության գործով կառավարչի պարտապանի անունից հանդես գալու իրավիճակներում այս սուբյեկտների իրավունքների և պարտականությունների տարանջատումը:

4.25 Վերոնշյալի համատեքստում պետք է հստակեցնել նաև, թե սնանկության գործով որ դատական ակտերն են ենթակա բողոքարկման՝ մշակելով չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի որոշել ակտերի շրջանակը՝ ելնելով դրանց բնույթից ու նշանակությունից: Ըստ այդմ՝ պետք է հստակեցվեն նաև սնանկության վարույթի մի շարք դատական ակտերի, օրինակ՝ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշման բնույթը:

4.26 Կարևոր է նաև սնանկության գործով կառավարիչների գործողությունների անհիմն բողոքարկումները կանխելու հարցը: Դատական ակտերի բողոքարկման

մասով պետք է գնահատել նաև վերջին փոփոխություններով վերաքննիչ դատարանին տրված այն լիազորության արդյունավետությունը, ըստ որի՝ վերաքննիչ դատարանը հնարավորություն ունի կասեցնելու բողոքարկվող դատական ակտի կատարումը:

4.27 Դատավարական ժամկետների առումով անհրաժեշտ է օրենքով սահմանել սնանկության վարույթում տեղի ունեցող մի շարք գործընթացների, գործողությունների իրականացման ժամկետները. խոսքը հատկապես վերաբերում է պարտատերերի վերջնական ցուցակի հաստատման, ինչպես գործն ավարտելու մասին կառավարչի միջնորդությունների քննության ժամկետներին: Անհրաժեշտ է վերանայել նաև սնանկության վարույթում դատավարական ժամկետների հաշվարկման կարգը՝ այն համապատասխանեցնելով գործող քաղաքացիադատավարական լուծումներին:

4.28 Սնանկության մասին օրենսդրությունը չի կարգավորում նաև պարտապանի մահվան դեպքում սնանկության վարույթի հետագա ընթացքի, ժառանգության ընդունման և սնանկության վարույթի վրա պարտապանի մահվան հետևանքների հետ կապված հարցերը: Այստեղ ուշադրության են արժանի նաև պարտապանի մահվան դեպքում ժառանգման և վերջինիս սնանկության հարաբերակցության խնդիրները, հատկապես երբ խոսքը վերաբերում է պարտապանի գույքակազմին:

4.29 Ըստ Արդարադատության նախարարության՝ նույն խնդիրն առկա է նաև երրորդ անձ-գրավատուի մահվան դեպքում:

4.30 Նման խնդիր առաջանում է նաև իրավաբանական անձի միակ հիմնադիր (մասնակից) և միաժամանակ գործադիր մարմին (տնօրեն) հանդիսացող անձի մահվան դեպքում: Տվյալ պարագայում տնօրենին փոխարինող անձի հստակեցումը կարևոր է սնանկության վարույթին պարտապանի մասնակցությունն ապահովելու առումով:

4.31 Քննարկման ենթակա է նաև դատական ակտերի իրավական որոշակիությունը (*res judicata*) ապահովելուն ուղղված կարգավորումներ նախատեսելը, հաշվի առնելով այն, որ անձին սնանկ ճանաչելուց հետո սնանկ ճանաչելու վճռի հիմքում դրված հանգամանքները գործնականում վիճարկելը ազդում է սնանկության վարույթի վրա:

Ապահովված պարտատերեր, երաշխավորներ, երաշխիք տված անձինք

4.32 Նախ և առաջ կոնցեպտուալ առումով անհրաժեշտ է վերացնել սնանկության մասին օրենսդրությամբ առկա շփոթը և տարբերակումներ մտցնել ապահովված

իրավունքների, ապահովված պարտատերերի, ապահովված պահանջների և մյուս կողմից՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների (պահանջների) միջև:

4.33 Օրենսդրությամբ անհրաժեշտ է հստակեցնել գրավատուների, երաշխավորների և երաշխիք տված անձանց դերը՝ որպես սնանկության վարույթի մասնակիցներ և հատուկ կարգավորումներ նախատեսել նրանց իրավական, դատավարական կարգավիճակը ընդգծելու, սնանկության վարույթում նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանելու համար: Մյուս կողմից, անհրաժեշտ է վերանայել նաև սնանկության վարույթի ընթացքում երաշխավորների նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկման նպատակահարմարությունը:

4.34 Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել և մանրամասնել նաև գրավի առարկան ապահովված պարտատիրոջ կողմից ի սեփականություն ընդունելու գործընթացը՝ այդ գործընթացի ժամկետների, պայմանների, գույքի գնի (արժեքի), դրանից բխող՝ կառավարչի վարձատրության վճարման հարցերի շուրջ: Բացի այդ, ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների արդյունավետ բաշխման նպատակով պետք է հստակեցվեն գույքի պահպանման, իրացման ծախսերի և վարչական ծախսերի հատուցման կարգը և հերթականությունը:

4.35 Որոշ դեպքերում անհրաժեշտ է տարանջատում մտցնել ապահովված իրավունքի բնույթ ունեցող սահմանափակումների և ապահովված իրավունքների միջև և կարգավորել նաև դրանց փոխհարաբերակցությունը, օրինակ՝ կարող է արդյոք հարկային մարմնի կողմից մինչև սնանկության վարույթի հարուցումը հարկատուի գույքի կիրառված արգելանքը կարող է դիտարկվել ապահովված պահանջ՝ արգելադրված գումարի չափով, եթե այո, ապա ինչ կարգավորումներ են կիրառելի այդ դեպքի նկատմամբ:

4.36 Կարգավորման է ենթակա նաև սնանկության վարույթի ընթացքում ապահովված իրավունքի առարկաների օգտագործման, այդ թվում՝ դրանից ստացվող եկամուտների տնօրինման հետ կապված հարցերը:

Մորատորիում

4.37 Մորատորիումի շրջանակներում անհրաժեշտ է ճկուն կարգավորումներ այն առումով, որպեսզի հնարավոր չլինի չարաշահումներ թույլ տալ և սնանկության վարույթի շրջանցմամբ բավարարում տալ պարտատերերին՝ խախտելով մյուս պարտատերերի շահերը, ավելին, շատ դեպքերում սնանկության վարույթը շրջանցում և պարտապանի պարտավորությունները կատարվում են վարույթի

մասնակից չհանդիսացող երրորդ անձանց կողմից, ինչի արդյունքում նույնպես խախտվում են պարտատերերի շահերը: Այս ինստիտուտի շրջանակներում առկա են նաև հստակեցման ենթակա այլ հարցեր, օրինակ՝ մորատորիումի գործողության արդյունքում այլ դատական գործերի վարույթը կարճելու դեպքում պետական տուրքի վերադարձման հարցը: Արդարադատության նախարարությունը կարծում է, որ էական նշանակություն ունի այն հարցը, թե ինչ հիմքով է կարճվել քաղաքացիական գործի վարույթը՝ օրենքով նախատեսված այլ դեպքում, թե վեճը ենթակա չէ քաղ. դատ. կարգով քննության, քանի որ վերջին դեպքում պետական տուրքը օրենքի ուժով ենթակա է վերադարձման: Կարող է քննարկվել ոչ միայն վերադարձնելու, այլ նաև որպես պարտավորության մաս՝ սնանկության վարույթի շրջանակում առանձին հերթում այն գրանցելու հնարավորությունը:

Պարտատերերի ժողովը, խորհուրդը

4.38 Վերանայման են ենթակա պարտատերերի ժողովում քվեարկության, որոշումների կայացման հետ կապված հարցերը, որպեսզի ժողովում լսելի և որոշիչ լինի տարբեր դասերի պարտատերերի ձայնը (ձայների կշիռը), այլ ոչ միայն պարտատերերի թիվը: Անհրաժեշտ է նաև սահմանել մեխանիզմներ, որոնք կստիպեն պարտատերերին մասնակցելու ժողովի նիստերին, այլ ոչ խոչընդոտելու դրանց անցկացումը իրենց բացակայությամբ: Բացի այդ, պետք է վերանայվեն նաև պարտատերերի առաջին ժողովին ներկայացած պարտատերերի իրավունքները այլ պարտատերերի համեմատությամբ, այդ թվում՝ քվեարկության իրավունք ձեռք բերելու առումով: Քննարկման են ենթակա նաև պարտատերերի խորհուրդի ձևավորման կարգի փոփոխությունները՝ դրա կազմում նաև ապահովված պարտատերերի ներառման նպատակով:

Պահանջների գրանցումը

4.39 Պահանջների գրանցման հետ կապված հարցերի առումով դեռևս հստակեցման են ենթակա պահանջները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման կարգը, պահանջը և պարտատիրոջը բնութագրող ամբողջական տվյալների ստացման հետ կապված հարցերը:

Սնանկության կառավարիչների վարձատրությունը

4.40 Կառավարիչների վարձատրության մասով վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում մի շարք դեպքերում նվազեցվել են կառավարիչների վարձատրության տոկոսադրույքները, սահմանվել են

պարգևավճարներ գործը արագ ավարտելու համար և մի շարք դեպքերում հստակեցվել են կառավարչի վարձատրություն ստանալու ընթացակարգերը: Սակայն այս համատեքստում դեռևս առկա են չլուծված խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, վարձատրությունը հաշվարկելիս գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների բավարարման համար նախատեսված գումարը հաշվարկելը, վարձատրության հաշվարկման հիմքը միջանկյալ բաշխման ծրագրի դեպքում և վարույթի մասնակից չհանդիսացող անձանց միջոցով պարտքի մարումն իրականացնելիս կառավարչի վարձատրության հարցերը:

4.41 Բացի այդ, պարտապանի գույքի բացակայության կամ դրա 50 հազար դրամից ցածր արժեք ունենալու հիմքով սնանկության վարույթի ավարտը օրենքը դիտարկում է հիմք պետական բյուջեից հատուցում ստանալու համար, որի իրականացման կարգը ներկայումս բացակայում է և այդ առումով անհրաժեշտ է օրենքում նախատեսել Կառավարության կողմից այս կարգի սահմանման ենթակա լինելու մասին լիազորող նորմ: Արդարադատության նախարարության կողմից նշվել է, որ ներկայումս ժամանակավոր կառավարիչները որևէ վարձատրություն չեն ստանում, եթե իրենք չեն նշանակվում որպես հիմնական կառավարիչ, իսկ սնանկության վարույթն ավարտվում է պարտապանի գույք չունենալու հիմքով: Ըստ Արդարադատության նախարարության՝ հարկ է քննարկել նաև այն հարցը՝ ժամանակավոր կառավարչի վարձատրություն ստանալու իրավունքի անարգել իրականացումն ապահովելու համար:

Գործարքների վիճարկումը

4.42 Անհրաժեշտ է վերանայել երրորդ անձանց կողմից կատարված փոխանցումները հետ ստանալու մեխանիզմը (պարտապանի գործարքների վիճարկումը), հատկապես օրենսդրորեն հստակեցնելով պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի մտադրությունը՝ դրա համար նախատեսելով հստակ չափանիշներ և կարևորելով նաև գործարքների վիճարկման իրավական հետևանքները, մասնավորապես՝ գործարքների անվավերության և գրանցված իրավունքների դադարման հետ կապված հարցերը: Միևնույն ժամանակ պետք է սահմանել կառավարչի և պարտապանի իրավունքները և պարտականությունները նման գործարքների վիճարկման դեպքում և ապահովել, որ պարտապանի անունից դատարան հայցերի ներկայացումը խրախուսական լինի նաև կառավարչի համար, և անհամարժեք անբարենպաստ հետևանքներ չառաջացնի վերջինիս համար:

Արտադատական ընթացակարգերը

4.43 Սնանկության վարույթում կիրառվող արտադատական ընթացակարգերից գործող օրենքը նախատեսում է հաշտության համաձայնության կնքումը: Այս

ինստիտուտը լիարժեք վերանայման և ընդլայնման կարիք ունի, քանի որ նաև միջազգային պրակտիկայում սնանկության վարույթից դուրս արտադատական ընթացակարգերը խիստ ողջունելի են: Այս համատեքստում պետք է վերանայվեն նաև հաշտության համաձայնություն կնքելու ժամկետը, ինչպես նաև սահմանել կառուցակարգեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ սնանկության վտանգի առջև կանգնած պարտապանի հետ արտադատական կարգով համաձայնություն կնքելու համար: Պետք է քննարկել նաև վերադաս դատական ատյաններում նման կառուցակարգերի կիրառման հնարավորությունը:

Պարտապանի գործունեությունը սնանկության վարույթում

4.44 Այս համատեքստում չնայած օրենքը նախատեսում է մի շարք կառուցակարգեր, որոնք վերաբերում են պարտապանի գործունեությանը, սակայն կարգավորումները բավականին մակերեսային են և հնարավորություն չեն տալիս առավել մանրամասն պատկերացում կազմելու գործող ընթացակարգերի մասին: Օրինակ՝ հստակեցված չեն այն հարցերը, թե ինչպես է իրականացվում գույքի կառավարումը և տնօրինումը կասեցումը, լուծարման վարույթում պարտապանի գործունեության վերսկսումը և այլն:

Ֆիզիկական անձի սնանկությունը

4.45 Ընդհանուր առմամբ, ֆիզիկական անձանց սնանկության ինստիտուտը ենթակա է վերանայման և առավել մանրամասն ինստիտուցիոնալ կարգավորման, ի տարբերություն ներկայիս կարգավորումների, երբ ֆիզիկական անձանց սնանկության վարույթը հիմնականում կարգավորվում է իրավաբանական անձանց սնանկության վերաբերյալ կանոններով և միայն որոշ հարցերի մասով նախատեսվում են առանձնահատկություններ:

Սնանկության կառավարչի ընտրությունը և նշանակումը

4.46 Չնայած այն հանգամանքին, որ կառավարիչների թեկնածուների վիճակահանությունն այժմ ավելի կանոնակարգված է և զերծ միջամտության ռիսկերից, սակայն ընդհանուր առմամբ վերանայման է ենթակա կառավարիչների ընտրության և նշանակման գործող ընթացակարգը: Այստեղ պետք է ներդնել այնպիսի լուծումներ, որ մի կողմից չխախտվեն պարտատերերի և պարտապանի շահերը, մյուս կողմից՝ բացառվի պարտատիրոջից կամ

պարտապանից սնանկության գործով կառավարչի կախվածության ցանկացած ռիսկ առաջացնող կարգավորումները:

Հարկային խնդիրներ

4.47 Սնանկության վարույթի ընթացքում առաջացող հարկային հարցերը առնչվում են սնանկության վարույթից դուրս բերված ապահովված իրավունքի առարկայի իրացման դեպքում ապահովված պարտավորությունների նկատմամբ տույժերի և տոկոսների և բխող հարկային պարտավորությունների հաշվարկմանը, մինչև պարտապանի գործունեության կասեցումը ընկած ժամանակահատվածի համար հարկային հաշվետվություններ ներկայացնելու սուբյեկտների հստակեցմանը, պահանջների բավարարման հերթերում աշխատանքային պայմանագրերից բխող եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների բավարարման հերթի հստակեցմանը, ինչպես նաև աշխատանքային և հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումից եկամտային հարկի և սոցիալական վճարի գծով պարտավորությունների առաջացմանը:

Այլ խնդիրներ

4.48 Օրենսդրական բնույթի խնդիրների շարքին կարելի է դասել նաև՝

- սնանկության վարույթում աշխատավարձի բռնագանձման կարգի, չափի և ժամկետների հետ կապված հարցերը.
- կառավարչի կողմից իրականացվող և պետական տուրքով գանձվող այլ գործողությունների, օրինակ՝ հարցումների դեպքում պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելու հարցը
- սնանկության վտանգի վարույթում պարտատերերի դերակատարման բարձրացման, ինչպես նաև նրանց պարտքի չափը ֆիքսելու ճկուն կարգավորումների հարցը.
- սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորության չափի վերանայման հարցը՝ հաշվի առնելով այն, որ 2017թ. հունվարի 1-ին մինչև 2020թ. ապրիլի 15-ը ընկած ժամանակահատվածի համար գործերի 56-57%-ի դեպքում այն չի գերազանցել 2 000 000 ՀՀ դրամը
- կառավարչի կողմից պարտապանի ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու հետ կապված հարցերը.
- սնանկության վարույթի արդյունքում առաջացող դատական ծախսերի և վարույթին մասնակցող անձանց միջև այլ գործերով առաջացած դատական ծախսերի հատուցման հերթերի հետ կապված հարցերը.
- կամավոր սնանկության դիմում ներկայացնելիս գույքի բացակայության դեպքում գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների իրականացմանն այլընտրանքային եղանակների ներդրման հարցը.

-
- սնանկ ճանաչելու դիմումում նշված պարտավորության հաշվարկների, դիմումին կցվող գույքագրման արդյունքների վաղեմության ժամկետների հետ կապված հարցերը.
 - պարտապանի կողմից հայտարարագիր ներկայացնելու ժամկետների վերանայման հարցը.
 - սնանկության կառավարչի լիազորությունները դադարեցնելու հիմքերի վերանայման հարցը:

Սնանկության մասին նոր օրենք

4.49 Ներկայացված խնդիրների ծավալը և բովանդակությունը, օրենքում տարբեր տարիներին կատարված բազմաթիվ փոփոխությունները, այս ոլորտի հետազոտական տարբեր զեկույցները, այդ թվում՝ Միացյալ Թագավորության կառավարության Լավ Կառավարման հիմնադրամի ֆինանսավորմամբ 2019թ. պատրաստված «Սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն» և «Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր» փաստաթղթերը, ինչպես նաև այլ երկրների, այդ թվում՝ Կենտրոնական Ասիայի երկրների օրենսդրությունների սույն զեկույցում իրականացված համեմատական վերլուծությունը վկայում են «Սնանկության մասին» նոր օրենքի (օրենսգրքի) մշակման հրատապ անհրաժեշտության մասին, որը պետք է համապարփակ կարգավորի սնանկության ոլորտում ծագող դատավարական և նյութաիրավական բոլոր հարաբերությունները:

Սնանկության ոլորտում առկա գործնական խնդիրներ.

4.50 Սնանկության ինստիտուտի արդյունավետությունը և դրա նկատմամբ հանրային վստահությունը կախվածության մեջ են ոչ միայն օրենսդրական կարգավորումների որակից, այլև շահագրգիռ սուբյեկտների ինստիտուցիոնալ կարողությունների և իրավագիտակցության մակարդակից: Այսպես.

Փաստաթղթերի տիպային ձևերի մշակման վերաբերյալ.

4.51 Առկա է սնանկության վարույթում կիրառվող բոլոր փաստաթղթերի տիպային ձևերը մշակելու և էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելու հրատապ անհրաժեշտություն: Դրանց շարքում հատկապես հիշատակման են արժանի հետևյալ փաստաթղթերը.

- ֆինանսական առողջացման ծրագիր,
- գույքագրման ակտ,
- գնահատման ակտ,
- պահանջների նախնական ցուցակ,

-
- պարտատերերի ժողովի որոշում և արձանագրություն,
 - միջանկյալ բաշխման ծրագիր,
 - սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հաշվետվություններ,
 - աճուրդի արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

Սնանկության վարույթի ընթացակարգերի կապակցությամբ ուղեցույցների մշակման վերաբերյալ.

4.52 Սնանկության վարույթում իրականացվող մի շարք ընթացակարգեր կամ առանձին գործողություններ ունեն մեթոդական ուղեցույցների միջոցով առավել մատչելի և որոշակի դարձվելու կարիք: Այս տեսանկյունից առաջնահերթ են ներքոնշյալ գործընթացների վերաբերյալ ուղեցույցների մշակումը և հրապարակումը.

- Պարտապանի գույքի գույքագրում, որն, ի թիվս այլ հարցերի, կսահմանի թե՛ ինչպես սկսել գույքագրումը, որ գույքն է ենթակա գույքագրման, ինչ գործիքների և որ մարմինների միջոցով պետք է իրականացվի պարտապանի գույքի հայտնաբերումը, ինչպես նաև երբ է անհրաժեշտ իրականացնել պարտապանի գույքի հետախուզում:
- Պարտատերերի ժողովի անցկացում, որը կսահմանի պարտատերերի ժողովի գումարման և անցկացման հետ կապված գործողությունների հաջորդականությունը:
- Պարտապանի գույքի վաճառքը, որը կանդրադառնա պարտապանի գույքի իրացման եղանակների ընտրության, դրանցից յուրաքանչյուրի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքի իրացման հետ կապված հարցերին:
- Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն, որը կսահմանի ֆինանսական վիճակի վերլուծության համար անհրաժեշտ նյութերի շրջանակը, դրանց ծագման աղբյուրները և ձեռքբերման կարգը, վերլուծության իրականացման անհրաժեշտ մեթոդիկան, այդ թվում՝ կանխամտածված և կեղծ սնանկությունների բացահայտման հետ կապված հարցերը:

Սնանկության ոլորտում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու հարցում առկա կարիքների վերաբերյալ.

4.53 Մասնագիտական գիտելիքներ ձեռքբերելու և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու առումով կարևորվում են հետևյալ խնդիրների լուծումը.

-
- (1) Սնանկության ոլորտին վերաբերող իրավաբանական և ոչ իրավաբանական բնույթ կրող դասընթացների (օրինակ՝ ֆինանսական վիճակի վերլուծության, հարկային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ) և առարկայական ծրագրերի (ինչպես առկա, այնպես էլ հեռավար) մշակումը և վերամշակումը:
 - (2) Վերապատրաստումների առավել թիրախային թեմաներով և արդյունավետ ձևաչափերով իրականացումը:
 - (3) Ուսումնական և վերապատրաստման գործընթացի համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութերի (մեկնաբանություններ՝ ըստ օրենքի հոդվածների, ձեռնարկներ, ուղեցույցներ, դիդակտիկ նյութեր և այլն) մշակումը:
 - (4) Իրավակիրառ պրակտիկայում առավել խնդրահարույց իրավիճակները հաղթահարելու համար մտավոր սեփականության, պայմանագրերի անվավերության և արտասահմանում գտնվող պարտապանի գույքի իրացման հիմնախնդիրների վերաբերյալ գիտագործնական նյութերի մշակումը:
 - (5) Սնանկության ոլորտի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումների շտեմարանի ստեղծումը և պարբերաբար թարմացումը:
 - (6) Շահագրգիռ անձանց (սնանկության գործով կառավարիչներ, դատավորներ, փաստաբաններ և այլք) մասնակցությամբ որոշակի պարբերականությամբ աշխատանքային հանդիպում-քննարկումների իրականացումը:
 - (7) Սնանկության գործով կառավարիչների և դատավորների սնանկության ինստիտուտի զարգացած ավանդույթներ ունեցող պետությունների գործընկերների միջև փորձի փոխանակման նպատակով փոխադարձ այցերի կազմակերպումը:

Հանրային իրազեկման միջոցառումների վերաբերյալ.

4.54 Հանրության իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացումը ենթադրում է սնանկության ինստիտուտի վերաբերյալ տեղեկատվական տարատեսակ միջոցներով (տեսանյութեր, հեռուստահաղորդումներ, որոշակի գործընթացներում, օրինակ՝ վարկավորման ժամանակ, ծանուցման թերթիկների տրամադրում և այլն) պարբերաբար բնութ կրող իրազեկման աշխատանքների իրականացում, որն, ի թիվս այլնի, պետք է վերաբերի.

- սնանկության ինստիտուտի էությանը, այդ թվում՝ սնանկ ճանաչելու հիմքերին և կարգին, ինչպես նաև սնանկության վարույթի հետևանքով պարտավորություններից ազատման հնարավորություններին,
- կանխամտածված և կեղծ սնանկություններին, ինչպես նաև սնանկության ոլորտում հանցագործություն դիտարկվող այլ արարքներին,
- ֆինանսական առողջացման և մորատորիումի ինստիտուտներին,

-
- Ֆիզիկական անձի աշխատավարձի բռնագանձման հնարավորությանը,
 - սնանկության վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների շրջանակին և լիազորություններին:

Գործնական այլ խնդիրների վերաբերյալ

4.55 Սնանկության հետևանքների ժամանակին կիրառման, սնանկության գործի թափանցիկության, կառավարչի գործունեության արդյունավետության և հաշվետվողականության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ներդնել սնանկության վարույթների համար էլեկտրոնային արդարադատության հարթակը, որն, ի թիվս մի շարք գործառույթների.

- կապահովվի անձի սնանկության մասին տեղեկատվության փոխանակումը համապատասխան անձանց և մարմիններին, այդ թվում՝ մյուս դատարաններին և Կենտրոնական բանկին.
- սնանկության գործով կառավարիչը արագ և ամբողջական հասանելիություն կունենա անհրաժեշտ տեղեկատվական բազաներին, այդ թվում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տվյալներին:

4.56 Աշխատողների պահանջների բավարարման համար հրատապ է Հայաստանում համապատասխան երաշխիքային ֆոնդերի հիմնումը, ինչը բխում է նաև Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից:

4.57 Պարտապանի տրանսպորտային միջոցների հետախուզումը արդյունավետ դարձնելու նպատակով կարևոր է ճանապարհային ոստիկանությանը այնպիսի տեսախցիկներով ապահովումը, որոնք թույլ կտան երթևեկության ժամանակ նույնականացնել հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցը և համապատասխան տեղեկատվությունը փոխանցել իրավասու մարմնին:

4.58 Սնանկության ինստիտուտը անբարեխիղճ սուբյեկտների համար պարտավորություններից ազատման միջոց չձառայեցնելու համար անհրաժեշտ է խթանել կանխամտածված և կեղծ սնանկությունների բացահայտման դեպքերը, որտեղ զգալի դեր ունեն առաջին հերթին սնանկության գործով կառավարիչները:

5. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՌՈՂՋԱՑՈՒՄ/ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՄԱԿ ՄԱԻՀ սկզբունքներ

Կորպորատիվ վերակազմակերպմանը վերաբերող դրույթների նպատակներն են.

- ա) նպաստել սնանկության մասին օրենսդրության շրջանակում կորպորատիվ առողջացմանը՝ դրանով իսկ պահպանելով զբաղվածությունը և համապատասխան դեպքերում պաշտպանելով ներդրումները.
- բ) բացահայտել այն ձեռնարկությունները, որոնք ունակ են վերակազմակերպման.
- գ) առավելագույնի հասցնել գույքի արժեքը.
- դ) նպաստել վերակազմակերպման ծրագրի բանակցություններին և հաստատմանը և սահմանել հաստատման հետևանքները, ներառյալ, որ ծրագիրը պետք է պարտավորեցնի պարտապանին, պարտատերերին և շահագրգիռ այլ կողմերին,
- ե) անդրադառնալ վերակազմակերպման ծրագիրը չհաստատելու հետևանքներին կամ ապահովել ծրագրի հաստատումը, ներառյալ՝ որոշ հանգամանքներում լուծարման վարույթի փոխակերպվելը.
- զ) նախատեսել վերակազմակերպման ծրագրի իրականացումը և դրա իրականացման ծախսողման հետևանքները.³⁴

Ներածություն-ուղենիշային սկզբունքներ

5.1 Ոչ բոլոր պարտապանները, ովքեր ունեն ֆինանսական դժվարություններ, ի վերջո պետք է լուծարվեն: Սա հիմք ընդունելով՝ սնանկության արդյունավետ ռեժիմը պետք է ձգտի հավասարակշռություն հաստատել լուծարման միջոցով պարտքերի կարճաժամկետ հավաքագրման առավելությունների և վերակազմակերպման միջոցով բիզնեսի պահպանման միջև:

5.2 Չնայած վերը նշված երկու նպատակները երկար ժամանակ է, ինչ գոյություն ունեն՝ հարկ է նկատել, որ միայն վերջին շրջանում է, որ առավել կարևորվում է առողջացումը՝ որպես հիմնական նպատակ այն գործընթացներում, որտեղ այն կարող է իրագործվել: Հաշվի առնելով այս նպատակը՝ շատ երկրներ վերջին քսան և ավելի տարիների ընթացքում (մասնավորապես՝ 2008 թվականի համաշխարհային ճգնաժամից ի վեր) փոփոխել են ներպետական օրենքները, որպեսզի նախատեսեն անհրաժեշտ գործիքակազմ ապահովելու կենսունակ ձեռնարկատիրական բիզնեսի պատշաճ առողջացման հնարավորությունը սնանկության (սնանկության վտանգի) յուրաքանչյուր դեպքում: Այս դեպքում նպատակը ձեռնարկության արժեքը պահպանելու միջոցով այն վերակազմակերպելն է կենսունակ և վճարունակ ձեռնարկության, միևնույն

³⁴ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 233:

ժամանակ արդարացի վերաբերելով բոլոր շահագրգիռ կողմերին: Վերակազմակերպման գործընթացն իրապես հաջողություն կունենա միայն այն դեպքում, եթե պարտատերերի մեծամասնությունը օժանդակեն դրան:

5.3 Հաշվի առնելով վերը նշված դիտարկումները՝ կարևոր է, որ տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսվեն համապատասխան վերակազմակերպման և առողջացման գործընթացներ, որոնք հնարավորություն կտան կենսունակ այն բիզնեսներին, որոնք անվճարունակ են կամ առկա է սնանկության վտանգ, վերակազմակերպել իրենց միջոցները՝ տնտեսական արժեքը պահպանելու և հնարավորության դեպքում գործելու համար: Հավասարապես կարևոր է նաև, որ կորպորատիվ առողջացման օրենքը ներառի ժամանակակից գործիքակազմը, որն առկա է բազմաթիվ երկրներում ֆինանսական վատ վիճակը լիարժեք լուծելու և ընկերության գործընթացին վերադարձը թույլատրելու համար:

5.4 Հետևաբար կորպորատիվ առողջացման գործընթացները նախատեսված են պարտապանին սնանկությունից փրկելու համար՝ կամ կենսունակ բիզնեսի վերականգնման, կամ բիզնեսի վերակազմակերպման միջոցով, որպեսզի վերացվի անարդյունավետությունը: Վերջնական նպատակն է պարտապանին թույլ տալ հաղթահարել ֆինանսական դժվարությունները և վերսկսել կամ շարունակել իր բիզնեսի գոյությունը այս կամ այն ձևով:³⁵ Արդյունավետ կորպորատիվ առողջացման ռեժիմի տնտեսական և առևտրային առավելությունները կարող են ներառել պարտապանի ֆինանսական խնդիրների առավել արագ լուծումը, անշարժ գույքի ծախսերի նվազեցումը և պարտապանի երկարաժամկետ վերականգնում իրականացնելու հնարավորության ապահովումը:³⁶

5.5 Վերակազմակերպման ընթացակարգերը նախատեսված են նաև պարտապանին նման հնարավորություն ընձեռելիս միաժամանակ անդրադառնալ նաև վերջինիս ֆինանսական դիրքին և անհրաժեշտության դեպքում ապահովել հնարավորությունը վերակառուցել պարտքերը և առևտրային կապերը պարտատերերի հետ: Չնայած պարտատերերի հետ բանակցությունները կարող են ներառել նաև չմարված պարտքի կրճատումը, վերակազմակերպման առավելությունները ստացվում են, երբ պարտապանի բիզնեսի շարունակական գործունեության արդյունքում ստացված արժեքը մեծացնում են պարտատիրոջ վերականգնումների արժեքը:³⁷

5.6 Կարևոր է նաև, որ կորպորատիվ առողջացման ռեժիմը ունենա ճկունություն, որպեսզի անհրաժեշտության դեպքում վերակազմակերպումից անցում կատարվի

³⁵ Նույն տեղում, էջ 27:

³⁶ Ասիական զարգացման բանկ, վերը նշված՝ 7, էջ 3:

³⁷ ՄԱԿ ՄԱԻՀ, վերը նշված՝ 1, էջ 27:

լուծարման գործընթացին:³⁸ Կարևոր է նաև, որ լուծարման գործընթացում գտնվող ձեռնարկությունը հնարավորություն ունենա որոշակի հանգամանքներում անցելու վերակազմակերպման գործընթացի, որտեղ առկա են կորպորատիվ առողջացման հնարավորություններ: Երկու ուղղություններով էլ նման ճկունությունը ապահովում է, որ պարտապանի հանգամանքներին առավել հարմար եղանակը կարող է օգտագործվել և օգնել խուսափել սնանկության ռեժիմի շրջանակներում առաջարկվող պաշտպանության չարաշահումներից:

Քաղաքականության հիմնական ուղղությունները- վերահսկողություն

5.7 Կորպորատիվ առողջացման վարույթի ընթացքում ընկերության վերահսկողության իրականացման մասով, ընդհանուր առմամբ, առկա են չորս այլընտրանքային մոտեցումներ.

ա) **Պարտապանի տիրապետման վարույթ**, որտեղ ընկերության կառավարման մարմինները շարունակում են իրականացնել բիզնեսի կառավարումը մինչև առողջացման ծրագրի կազմումը, որը պետք է ներկայացվի պարտատերերին: Ծրագրի մշակման ընթացքում պարտապանը կարող է անկախ վերահսկողության օբյեկտ լինել կամ չլինել: Ճապոնիայում քաղաքացիական առողջացման ռեժիմը այս մոտեցումն է որդեգրել, որտեղ շատ դեպքերում պարտապանը դատարանի կամ նրա կողմից նշանակված կառավարչի վերահսկողության ներքո է.

բ) **Սնանկության գործով կառավարչի տիրապետման վարույթ**, երբ երրորդ կողմը՝ կառավարիչը, նշանակվում է ընկերությունը ղեկավարելու, առաջարկություն ներկայացնելու և վերակազմակերպումը հեշտացնելու համար: Առողջացման այս ձևը ընկած է ընդհանուր իրավունքի երկրների վարչական ռեժիմների հիմքում, ինչպիսիք են Ավստրալիան և Միացյալ Թագավորությունը, ինչպես նաև դատական կառավարման վարույթը Սինգապուրում և Մալազիայում: Ընկերության վերահսկողությունից տնօրեններին հեռացնելու դեպքում, մշտական դատական վերահսկողության կարիքը առավել քիչ է զգացվում: Այնուամենայնիվ, դատարանը որոշակի դերակատարում ունի մի շարք հարցերի և վեճերի լուծման դեպքերում, ինչպես նշված է ստորև:

գ) **Պարտատիրոջ կողմից վարույթի վարումը**, երբ ֆինանսական պարտատերերը (հիմնականում բանկերը կամ այլ վարկատուները) վերակառուցման գործընթացն իրականացնում են կամ ընկերության կողմից նշանակված երրորդ անձ կառավարչի օգնությամբ կամ ղեկավարությունը մնում է: Առողջացման այս ձևը ընկած է Հարավային Կորեայի վերակազմակերպումը խթանելու մասին ակտի հիմքում, և վերջերս ներառվել է Հնդկաստանի անվճարունակության և սնանկության օրենքներում:

³⁸ Նույն տեղում, էջ 11:

դ) **Վերահսկողությունը սնանկության գործով կառավարչի կողմից**, երբ ընկերության ղեկավարությունը մնում է և պատասխանատու է վարույթի ընթացքում բիզնեսի համար, սակայն ենթակա է սնանկության գործով կառավարչի հսկողությանը և պահանջվում է վերջինիս հավանությունը կորպորատիվ որոշ գործողություններ կատարելու համար:

5.8 Հաշվի առնելով Հայաստանի քաղաքացիական իրավունքի իրավական ավանդույթները, կարծում ենք, որ վերոնշյալ մոդելներից Հայաստանին «բ» կամ «դ» են համապատասխանում՝ հաշվի առնելով այն, ինչ ներկայացված է ստորև և ՄՓՄՁ-ների վերաբերյալ հաջորդ գլխում: Հետագա խորհրդակցությունների հարցն է՝ որտեղ ընկերության ղեկավարության/տնօրենների և սնանկության կառավարչի լիազորությունների միջև պետք է սահման անցնի՝ հավանաբար, առավել շատ հակված լինելով սնանկության կառավարչին, քան պարզապես վերահսկողությանը: Գործընթացի ամբողջականության նկատմամբ կարող է ավելի մեծ լինել վստահությունը, երբ անկախ սնանկության կառավարիչը, ում նկատմամբ կիրառվում է վերահսկողություն (ներառյալ կարգապահական խախտումները), վերահսկում է կորպորատիվ գործընթացը: Վերահսկողության միջավայրը նաև կապահովի, որ վերջինս ունենա անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ՝ գործընթացին բնորոշ ընթացակարգերը պատշաճ իրականացնելու համար:

5.9 Այս չորս տարբերակների միջև ընտրությունը պետք է դիտարկվի նաև ռազմավարության հաջորդ ընտրության համատեքստում, այն է՝ դատարանի ներգրավվածությունը առողջացման գործընթացում: Որքան քիչ է դատարանի ներգրավվածությունը, այնքան մեծ է փորձառու (և վերահսկվող) սնանկության կառավարչի՝ ձեռնարկության գործունեության վրա վերահսկողության մակարդակի կամ ազդեցության անհրաժեշտությունը՝ ապահովելու, որ սնանկության գործընթացներն արդյունավետ իրականացվեն և պարտապանի կողմից չհարաշահվեն:

Քաղաքականության հիմնական ուղղությունները- դատարանի դերը

5.10 Կորպորատիվ առողջացման ընթացակարգերը կարող են նաև լինել կամ որպես դատարանում վերակազմակերպման վարույթներ, երբ գործը հարուցվել է դատարանում և վերահսկվում է դատարանի կողմից, կամ էլ որպես արտադատական գործընթաց, երբ կանոններով սահմանված է ընթացակարգ՝ պարտատերերի հետ հարաբերությունները հեշտացնելու համար առանց դատարանի ներգրավվման անհրաժեշտության, չնայած որ մշտապես դատարանը կարող է գործ հարուցել:

5.11 Հաճախ երկրները որդեգրում են առողջացման գործընթացի առնվազն երկու ձև, որոնք տարբեր մակարդակներում միավորում են վերը նշված տարրերը:

Դատարանից դուրս ընթացակարգերի հիմնական առավելությունները նրանք են, որ կարող են ավելի արագ և էժան լինել, քան դատական կարգով իրականացվող ընթացակարգերը: Այնուամենայնիվ, արտադատական ընթացակարգերը կարող է նպատակահարմար չլինել բարդ, ծախսատար և վիճահարույց դատավարություններում, որի դեպքում դատական աջակցությունն ու անկախ վերահսկողությունը կարող են արժեքավոր լինել: Հետևաբար, բազմաթիվ իրավագործությունների կողմից ընդունված ընդհանուր մոտեցումն է՝ կիրառել թե դատարանների կողմից վերահսկվող, թե դատարանից դուրս իրականացվող վերակազմակերպման ընթացակարգերի հնարավորությունները:

5.12 Այստեղ պետք է հղում կատարել Գլուխ 9-ին, որը վերաբերում է դատարանի դերին սնանկության վարույթը վերահսկելու հարցում: Մասնավորապես, այդ կետերը բարձրացնում են ռազմավարական ընտրությունը՝ դատարանի կողմից գործընթացների տարբեր փուլերի մեծ մասի դեպքում վերջնական հաստատման և վերահսկողության իրականացումը (ինչպես ներկայումս է), կամ որպես այլընտրանք՝ տարբեր գործընթացների մասին կանոնադրություն և ապահովել գործողությունների իրականացումը կանոնադրության դրույթներին համապատասխան, ընդ որում՝ այս դեպքում դատարանի դերը կայանում է նրանում, որ քննարկվեն բարդ հարցեր և վեճեր, որոնք ներկայացվել են քննարկման նախքան դա: Այս այլընտրանքային մոդելի հիման վրա դատարանը կոչված է աջակցել, երբ անհրաժեշտ է, սակայն որակավորված և վերահսկվող սնանկության կառավարչի հսկողության տակ գտնվող գործընթացը ընթանում է հիմնականում առանց դատարանի միջամտության (Դատարանն, այնուամենայնիվ, միշտ հասանելի է և ցանկացած պահի գործընթացի շահագրգիռ կողմ կարող է ցանկացած վեճ կամ հարց ներկայացնել դատարան՝ վճիռ կայացնելու համար):

5.13 Այս մոտեցումը հատկապես առավելություն ունի, երբ ժամկետները սեղմ են և ընկերությունը առողջացնելու հաջողությունը կախված է արագ գործողություններից: Մենք կցանկակայինք լրացուցիչ ուսումնասիրել կորպորատիվ առողջացման գործընթացքում այս այլընտրանքային մոտեցման առավելություններն ու թերությունները Արդարադատության նախարարության հետ և այն հարցը, թե արդյոք այն քննարկման արժանի է: Այնուամենայնիվ պետք է նկատել, որ նման մոտեցման կենսունակությունը պահանջում է հմուտ և լավ վերահսկվող սնանկության գործով կառավարիչ:

Ընթացակարգի մեկնարկ- պարզություն և ծախսարդյունավետություն

5.14 Առողջացման գործընթացի սկիզբը պետք է լինի պարզ և ծախսարդյունավետ՝ խթանելու դրա ժամանակին կիրառումը: Առաջարկում ենք, որ դիմելու գործընթացը լինի ամբողջովին վարչական և բաղկացած լինի առնվազն.

ա) համապատասխան մարմին դիմում ներկայացնելը՝ կորպորատիվ առողջացման վարույթ սկսելու համար.

բ) ֆինանսական հաշվետվությունների և պարտատերերի ցուցակի ներկայացում՝ նշելով յուրաքանչյուրի անունը, հասցեն և պարտքերի մոտավոր չափը.

գ) անկախ սնանկության կառավարչի կողմից ստորագրված համաձայնություն, որը հաստատում է, որ նրանք ուսումնասիրել են պարտապանի տրամադրած հաշվետվությունները և համոզված են, որ հարուցման պատճառներն ու պարտատերերի ցուցակը ճշտորոշ են: Սնանկության գործով կառավարիչը պետք է իրականացնի պարտապանի վիճակի ողջամիտ ուսումնասիրություն, որպեսզի համոզվի տրամադրված տեղեկատվության ճշտության և վերականգման մասին դիմումի հիմնավորվածության մեջ:

5.15 Դիմում ներկայացնելու իրավունքը ևս պետք է ենթարկվի սահմանափակումների, որպեսզի կանխվի գործընթացի չարաշահումները, ներառյալ՝ դիմումների թվի սահմանափակումները, որոնք կարող են ներկայացվել որոշակի ժամանակահատվածում:

Ընթացակարգի մեկնարկ- Ու՛մ պետք է թույլատրվի վարույթ հարուցել.

5.16 Մենք հաստատապես առաջարկում ենք, որ Հայաստանի կորպորատիվ առողջացման գործընթացը հնարավոր լինի միայն պարտապանի նախաձեռնությամբ սկսել: Նշված առաջարկությունը պայմանավորված է մի քանի պատճառներով.

ա) Կորպորատիվ առողջացման նպատակն է վերականգնել ընկերությունը, որպեսզի այն կարողանա շարունակել առևտուրը վճարունակ հիմունքներով, և այդ նպատակին աջակցում է մորատորիումը, որը կանխում է պարտքերի վճարումը: Այնուամենայնիվ, չվճարված պարտատերերը միջոցներ են ձեռնարկում՝ ձգտելով մարել իրենց պարտքերը: Այդ նպատակը որպես առողջացման գործընթացի մաս ծառայելուն թույլատրող համակարգի առկայությունը նշանակում է շեղվել իրական նպատակից և առաք քաշել այլ նկատառումներ, բացի բիզնեսի առողջացման հնարավորություններից:

բ) Պարտատիրոջ համար անսովոր կլիներ ունենալ բավարար տեղեկատվություն այն տեսակետը ձևավորելու համար, որ կորպորատիվ առողջացման գործընթացն ընկերությանը բնորոշ պայմաններում իրագործելի է: Պարտատերը, ով վերջնականորեն անվճարունակ ընկերության համար նախաձեռնում է առողջացման գործընթաց լուծարման գործընթացի փոխարեն, հանգեցնում է ռեսուրսները վատնելու և, ի վերջո, նվազեցնում է վերադարձը պարտատերերին:

Ընթացակարգի մեկնարկ- Վճարունակություն, թե՛ հասարակ պարտքեր

5.17 Գործընթացի մեկնարկի հաջորդ պայմանը որակավորման պայմանն է: Շատ երկրներում (թեև ոչ բոլոր) պահանջն այն է, որ տնօրենները համարում են, որ ընկերությունն անվճարունակ է, կամ հավանական է՝ ապագայում անվճարունակ կդառնա, որտեղ սնանկություն նշանակում է՝ չկարողանալ վճարել այն պարտքերը, որոնց վճարման ժամկետը լրացել է:

5.18 Առաջարկվում է, որ դրամական միջոցների սնանկության ստուգումը լինի որակավորման պայմանը: Նշվածը կրկին այն պատճառով, որ կորպորատիվ առողջացման գործընթացի հիմնական նպատակը ընկերության վճարունակության վերականգնումն է, որպեսզի կարողանա շարունակել իր բիզնեսը: Սա է նպատակը և որակավորման պայմանը պետք է համապատասխանի այն նպատակին, որը պետք է ձեռք բերվի գործընթացում:

Առողջացման ծրագրի խախտում

5.19 Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության ընթացքում բարձրացված խնդիրը վերակազմակերպման ծրագրերի իրականացումն է, երբ խախտվում են ծրագրի պայմանները, օրինակ՝ պարտատերերին վճարում կատարելը: Սնանկության մասին օրենքը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին՝ վերակազմակերպման ծրագրերի բովանդակության վերաբերյալ որոշ պահանջներ ունենալու համար, և այդ պահանջներից մեկը պետք է լինի այն, որ ծրագրի պայմանների ցանկացած էական խախտում պետք է պահանջի կամ դատարանի կողմից վերանայում՝ ծրագրի շարունակական գործողությունը պարզելու համար, կամ պարտատերերի հետագա ժողովի հրավիրում՝ որոշելու՝ ծրագիրը փոփոխել, թե ընկերությունը տեղափոխել լուծարման գործընթաց: Այս հարցերը չպետք է թողնվեն հայեցողական որոշումների կայացմանը, բացառությամբ նրա, ինչը կարող է գնահատվել որպես ծրագրի պայմանների աննշան կամ ոչ էական խախտում (օրինակ՝ վճարման ենթակա գումարի փոքր-չափով ուշացում): Նույնիսկ այս դեպքում, ինչպես սնանկության մասին օրենքի մյուս բոլոր տարրերի դեպքում, յուրաքանչյուր պարտատեր կամ այլ շահագրգիռ կողմ, որը տուժել է սնանկության գործընթացի ընթացքում կայացրած որոշումներից, պետք է իրավունք ունենա բողոքարկել դատարան՝ որոշելու, թե արդյոք գործընթացն ընթանում է իրավական դաշտին համապատասխան:

Առողջացման ծրագրի հաստատումը

5.20 Որպեսզի առողջացման ծրագիրը իրականացվի, այն պետք է հաստատվի պարտատերերի կողմից, որոնց իրավունքների վրա այն կանդրադառնա:

5.21 Նախքան ծրագիր(եր)ը պարտատերերին ներկայացնելը, սնանկության կառավարչից պահանջվում է ձեռնամուխ լինել ծրագրի քննարկմանը, որպեսզի որոշվի՝ արդյոք այն պետք է առաջարկվի պարտատերերին: Դրանով պայմանավորված, սնանկության կառավարիչը պարտավոր է ողջամտորեն ուսումնասիրել առաջարկվող ծրագիրը, որպեսզի կարծիք ձևավորի հետևյալի վերաբերյալ.

ա) հավանականությունը, որ ծրագիրը կարող է իրականացվել.

բ) պարտատերերը ծրագրի շրջանակներում առավել լավ արդյունք կստանան, քան լուծարման դեպքում.

գ) արդյոք ծրագիրը պետք է առաջարկվի պարտատերերին:

5.22 Նախքան քվեարկության անցկացումը, սնանկության կառավարչից պահանջվում է պարտատերերին գրավոր առաջարկություն ներկայացնել՝ նշելով վերոհիշյալ հարցերը յուրաքանչյուրի վերաբերյալ պատճառաբանությունները:

5.23 Կորպորատիվ առողջացման ծրագրի համար ամենատարածված հաստատման մեխանիզմը առողջացման ծրագրի քննարկման նպատակով հրավիրված պարտատերերի ժողովում քվեարկությունն է:

5.24 Պարտատերերի անհրաժեշտ մեծամասնության կողմից հաստատված վերակազմակերպման ծրագիրը պարտադիր է պարտապանի, պարտատերերի և բիզնեսով շահագրգռված ցանկացած այլ կողմերի համար, բացառությամբ ապահովված ցանկացած պարտատիրոջ: Ապահովված ցանկացած պարտատիրոջ դիրքորոշում ինքնին կապված է կարևոր սկզբունքային հարցերի հետ, որոնք պետք է քննարկվեն հաջորդ կետերում:

5.25 Շատ երկրներ նախատեսում են դատարանի կողմից ծրագրի վերջնական հաստատում ևս: Առաջարկվում է, որ դատարանի հաստատումը չլինի անհրաժեշտ պահանջ՝ ծրագրի իրականացման համար: Այնուամենայնիվ գործընթացի չարաշահունից խուսափելու համար տուժող կողմը պետք է իրավունք ունենա վիճարկել ծրագրի հաստատումը և դրա բովանդակությունը դատարանի կողմից՝ պարտատերերի ժողովի կողմից հաստատվելուց հետո սեղմ ժամկետում: Տուժող կողմի սահմանումը պետք է լայն լինի: Ծրագիրը պետք է հնարավոր լինի վիճարկել դատարանում, եթե այն հաստատվել է միայն ինսայդերների քվեարկության արդյունքում:

Ապահովված պարտավորների կարգավիճակը

5.26 Շահագրգիռ կողմերի հետ խոհրդակցությունների գործընթացի շրջանակներում ստացված կարծիքների մեջ նշվում է, որ ընթացիկ ընթացակարգերը թույլ չէին տալիս ապահովված պարտատերերին քվեարկել,

բայց այնուամենայնիվ այլ պարտատերերին թույլ էին տալիս վերակառուցել ապահովված պարտատերերը՝ առանց ապահովված պարտատերերի համաձայնության:

5.27 Սա խիստ խնդրահարույց է: Եթե այստեղ որևէ փոփոխություն չկատարվի, նշվածը կշարունակի բացասաբար ազդել բանկերի և այլ վարկատուների՝ վարկեր տրամադրելու պատրաստակամության վրա՝ նույնիսկ ապահովված հիմքերով: Նշված կարևոր դիտարկումը լուծելու համար հարկ է անդրադառնալ երկու առանձին խնդիրների: Առաջինն այն է, թե արդյոք կթույլատրվի ապահովված պարտատերերին քվեարկել առողջացման ծրագրի վերաբերյալ: Երկրորդ՝ որոշելու աստիճանը, թե առհասարակ առողջացման ծրագիրը կարող է ազդել ապահովված պարտատերերի կարգավիճակի վրա:

5.28 Քվեարկության գործընթացի տեսանկյունից, առկա են երեք այլընտրանքային լուծումներ՝ ապահովված պարտատերերին բացառելը, ապահովված պարտատերերին ներառելը պարտքի ամբողջ չափով կամ ապահովված պարտատիրոջը ներառելը միայն չապահովված մասով: Այս այլընտրանքների միջև ընտրությունը հիմնականում պետք է առաջանորդվի երկրորդ հարցին պատասխանելու միջոցով, այն է՝ վերակառուցման ծրագրի ազդեցությունը ապահովված պարտքի և ապահովված պարտատիրոջ կարգավիճակի վրա: Այս հարցի վերաբերյալ որոշ երկրներ նախատեսում են, որ ծրագիրը չի կարող ազդել ապահովված պարտքի կարգավիճակի վրա, իսկ մյուսները հնարավոր են գտնում ապահովված պարտքի վրա ազդեցությունը, բայց միայն երկու հանգամանքներում: Առաջինը՝ եթե ապահովված պարտատերը կողմ քվեարկի ծրագրին: Երկրորդը՝ եթե դատարանը հաստատում է ծրագիրը, բայց միայն այն դեպքում, երբ օրենքը նախատեսում է նաև, որ դատարանը չպետք է հաստատի ծրագիրը, եթե ապահովված պարտատիրոջ շահերը համարժեք պաշտպանված չեն: Համարժեք պաշտպանությունը նշանակում է, որ չնայած ծրագիրը տեսականորեն ազդում է ապահովված պարտատիրոջ ապահովված իրավունքների վրա, քանի որ ապահովված պարտատերը գործնականում առավել վատ կարգավիճակում չէ այդ փոփոխության պատճառով (Օրինակ՝ ծրագրի շրջանակներում ապահովված պարտատիրոջ օգուտները հավասար են կամ գերազանցում են ապահովված մասի արժեքը, կամ եթե ապահովված մասի արժեքը բարձր է և ծրագիրն ազդում է միայն այդ ավել հատվածի վրա, որպեսզի ապահովված պարտատերը, փաստացի, ամբողջությամբ ապահովված լինի):

5.29 Առաջարկվում է ընդունել երկրորդ տարբերակը, այն է՝ թույլ տալ վերակազմակերպման ծրագրին ազդել ապահովված պարտքի վրա, բայց միայն այն դեպքում եթե ապահովված պարտատերը կողմ է քվեարկել այդ ծրագրին կամ դատարանը հաստատում է ծրագիրը՝ ղեկավարվելով այնպիսի ապացույցներով, որ ապահովված պարտատիրոջ ապահովված իրավունքները

համարժեքորեն պաշտպանված են: Հետևելով այս մոտեցմանը՝ գտնում ենք, որ ապահովված պարտատիրոջը պետք է վերակազմակերպման ծրագրի քվեարկությանը մասնակցելու իրավունք տրվի՝ հաշվի առնելով, որ ապահովված պարտատերը ծրագրով պարտավորված կլինի միայն այն դեպքում, եթե դրան կողմ քվեարկեն կամ դատարանը որոշում կայացնի:

5.30 Նշված առաջարկությունից հետևում է, որ ապահովված պարտատիրոջ համաձայնության պահանջ չպետք է լինի, որպեսզի ծրագիրը արդյունավետ դառնա: Ապահովված պարտատիրոջ կարգավիճակի պաշտպանությունը բխում է միայն ծրագրով պարտավորված լինելով միայն այն դեպքում, երբ հստակ համաձայություն է տվել ծրագրի օգտին կողմ քվեարկելով, կամ եթե դատարանը այդպիսի որոշում է կայացնում՝ հիմք ընդունելով, որ դատարանը համոզված է, որ ապահովված պարտատիրոջ կարգավիճակը համարժեքորեն պաշտպանված է: Սա պետք է ապահովի բավարար պաշտպանվածություն ապահովված պարտատիրոջ կարգավիճակի համար, և հակառակ դեպքում թույլ կտա ծրագրերն իրականացնել նույնիսկ առանց ապահովված պարտատիրոջ ակտիվ աջակցության:

5.30 Ռազմավարական այս զեկույցի ավարտին նշվել է վերանայված օրենսդրության մեջ անհամապատասխանության հետ կապված բոլոր ոլորտների հստակեցման կարևորությունը, որոնք հստակ լուծված չեն: Այս առաջարկությունը տեղին է ապահովված պարտատերերի դեպքում, քանի որ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների ընթացքում ստացված արձագանքները ցույց են տվել, որ սնանկության գործընթացում ապահովված իրավունքի առարկաների հետ կապված շատ հարցեր ներկայումս լուծված չեն օրենքում: Նշված խնդրին հարկ է անդրադարձ կատարել:

Ժամկետները

5.31 Վերակազմակերպման վարույթի նպատակը բիզնեսը փրկելը, ներդրումները պաշտպանելն ու զբաղվածությունը պահպանելն է, ուստի բոլոր դեպքերում ընթացակարգը պետք է իրականացվի արդյունավետ և ժամանակին: Առաջարկում ենք ծրագրերի պատրաստման և հաստատման համար սահմանել ժամկետ, ներառյալ.

ա) եռամսյա ժամկետ, որի ընթացքում պետք է նախապատրաստվի և քննարկվի վերակազմակերպման ծրագիրը՝ հնարավորություն ունենալով դիմել դատարան այս ժամկետը երկարաձգելու ոչ ավելի քան ինն ամսով այն դեպքում, երբ սնանկությունը շատ մեծ է կամ բարդ.

բ) երբ ծրագիրը հաստատվում և մուտքագրվում է, ծրագրի կատարման վերջնաժամկետը, ծրագրի կատարման վերջնաժամկետը պարտատերերի կողմից հաստատման օրվանից ոչ ավելի, քան երեք տարի (կարող է այս

ժամկետի երկարաձգումը թույլատրվել, եթե դատարանը հավաստիանա այդ լրացուցիչ ժամանակահատվածի անհրաժեշտության մասին):

5.32 Խորհրդակցությունների գործընթացում մտահոգություններ են ներկայացվել այն խնդիրների վերաբերյալ, որոնք կապված են օրենքով վերակազմակերպման ծրագրի առավելագույն ժամկետ սահմանելու հետ: Այս խնդրի լուծման միջոցն է օրենսդրությամբ նախատեսել առավելագույն ժամկետը գերազանցող ժամանակահատված, երբ դատարանը նման որոշում կայացնի: Դատարանի՝ նման որոշում կայացնելու իրավասությունը կսահմանափակվի անսովոր կամ արտառոց հանգամանքներով, ուստի այն չի դիտարկվում որպես ընդհանուր որոշում, որը պետք է կայացնի դատարանը:

5.33 Արդարադատության նախարարության կողմից արտահայտվել է կարծիք, ըստ որի՝ ֆինանսական առողջացման երկար ժամկետները չեն ապահովում այս ինստիտուտի գրավչությունը: Նշվել է, որ առավել սեղմ ժամկետների սահմանումը կարող է խթան լինել նաև հենց ապահովված պարտատերերի համար: Այնուամենայնիվ օրենսդրորեն ամրագրված առավելագույն ժամկետների կրճատումը կարող է խնդրահարույց լինել պարտապան իրավաբանական անձանց և վերջիններիս կառավարիչների համար, որոնց հարկ է դիմել հստակ ծրագիր կազմելու համար և որի դեպքում ապահովված պարտատիրոջ մասնակցությունը ևս պարտադիր է: Անհրաժեշտ է հավասարակշռության հասնել մի կողմից կարճ վերջնաժամկետների, իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտության դեպքում ֆինանսական առողջացման առավել երկար ժամկետների ապահովման միջև:

Վերակազմակերպմանն ուղղված լավագույն փորձի գործիքակազմ

5.34 Բարեփոխումների շրջանակներում պետք է հաշվի առնել այլ երկրներում կիրառվող լավագույն փորձի գործիքակազմի կիրառումը: Դրանք ներառում են անեկամտաբեր պայմանագրեր լուծելու և այլ տեսակետ ունեցող պարտատերերին խմբավորելու առանձին դասերում, որոնք դուրս են: Առկա են միջազգային նախադեպեր, ներառյալ վերջերս ներառված դրույթները Միացյալ Թագավորության և Սինգապուրի սնանկության մասին օրենքներում, որոնք պետք է դիտարկվեն վերանայվող առողջացման գործընթացում ներառելու համար, որպեսզի այն դառնա կորպորատիվ առողջացման արդյունավետ գործընթաց:

ՄՓՄՁ սնանկություն

5.35 Առաջարկվում է նաև, որ եթե որևէ ընկերություն համապատասխանում է ՄՓՄՁ պահանջներին, վերջինիս պետք է հասանելի լինեն կորպորատիվ

առողջացման առավել արագ, էժան և ավելի հստակ գործընթացներ, որոնք շարադրված են 6-րդ գլխում:

Հիմնական առաջարկություններ

Առաջարկվում է ներդնել նոր (վերանայված) կորպորատիվ առողջացման գործընթաց, որը պետք է ներառի հետևյալ բնութագրիչները.

- Միայն պարտապանը կարող է նախաձեռնել առողջացման գործընթաց.
- Առողջացման գործընթաց սկսելու համար պարտապանը պետք է կամ չկարողանա, կամ ապագայում բացառվի վճարել այն պարտքերը, որոնք պետք է մարվեն.
- Պետք է հաշվի առնել, թե արդյոք դատարանի դերը պետք է նվազեցվի, որպեսզի այն կարողանա հիմնականում կենտրոնանալ վեճերի և առաջացող այլ բարդ խնդիրների վրա.
- Վերակազմակերպման ծրագրի հաստատման գործընթացը և ծրագրի իրականացման ժամկետը պետք է սահմանվեն խստորեն, բայց դատարանը պետք է հնարավարություն ունենա համապատասխան հանգամանքներում այդ ժամկետները երկարաձգելու.
- Մի շարք պահանջներ են առկա, որոնք պետք է ներառվեն վերակազմակերպման ծրագրի մեջ, ներառյալ՝ հետևանքները, երբ ծրագրի պայմանները խախտվում են.
- Արդյունավետ վերակազմակերպման լավագույն փորձի գործիքները ներառել առողջացման վերանայված գործընթացում, որպեսզի դրանք արտացոլեն միջազգային լավագույն փորձը.
- ՄՓՄՁ ընկերությունների համար հասանելի է Գլուխ 6-ում շարադրված ՄՓՄՁ հատուկ առողջացման գործընթացը:

6. ՄՓՄՁ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԼՈՒԾԱՐՈՒՄՆԵՐ

Հիմնական սկզբունքը

ՄՓՄՁ վերակազմակերպման և սնանկության ընթացակարգերը պետք է ապահովեն պարզ, ճկուն և ծախսերի առումով արդյունավետ համակարգ՝ ներառյալ՝

- ա) առողջացման ընթացակարգ կենսունակ ՄՓՄՁ-ների համար,
- բ) ոչ կենսունակ ՄՓՄՁ-ների լուծարում և գույքի բռնագանձում, և
- գ) ազնիվ ձեռնարկատերերի համար պարտավորություններից ազատում և «թարմ մեկնարկի» ապահովում³⁹:

ՄՓՄՁ-ների համար առանձնահատուկ սնանկության կարևորությունը

6.1 Միկրո, փոքր և միջին ձեռնարկությունները (ՄՓՄՁ), հատկապես զարգացող տնտեսություններում, կազմում են ընդհանուր բիզնեսի մեծամասնությունը, և հանդիսանում են զբաղվածության, տնտեսական աճի և զարգացման շարժիչ ուժերը: Ընդհանուր առմամբ ՄՓՄՁ-ները կազմում են բիզնեսի 90%-ը⁴⁰, ապահովում են մասնավոր ոլորտի զբաղվածության 60%-ը⁴¹ և հանդիսանում են մասնավոր հատվածի 52% ավելացված արժեքի վճարող⁴²:

6.2 ՄՓՄՁ-ներն իրենց փոքր չափի պատճառով ունեն միջտ ավելի քիչ կապիտալ, վարկեր ստանալու ավելի մեծ դժվարություններ և ֆինանսական մարտահրավերները լուծելու ավելի քիչ ունակություն⁴³: Նրանց գործունեության ուղղությունները չունեն բազմազանություն և, հետևաբար, նրանք ավելի խոցելի

³⁹ Wolfgang Bergthaler, Kenneth Kang, Yan Liu, and Dermot Monaghan, March 2015, "IMF Staff Discussion Note: Tackling Small and Medium Sized Enterprise Problem Loans in Europe", International Monetary Fund, <<https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2015/sdn1504.pdf>> at pg 20 (accessed 16 January 2017).

⁴⁰ Global Partnership for Financial Inclusion, "G20 Action Plan on SME Financing - Joint Action Plan of G20 GDFI SME Finance Sub-Group and IIFG", <<http://www.gpfi.org/sites/default/files/documents/01-G20%20Joint%20Action%20Plan%20on%20SME%20Financing.pdf>> at pg 1 (accessed 16 January 2017).

⁴¹Edinburgh Group "Growing the global economy through SME" <http://www.edinburgh-group.org/media/2776/edinburgh_group_research_-_growing_the_global_economy_through_smes.pdf> at pg 7 (accessed 16 January 2017).

⁴² Ibid.

⁴³ Khrystyna Kushnir, Melina Laura Mirmulstein and Rita Ramalho, "Micro, Small and Medium Enterprises Around the World: How Many Are There and What Affects the Count?" 2010, The World Bank / IFC, <<http://www.ifc.org/wps/wcm/connect/9ae1dd80495860d6a482b519583b6d16/MSME-CI-AnalysisNote.pdf?MOD=AJPERES>> (accessed 16 January 2017).

են ֆինանսական ցնցումների համար⁴⁴: Եթե ՄՓՄՁ-ն բախվում է ֆինանսական դժվարությունների, այդ ձեռնարկությունների՝ վարկային կամ այլընտրանքային ֆինանսավորմանը, ինչպես նաև իրավաբանական և ֆինանսական խորհրդատվությանը հասանելիությունը ավելի քիչ հավանական է, և արդյունքում՝ ՄՓՄՁ-ները կազմում են մասնավոր հատվածի սնանկության զգալի մասը:

6.3 ՄՓՄՁ-ների համար բացահայտված հիմնական դժվարություններից է առկա կորպորատիվ և սնանկության ընթացակարգերի անկարողությունը լուծելու փոքր ձեռնարկությունների հատուկ կարիքները⁴⁵: Սնանկության վերաբերյալ օրենքները հաճախ մշակվում են ավելի մեծ կազմակերպությունների գործառնությունների մոդելը նկատի ունենալով՝ այդպիսով չհամապատասխանելով ՄՓՄՁ-ների առանձնահատկություններին և հատուկ կարիքներին: Մատչելիության սահմանափակումները, բարդ և ծախսատար ընթացակարգերը, ինչպես նաև վարույթի հարուցումից հետո ղեկավարության կողմից վերահսկողության պակասը կարող են հանգեցնել նրան, որ ՄՓՄՁ-ները խուսափեն սնանկության ընթացակարգերից, և պարտատերերը կարող են չունենալ վստահություն ընթացակարգի նկատմամբ՝ իրենց շահերը պատշաճ կերպով պաշտպանելու առումով:

6.4 ՄՓՄՁ-ներին և նրանց պարտատերերին կարող է վանել նաև վարույթը ֆինանսավորելու համար միջոցների սղությունը⁴⁶:

6.5 2017 թվականի մայիսի 4-ին Համաշխարհային բանկը հրապարակեց ՄՓՄՁ-ների առողջացման վերաբերյալ իր գեկույցը, որում շեշտվում է այս ոլորտի վերաբերյալ ծագող խնդիրների լուծման կարևորությունը:

«Մարտահրավերների համադրությունը, որոնց սովորաբար բախվում են ՄՓՄՁ-ները, դժվարացնում է ՄՓՄՁ-ների կողմից սնանկության ընթացակարգերի համար սովորաբար պահանջվող բարդությունների կառավարումը: Թերևս զարմանալի չէ, որ ՄՓՄՁ-ներն առավել հաճախ են անցնում սնանկության վարույթ: Առաջնային է ունենալ արդյունավետ, արագ սնանկության համակարգ, որը ունակ է առողջացնելու ՄՓՄՁ-ներին կամ

⁴⁴ Organisation for Economic Co-operation and Development, "The Impact of the Global Crisis on SME and Entrepreneurship Financing and Policy Responses" 2009, <<http://www.oecd.org/cfe/smes/43183090.pdf>> at pg 6 (accessed 17 January 2017).

⁴⁵ International Finance Corporation, "Scaling-up SME Access to Financial Services in the Developing World" (2010) <<http://www.ifc.org/wps/wcm/connect/bd1b060049585ef29e5abf19583b6d16/ScalingUp.pdf?MOD=AJPERE> S> (accessed 17 January 2017).

⁴⁶ UNCITRAL, above n 1 at pg 57.

արագորեն վերաբաշխելու նրանց արտադրական ակտիվները առավել արդյունավետ գործունեության համար»⁴⁷:

6.6 Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ սնանկության մասին ժամանակակից օրենքների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրա շրջանակներում մշակվում է ՄՓՄՁ-ների կարիքներին հարմարեցված սնանկության գործընթաց: Նշվածը հետապնդում է երեք հիմնական նպատակ, մասնավորապես՝

- ա. Վերակազմակերպման հարմարեցված գործընթաց ֆինանսապես վատ վիճակում գտնվող, բայց կենսունակ ՄՓՄՁ-ների համար,
- բ. Լուծարման արագ և արդյունավետ գործընթացի առկայություն, եթե ՄՓՄՁ-ն կենսունակ չէ, և
- գ. Բարեխիղճ ձեռնարկատերերի համար պարտավորություններից ազատելու և նոր մեկնարկի հնարավորություն:

ՄՓՄՁ հատուկ ռեժիմի առավել ընդարձակ հնարավորությունները

6.7 Գործունակ սնանկության ռեժիմը վարկերի հասանելիության գործում վճռական դեր է կատարում, քանի որ այն նպաստում է կանխատեսելի և որոշակի գործարար միջավայրի ստեղծմանը, որն իր հերթին էլ նպաստում է վարկի հասանելիությանը: Ֆինանսների հասանելիությունը լուրջ խնդիր է, որին ՄՓՄՁ-ները որպես կանոն բախվում են: Ըստ հաշվարկների՝ ՄՓՄՁ-ների կեսից մինչև երկու երրորդը պատշաճ հասնալիություն չունեն ֆինանսներին, իսկ հասանելիություն չունեցող ոչ ֆորմալ ՄՓՄՁ-ների թիվը հավանաբար ավելի շատ է: Բացի այդ, ըստ գնահատականների՝ փոքր և միջին ձեռնարկությունները ողջ աշխարհում բախվում են վարկային դեֆիցիտին՝ 2,1-ից մինչև 2,6 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով: Ավելին, ըստ գնահատականների՝ ՄՓՄՁ-ների 90%-ը պաշտոնապես մանր ձեռնարկություններն են կամ ոչ ֆորմալ ՄՓՄՁ-ները: Նշված գնահատականների պատկերը ցույց է տալիս այն ֆինանսական դժվարությունները, որոնց բախվում են տնտեսության ձևական շրջանակներից դուրս աշխատող ՄՓՄՁ-ները: Տնտեսության զարգացմանը խթանելու նպատակով խիստ կարևոր է ապահովել ՄՓՄՁ-ների հասանելիությունը վարկերին, ինչը անհրաժեշտ է վերջիններիս ընդլայնման համար: Ֆինանսների նկատմամբ հասանելիության ընդարձակումը հարաբերակցվում է ՄՓՄՁ քանակի ավելացման հետ, որոնք աշխատում են տնտեսության շրջանակներում՝ օգտակար լինելով բոլոր ներգրավված կողմերի համար:

6.8 Բազմաթիվ ՄՓՄՁ-ների ոչ ֆորմալ բնույթը ևս մեկ խնդիր է: Կատարված գնահատումների համաձայն՝ զարգացող տնտեսություններով երկրներում օրենսդրության շրջանակներում կարգավորվող տնտեսությունից դուրս գործող

⁴⁷ The World Bank, "Report on the Treatment of MSME Insolvency", 2017 at pages 1-2

ՄՓՄՁ-ները ապահովում են ընդհանուր աշխատատեղերի 48%-ը, սակայն կազմում են ՀՆԱ-ի միայն 37%: ՄՓՄՁ-ն տնտեսական գործունեության կարևոր մասնակից է, հետևաբար՝ ռեժիմը, որը նպաստում է առանձին ՄՓՄՁ-ների աճին և պաշտոնականացնում է վերջիններիս գործունեությունը, օժտված է աշխատատեղերի ստեղծման, հարստության ձևավորման, այն պետության հարկային հիմքը ընդլայնելու ներուժով, որի շրջանակներում աշխատում են նշված ՄՓՄՁ-ները: Հետևաբար, ՄՓՄՁ-ները պաշտոնական տնտեսական դաշտ բերելը բոլոր կողմերին զգալի առավելություններ է տալիս:

6.9 Ինպես նշել է Համաշխարհային բանկը.

«Սնանկության հին օրենսդրությունը առավել արդյունավետ ռեժիմով փոխարինելու դեպքում պարտատերերի վստահությունը աճում է, քանի որ սնանկության բարելավված ընթացակարգը վարկատուների համար ապահովում է առավել որոշակիություն և կանխատեսելիություն ժամկետանց վարկերի վերադարձման գործում: Սա մեծացնում է տնտեսության մեջ ներդրման ենթակա վարկի ծավալը և կրճատում է վարկային պակասորդը:»

6.10 Առաջարկում ենք սնանկության վերաբերյալ Հայաստանի օրենսդրություն ներդնել ՄՓՄՁ բնորոշ սնանկության ռեժիմ՝ բոլոր վերոնշյալ դիտարկումները հաշվի առնելու և պետության տնտեսության համար վերհանված օգուտները ապահովելու նպատակով: Ստորև կներկայացնենք ՄՓՄՁ գործընթացի պատշաճ ներդրման նպատակով անհրաժեշտ որոշումների կայացման համար էական տարրերին:

6.11 Կորպորատիվ առողջացման և լուծարման գործընթացները, որոնք առաջարկում ենք կիրառել ՄՓՄՁ ոլորտում, ազդում են արագության, արդյունավետության և գործընթացի հետ կապված ծախսերի նվազեցման հավանականության վրա: Վերջին կետը օժտված է առանձնահատուկ կարևորությամբ: Այն դեպքերում, երբ կորպորատիվ առողջացման կամ լուծարման գործընթացը ծախսատար է, այդպիսիք անհասանելի կլինեն ֆինանսական դժվարություններ ունեցող շատ ՄՓՄՁ-ների համար: ՄՓՄՁ կորպորատիվ առողջացման հավանական ծախսերը նվազեցնելու նպատակով առաջարկում ենք, որ սնանկության կառավարիչը հանդես գա խորհրդականի դերում, այլ ոչ թե բիզնես կառավարիչ: Այդ կերպ վերջիններիս արժեքավոր խորհուրդները կտրամադրվեն ՄՓՄՁ-ներին՝ առանց առողջացման ներուժը խաթարող ծախսեր կրելու:

ՄՓՄՁ սնանկության նկատմամբ մոտեցումները

6.12 Ընդհանուր առմամբ սնանկության ռեժիմների շրջանակներում ՄՓՄՁ սնանկության խնդրի առնչությամբ կիրառվում է ստորև ներկայացված մոտեցումներից մեկը: Դրանք են՝

ա) **Առանձնահատուկ մոտեցման բացառում:** Շատ իրավական համակարգերում ՄՓՄՁ-ների նկատմամբ կիրառվում է նույն սնանկության ռեժիմը, որը կիրառելի է այլ առևտրային ձեռնարկությունների նկատմամբ: Ինչպես արդեն նշվեց, նշված մոտեցման խնդիրն այն է, որ ընդհանուր օրենքները հավանական է, որ չհամապատասխանեն ՄՓՄՁ կոնկրետ հանգամանքներին և կարիքներին:

բ) **Սնանկության ընդհանուր ռեժիմի ձևափոխում:** ՄՓՄՁ կոնկրետ պահանջմունքները առավել լավ բավարարելու նպատակով որոշ երկրների իրավական համակարգերում, ներառյալ՝ Հնդկաստանը, Գերմանիան և Հունաստանը, փոփոխություններ են կատարել սնանկության ընդհանուր ռեժիմում՝ փոքր ձեռնարկությունների համար պարզեցված ընթացակարգ ապահովելու նպատակով: Նման դեպքերում ՄՓՄՁ-ները ընդգրկվում են ընդհանուր օրենսդրության շրջանակներում, սակայն որոշ ընթացակարգերի և պայմանների փոփոխմամբ և (կամ) պարզեցմամբ՝ վերջիններիս պահանջմունքները բավարարելու նպատակով: Ձևափոխումները կարող են ներառել՝

(i) որոշակի վճարների չեղարկումը կամ նվազեցումը,

(ii) փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների կրճատում կամ վերացում,

(iii) տեղեկատվության անհասանելիության պայմաններում փաստաթղթերը պատրաստելիս ճկունության ապահովում,

(iv) գործընթացի առավել արագ ընթացքի ապահովում, ժամկետների կրճատում և վերականգնողական գործընթացների համար առավել կարճ ժամկետների սահմանում, և

(v) սնանկության գործընթացի որոշ ասպեկտներում ժամկետի առնչությամբ ճկունության ապահովում:

գ) **ՄՓՄՁ սնանկության հատուկ ռեժիմ:** Գործող ռեժիմի ձևափոխման այլընտրանքային տարբերակն է, որը հատուկ նախատեսված է պարտապան ՄՓՄՁ-ների համար: Վերջին տարիներին որոշ իրավական համակարգերում, ներառյալ՝ Կորեայում, Թաիլանդում, Ճապոնիայում և (ինչպես վերջերս հայտարարվեց) Սինգապուրում, ընդունվեցին սնանկության համակարգային ռեժիմներ, որոնք հատուկ համապատասխանեցված էին ՄՓՄՁ համար: Նշված ռեժիմները նախատեսված են ՄՓՄՁ ֆինանսական դժվարությունների գործուն և ծախսարդյունավետ լուծման համար: Հատուկ ուշադրություն է հատկացվում խնդրահարույց, սակայն կենսունակ ՄՓՄՁ-ների առողջացմանը, ինչպես նաև ոչ կենսունակ ձեռնարկությունների ծախսարդյունավետ լուծարմանը: Հիմնական բնորոշ գծերն են՝

(i) պարտապան ՄՓՄՁ-ների համար սնանկության կամ առողջացման գործընթաց սկսելու համար արագացված ընթացակարգի նախատեսում,

(ii) ընթացակարգերի ժամանակ պարզեցված դրույթների և պահանջների սահմանում,

(iii) արտաքին աջակցության և վերահսկողության ապահովում նշանակված խորհրդականի կամ դատարանի միջոցով:

6.13 Սնանկության մեխանիզմի ժամանակին կիրառումը խրախուսելու նպատակով ՄՓՄՁ սնանկության հատուկ ռեժիմները պետք է ուղղված լինեն հետևյալ հարցերի բարելավմանը.

ա) հստակ և թափանցիկ գործընթացի առկայություն, որի միջոցով հնարավոր է վարույթ հարուցել, այդ թվում՝ մորատորիումի գործողությունը, վարույթների կարճումը և համաձայնեցման ծրագրերի ներկայացումը⁴⁸.

բ) բիզնեսի լուծարման, պարտատերերի պահանջների բավարարման և պարտքերից ազատելու հստակ մեթոդների առկայություն բիզնեսի ձախողման դեպքում⁴⁹.

գ) հստակ պատասխանատվության միջոցներ տնօրենների կողմից խարդախության կամ անփութության դեպքում՝ ընդհուպ մինչև վարույթի հարուցումը⁵⁰.

դ) ֆորմալ դատական ընթացակարգերի կրճատումը՝ հոգուտ արտադատական լուծումների⁵¹.

ե) անհրաժեշտ է ապահովել զգալի առաջնահերթություն և պաշտպանություն ֆինանսական հարուցումից հետո՝ հնարավորություն ընձեռելով կապիտալի ֆինանսավորումը⁵²:

ՄՓՄՁ ընթացակարգի կիրառումը: Ի՞նչն է բնորոշվում որպես ՄՓՄՁ:

6.14 ՄՓՄՁ-ները լինում են տարբեր տեսակի, սկսած միկրո ձեռնարկություններից, ինչպիսիք են՝ ոչ ֆորմալ կազմակերպված անհատ ձեռնարկատերերը կամ մեկ աշխատակից ունեցող ձեռնարկությունները, մինչև միջին ձեռնարկություններ, որոնք կարող են ունենալ թվով շատ աշխատակիցներ և ձևավորված կազմակերպական կառուցվածք: ՄՓՄՁ-ները կարելի է տարբերակել ըստ ֆորմալ ՄՓՄՁ-ների, որոնք գրանցում են ստացել այն տնտեսական համակարգում, որի ներքո գործունեություն են ծավալում, և ոչ ֆորմալ ՄՓՄՁ-ների, որոնք գրանցված չեն և գործում են ֆորմալ տնտեսական ընթացակարգից դուրս⁵³: Չնայած սույն տերմինի շրջանակներում ներառվող ձեռնարկությունների չափի և կազմակերպական ձևի տարբերությանը՝ ՄՓՄՁ-ները բախվում են նույն մարտահրավերներին, որոնք էապես տարբեր են մեծ ձեռնարկությունների կողմից առերեսվող մարտահրավերներից:

⁴⁸ International Finance Corporation, above n 42:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նույն տեղում:

⁵³ St' u Kushnir, Mirmulstein and Ramalho, վերը նշված՝ 40:

6.15 Բացի այդ, ՄՓՄՁ-ների վերաբերյալ հատուկ կարգավորումները, որպես կանոն, ուղղված են ՄՓՄՁ-ների հատուկ հանգամանքները հաշվի առնելուն և պարտատերերի միջոցների արագ և քիչ ծախսատար վերադարձին՝ ի հաշիվ սնանկության կառավարչի կողմից կազմակերպության գործերի ուսումնասիրման և փոխհատուցման վերաբերյալ դատական հայցերի ներկայացման մասին սահմանված պահանջներից հրաժարման: Պատճառը նման քննության և գործողությունների հաճախ ժամանակատար և ծախսատար լինելն է: Կարևոր է պաշտպանվել կազմակերպությունների կամ կազմակերպության գործերի ուսումնասիրումից խուսափող սեփականատերերի կողմից նշված հատուկ դրույթների չարաշահումից, և այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ դրանք հասանելի լինեն բացառապես պատշաճ ձևակերպված ՄՓՄՁ-ներին: Հետևաբար, անհրաժեշտ է հստակ սահմանել ՄՓՄՁ-ի հասկացությունը:

6.16 Անդրադառնալով ՄՓՄՁ-ների դասակարգման հարցին՝ վերջիններիս նկատմամբ սնանկության ընթացակարգ ներդնելու նպատակով, առաջարկվել են տարբեր մոտեցումներ: Այլ իրավական համակարգերում առաջարկվող սահմանումներից են՝

ա) բնորոշել որպես փոքր այն կազմակերպությունը, որոնց տարեկան շրջանառությունը և հաշվեկշիռը չեն գերազանցում սահմանված որոշակի շեմը և որն ունի ոչ ավելի քան 50 աշխատակից (այսպիսի մոտեցում է որդեգրվել Միացյալ Թագավորությունում), կամ

բ) ՄՓՄՁ-ների նկատմամբ կիրառվող հատուկ ընթացակարգի կիրառում բոլոր այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց պարտավորության չափը ավելի քիչ է սահմանված շեմից: Այսպիսի մոտեցում է որդեգրվել Կորեայում և Ճապոնիայում:

6.17 Հիմնական խնդիրը ընթացակարգի կիրառման սահմանափակումն է միայն փոքր ձեռնարկությունների նկատմամբ: Առաջարկում ենք ընթացակարգի ընդլայնված կիրառումը սահմանափակել չմարված պարտավորության չափով, ինչպես Ճապոնիայում, Թաիլանդում և Կորեայում: Ինչպես վերևում առավել մանրամասն նշվեց՝ ՄՓՄՁ-ների գործունեությունը հաճախ կրում է ոչ ֆորմալ բնույթ, իսկ պատշաճ հաշվառում ևս չի պահանջվում, հետևաբար՝ շրջանառության կամ հաշվեկշռի հաշվարկների հիման վրա դիմումի ներկայացման պահանջ սահմանելը չի համապատասխանի հայկական իրականությանը:

6.18 Մեր ամփոփագիրը սահմանափակվում է կորպորացիաների սնանկության մասին օրենքներով, սակայն մենք ընդունում ենք, որ «ՄՓՄՁ-ների սնանկության դեպքում առաջացող խնդիրների էությունը բիզնեսի և ֆիզիկական անձանց

սնանկության ընթացակարգերի համընկնումն ու հակադրություններ են»⁵⁴: Հետևաբար, առաջարկում ենք դիտարկել ՄՓՄՁ-ների ընթացակարգի ընդլայման հնարավորությունը՝ այն տարածելով ֆիզիկական անձանց, ընկերակցությունների և գրանցված կազմակերպությունների նկատմամբ, որոնք բիզնեսի հետ կապված պարտքեր են կուտակել: Նշված առաջարկի ընդունման դեպքում ՄՓՄՁ-ների հատուկ ընթացակարգը պետք է կիրառվի՝

ա) ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք ունեն բիզնեսին առնչվող չմարված պարտավորություններ, որոնց չափը գերազանցում է սահմանված նվազագույն շեմը՝ առանց առավելագույն չափի սահմանման,

բ) գրանցված և չգրանցված ընկերակցությունների նկատմամբ, որոնք ունեն բիզնեսին առնչվող չմարված պարտավորություններ, որոնց չափը գերազանցում է սահմանված նվազագույն շեմը՝ առանց առավելագույն չափի սահմանման,

գ) գրանցված կազմակերպությունների նկատմամբ, որոնց պարտավորության չափը գերազանցում է նվազագույն շեմը, սակայն չի գերազանցում առավելագույն շեմը:

6.19 Յուրաքանչյուր տիպին պատկանող պարտապանի նկատմամբ շեմի արժեքի սահմանումը հավանական է, որ կարող է փոփոխվել՝ կախված գնաճից և այլ գործոններից, օրինակ՝ որդեգրելով այնպիսի քաղաքականություն, որ գործընթացի արդյունքների՝ լավ գնահատման դեպքում ապահովվի այդ ընթացակարգի հասանելիությունը ավելի մեծ ձեռնարկությունների համար: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք, որ սահմանված շեմին համապատասխանության պահանջը սահմանվի օրենքով, սակայն դրա հստակ չափը ամրագրվի նորմատիվ ակտերով՝ հետագայում դրանցում փոփոխություններ կատարելու հնարավորության ապահովման նպատակով:

Մորապորիում և հաշտարարություն

6.20 Իրենց բնույթով պայմանավորված՝ ՄՓՄՁ-ները հնարավոր է ֆինանսական խնդիրները վերհանելու և դրանց արձագանքելու փորձով օժտված չլինեն⁵⁵, ինչը կարող է հանգեցնել ճիշտ ժամանակին սնանկության գործընթաց չսկսելուն: Ֆինանսական խնդիրներ ունեցող ձեռնարկության արժեքը պահպանելու համար կարևոր է, որ ՄՓՄՁ-ները անհրաժեշտության դեպքում արագ հասանելիություն ունենան սնանկության ընթացակարգով սահմանված պաշտպանության միջոցներին: ՄՓՄՁ-ի կողմից սահմանված ժամկետում իր պարտավորությունները կատարելուն ի վիճակի չլինելու պարագայում պարտատերերի պահանջների հարկադիր կատարման նկատմամբ

⁵⁴ Տե՛ս The World Bank, "Report on the Treatment of MSME Insolvency", 2017, էջ 14-16:

⁵⁵ Տե՛ս Organisation for Economic Co-operation and Development, վերը նշված՝ էջ 41:

ժամանակավոր մորատորիումի կիրառումը մինչև առավել համապատասխան մոտեցման որդեգրումը ՄՓՄՁ-ներին «շունչ քաշելու» ժամանակ է տալիս:

6.21 Իրավակարգերի մեծամասնությունը հնարավորություն են տալիս սնանկության ընթացակարգի սկզբից մինչև ավարտը կիրառել մորատորիում: Մենք համաձայն ենք, որ որդեգրված այս ուղին ճիշտ է:

6.22 ՄՓՄՁ-ների նկատմամբ մորատորիումը պետք է կիրառվի խիստ սահմանափակումներով՝ ընթացակարգի չարաշահումից խուսափելու նպատակով (օրինակ՝ մորատորիումի կիրառման պարբերականության խիստ սահմանափակման նախատեսում): Օրինակ, Մեծ Բրիտանիայում որդեգրված մոտեցման դեպքում նախատեսվում է, որ ձեռնարկությունը օժտված չէ մորատորիումի կիրառման իրավունքով, եթե դրա նկատմամբ արդեն իսկ ենթակա է սնանկացման ֆորմալ ընթացակարգի կիրառումը կամ նախորդող 12 ամիսների ընթացքում մորատորիում կիրառվել է, սակայն այն չի հանգեցրել առողջացման ծրագրի մշակմանը կամ առողջացման ծրագիրը վաղաժամ դադարեցվել է:

6.23 Նաև առաջարկում ենք, որ օրենսդրորեն ամրագրում ստանա ՄՓՄՁ ընթացակարգի դեպքում հաշտարարության խրախուսումը, եթե այն կարող է օգտակար լինել: Հաճախ ՄՓՄՁ սնանկացման պատճառը միայն մեկ պարտատիրոջ՝ հաճախ վարձատուի, բանկի կամ հարկային մարմնի հետ ծագած հարաբերություններն են: Միակ պարտատիրոջ հետ փոխզիջման հասնելը կարող է դառնալ հաջողակ փրկության բանալին և հաշտարարի ունակությունների օգտագործումը կարող է փրկել ձեռնարկությունը:

Առողջացում և լուծարում

6.24 ՄՓՄՁ-ների արդյունավետ ընթացակարգը պետք է նախատեսի ինչպես կենսունակ ձեռնարկությունների առողջացման, այնպես էլ ոչ կենսունակ ձեռնարկությունների լուծարման հնարավորություն: Չնայած, որ առողջացումը զգալիորեն նպաստում է կենսունակ ձեռնարկությունների կողմից իրենց բիզնեսը շարունակելուն, կարևոր է նաև, որ ոչ կենսունակ ձեռնարկությունները արդյունավետորեն լուծարվեն՝ պարտապանների նկատմամբ անբարենպաստ ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով: Այդ իսկ պատճառով խորհուրդ ենք տալիս, որ ՄՓՄՁ ընթացակարգը նախատեսի առողջացման պարզ ընթացակարգ և ոչ ծախսատար պարզեցված լուծարման ընթացակարգ: Ստորև կներկայացնենք այս երկու գործընթացների և կոնկրետ ՄՓՄՁ պայմաններին դրանց համապատասխանեցման վերաբերյալ մեր դիտարկումները:

Առողջացման ընթացակարգ

6.25 Կենսունակ, սակայն ֆինանսական դժվարություններ ունեցող ՄՓՄՁ-ների դեպքում առաջարկում ենք, որ ՄՓՄՁ ղեկավարությունը շարունակի մնալ և լինել վերահսկողության տակ բանակցությունների և ծրագրի իրագործման ողջ ընթացքում՝ պայմանով, որ վերահսկողությունն ու առաջարկներն իրականացվեն անկախ խորհրդատուի կողմից, ով սնանկության կառավարիչ է: Նշված կառավարչի դերը, ով այս զեկույցում կհիշատակվի որպես «Առողջացման խորհրդական», գլխավորապես գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումն է, առողջացման ծրագիրը կազմելիս աջակցության տրամադրումն է և պարտատերերին բանակցությունների առաջընթացի և ծրագրի իրագործման մասին տեղեկատվության տրամադրումը:

6.26 Առողջացման վարույթի հարուցումը պետք է լինի պարզ և ծախսարդյունավետ, որպեսզի ՄՓՄՁ-ները ժամանակին հասանելիություն ունենան ընթացակարգին: Ընդգծելով ՄՓՄՁ-ների կողմից կենսունակ բիզնեսի փրկությանը աջակցելուն ունակ ընթացակարգի կիրառման համար խթանների գոյության կարևորությունը⁵⁶ առաջարկում ենք, որ անվճարունակ կամ սնանկացմանը մոտ գտնվող ՄՓՄՁ-ները հնարավորություն ստանան սկսելու փրկության և առողջացման գործընթացը, որի դեպքում պարտքի վճարման նկատմամբ կկիրառվի մորատորիում՝ հասանելիություն տալով սնանկության գործերով հմուտ կառավարչի (ով գործում է որպես առողջացման խորհրդական): Նրանք պետք է հնարավորություն ստանան դիմել այդ քայլին մինչև պարտատիրոջ միջամտությունը և լուծարողի նշանակմամբ բիզնեսի նկատմամբ վերահսկողության կորուստը:

6.27 Առաջարկում ենք, որ նշանակման գործընթացն ամբողջությամբ վարչական լինի և նվազագույնը ներառի՝

ա) առողջացման գործընթացը սկսելու մասին իրավասու մարմնին դիմումի ներկայացումը՝ նշելով առողջացման պատճառը,

բ) ՄՓՄՁ-ի պարտատերերի ցանկի կազմումը՝ նշելով վերջիններիս անունը, հասցեն և յուրաքանչյուրի նկատմամբ ունեցած պարտավորության մոտավոր չափը,

գ) որպես առողջացման խորհրդական հանդես գալու մասին գրավոր համաձայնություն՝ ստորագրված սնանկության անկախ կառավարչի կողմից, ինչը հավաստում է վերջինիս կողմից կազմակերպության տրամադրած փաստաթղթերին ծանոթացած և վստահ լինելը, որ գործը սկսելու հիմքերն առկա են ու պարտատերերի ցանկը հավաստի է այնքանով, որքանով նա կարող է այդ մասին իմանալ:

⁵⁶ Տե՛ս Refer the World Bank, "Report on the Treatment of MSME Insolvency", 2017 էջ 10-12:

6.28 Համաձայնություն տալիս առողջացման խորհրդականը պարտավոր չէ անցկացնել որևէ անկախ քննություն կազմակերպության դրության վերաբերյալ և կարող է վստահել կազմակերպության կողմից տրամադրված տեղեկատվությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հիմքեր ունի կասկածելու տրամադրված տեղեկատվության ճշգրտության վերաբերյալ:

6.29 Դիմումի ներկայացումից հետո ՄՓՄՁ ակտիվների պաշտպանության նպատակով առողջացման գործընթացի իրականացման ժամանակահատվածի ընթացքում ուժի մեջ է մտնում մորատորիումը: Մորատորիումի գործողության ընթացքում կազմակերպության տնօրենը չպետք է տնօրինի ՄՓՄՁ ակտիվները, բացառությամբ եթե դա պայմանավորված է ձեռնարկության բնականոն գործունեությամբ:

6.30 Ցանկում ընդգրկված պարտատերերը խորհրդականի կողմից հնարավորինս շուտ պետք է ծանուցվեն դիմումի ներկայացման մասին:

6.31 Համաշխարհային բանկը պարտատերերի պասիվությունը նշել է որպես ՄՓՄՁ-ների սնանկացմանը խանգարող խնդիրներից մեկը⁵⁷: Համապատասխանաբար, կարևոր է ՄՓՄՁ սնանկության ընթացակարգի մշակումը, որը հնարավորություն կտա առանց խաթարելու ընդհանուր գործընթացը հրաժարվել դրան պարտատիրոջ մասնակցությունից: Հետևաբար, մեր կողմից առաջարկվող ընթացակարգի դեպքում առաջարկվում է, որ եթե պարտատերերը վստահ են, որ իրենց պահանջները հստակ արտացոլվել են փաստաթղթերում, ապա նրանցից չի պահանջվում պահանջի առկայությունը հավաստող որևէ գործողության կատարում: Այն դեպքերում, երբ պարտատերը վիճարկում է իր պահանջի գնահատումը, վերջինս կարող է առարկել անկախ խորհրդականին, ով կձգտի կարգավորել ցանկացած վեճ և համապատասխան հանգամանքներում կհարթի այն կամ վեճը կարող է ներկայացվել դատարան:

6.32 Փոխանցման փոփոխված ընթացակարգը նախատեսված է ՄՓՄՁ պարտապանների վերաբերյալ ֆինանսական կամ այլ տեղեկատվությունը փնտրելիս ծագող դժվարությունների վերացման համար, որոնք կարող են պայմանավորված լինել ձեռնարկության ոչ ֆորմալ բնույթով, թափանցիկության բացակայությամբ, հաշվառման ոչ պատշաճ վարմամբ և ֆինանսական գրագիտությամբ⁵⁸:

⁵⁷ Տե՛ս The World Bank, "Report on the Treatment of MSME Insolvency", 2017, էջ 12-14 և աղյուսակ 3.4.

⁵⁸ Տե՛ս International Finance Corporation, վերը նշված՝42, էջ 16:

6.33 Դիմումի ներկայացման համար տրամադրված կարճ ժամանակահատվածում ՄՓՄՁ-ն և Խորհրդականը պետք է պարտատերերին ներկայացնեն առողջացման ծրագիրը: Խորհրդականը պետք է համեմատական անցկացնի առողջացման ծրագրի և լուծարման գործընթացի միջև, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնի պարտատերերին:

6.34 Առողջացման ծրագիրը պետք է նախատեսի, որ պարտատերերի բոլոր չապահովված պահանջները դիտարկվելու են նույն կերպ, բացառությամբ լուծարման ընթացակարգին համապատասխան սահմանված առաջնահերթությունների: Հնարավոր է ներքին պահանջների ստորադասման հնարավորության դիտարկումը: Եթե առողջացման ծրագրում ձեռնարկության միջոցների հաշվին պարտապանների նկատմամբ նախատեսվի տարբերակված ընթացակարգ, ապա առողջացման ընթացակարգը իր բնույթով պետք է ավելի ֆորմալ լինի:

6.35 Առողջացման ծրագիրը պետք է որոշակի ժամանակահատվածում ավարտման մասին դրույթներ ներառի՝ պահպանելով ծրագրի հաստատման պահից օրենքով նախատեսված առավելագույն ժամկետը:

6.36 Ծրագրի քվեարկությունը կարող է տեղի ունենալ պարտատերերի ժողովին կամ վարչական կարգով: Հնարավոր քվեարկությանը ներկայացվող պահանջների օրինակներից են դրույթներն առ այն, որ ծրագիրը կարող է հաստատվել, եթե՝

ա) ծրագրի դեմ քվեարկած պարտատերերի թիվը պակաս է ընդհանուր պարտատերերի թվի կեսից, որոնց պահանջները կազմում են պահանջների ընդհանուր արժեքի կեսից ոչ ավելին, սակայն

բ) պարտավորության գումարի չափը կամ ծրագրին քվեարկող պարտատերերի թիվը որոշելիս հաշվի չեն առնվի ներկայացվող ներքին պահանջները:

6.37 Քվեարկության առաջարկվող տարբերակը (հիմնված է ՄՓՄՁ սնանկության ճապոնական ընթացակարգի վրա) լուծում է պասիվ պարտատիրոջ խնդիրը: Նախատեսելով կարգավորում, որի շրջանակներում ծրագիրը հնարավոր է հաստատել իրավասու պարտատերերի 50 %-ի կողմից չառարկելու դեպքում, հնարավոր է դառնում մեղմել պարտատերերի ակտիվության բացակայության խնդիրը:

6.38 Եթե՝

ա) սկսելու ժամանակահատվածից սկսած կարճ ժամկետներում ծրագիրը չի առաջարկվել, կամ

բ) ծրագիրը մերժվել է պարտատերերի կողմից, կամ

գ) հաստատված ծրագրի հաջող կիրարկումը տապալվում է,

ապա ՄՓՄՁ-ն ինքնաբերաբար անցում է կատարում ստորև նկարագրված լուծարման գործընթացին:

6.39 Գործընթացի ցանկացած փուլում ցանկացած տուժող կողմ կարող է դիմել դատարան՝ վերանայման խնդրանքով:

Լուծարման ընթացակարգ

6.40 Անդրադառնալով ՄՓՄՁ-ի համար նախատեսված լուծարման հատուկ ընթացակարգին՝ առաջարկում ենք համապատասխանեցնել ընդհանուր ընթացակարգը՝ վերջինիս կիրառումը պարզեցնելու և շտկելու նպատակով: Ընթացակարգը պետք է ընդգրկի հետևյալ տարրերը՝

ա) սնանկության վարույթ սկսելու ցանկություն ունեցող պարտատերերի համար պետք է հաստատվի պահանջի ներկայացման ընթացակարգ և գործի սնանկության կանխավարկածը,

բ) պարտապանը պետք է հնարավորություն ունենա կամավոր նշանակել լուծարողին: Այս դեպքում նշանակումը պետք է ուղեկցվի սնանկության կառավարչի գործողություններին համաձայնություն տալով,

գ) որպես այլընտրանք՝ պարտատերը պետք է հնարավորություն ունենա դիմելու դատարան՝ պահանջելով ՄՓՄՁ լուծարումը: Ընդհանուր ընթացակարգի հետ համեմատած՝ փաստաթղթերի ներկայացման համար սահմանված վճարները պետք է նվազեցվեն և սահմանվեն անվանական արժեքի չափով,

դ) ներկայացվող հայցադիմումում կարող է նաև առաջադրվել համապատասխան մասնագիտացմամբ լուծարողի թեկնածությունը և վերջինիս համաձայնությունը,

ե) պարտապանի իրացված ակտիվները պետք է բաշխվեն լուծարման ընդհանուր ընթացակարգով սահմանված առաջնահերթության համաձայն՝ հաջորդիվ տարածվելով չապահովված պահանջներով պարտատերերի նկատմամբ, բացառությամբ ներքին պարտատերերի,

զ) հարկ է ուսումնասիրել, թե արդյոք ներքին պարտատերերի պահանջները ստորադաս են մնացած պարտատերերի ներկայացրած պահանջներին, և

է) կիրառելի չեն պայմանագրի լուծման (գործարքների վիճարկման) վերաբերյալ դրույթները, բացառությամբ ներքին պարտատերերի հետ կնքված գործարքների:

6.41 Վարույթի ցանկացած փուլում պարտատերը, ով բավարարված չէ դրա ընթացքով, կարող է դիմել դատարան՝ վերանայման պահանջով: Բացի այդ, գործընթացի չարաշահումներից խուսափելու նպատակով օրենքում պետք է ամրագրվեն երաշխիքներ:

Դատարանի դերը

6.42 ՄՓՄՁ գործընթացի հաջողության գրավականը ծախսերը նվազագույնի հասցնելն է: Այդ իսկ պատճառով՝ հարկ է բոլոր հնարավոր դեպքերում խուսափել դատարանի ներգրավումից: Եթե հակիրճ, ապա դատավարության ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությունը ինքնին կարող է հանգեցնել գործընթացի ձախողմանը: Այնուամենայնիվ, ռիսկի նվազեցման կարևոր գործոն է գործընթացի յուրաքանչյուր մասնակցին դատարան դիմելու հնարավորությամբ օժտելը բոլոր այն դեպքերում, երբ վերջինս կարծում է, որ իրավական հիմքը խախտվում է կամ չարաշահվում, միաժամանակ՝ դատարանը իրավասու է օրենքի պահպանմանն ուղղված կարգադրություններ տալ: Այսպիսով, էական խնդիրը ՄՓՄՁ գործընթացից դատարանի հեռացումը չէ, այլ ապահովումը, որպեսզի դատարանը այլ դեր չխաղա բացի օրենքի պահպանումն ապահովողից այն դեպքում, երբ առկա է պնդում, որ տեղի է ունեցել օրենքի խախտում: Դատարանը պետք է ներգրավվի միայն այն դեպքերում, երբ առկա է օրենքի խախտման վերաբերյալ բողոք: Մնացած դեպքերում ՄՓՄՁ գործընթացը պետք է տեղի ունենա առանց դատարանի մասնակցության:

Հարկային մարմինների խնդիրները

6.43 ՄՓՄՁ նկատմամբ առանձնահատուկ ազդեցություն ունեցող ևս մեկ հարց հիշատակվել է Համաշխարհային բանկի զեկույցում և ձևակերպված է հետևյալ կերպ՝

«... Շատ պետություններում հարկային մարմինները ակտիվորեն չեն նպաստում կենսունակ ձեռնարկությունների փրկության և արժեքը առավելագույնի հասցնելուն ուղղված՝ սնանկության համակարգի նպատակներին հասնելուն: Փոխարենը հարկային մարմինները մասնակցել են վարույթներին բացառապես պարտքերի բռնագանձման համար: Օրինակ, որոշ հարկային մարմիններ իրավասու չեն իրականացնելու պարտքի ներում, ինչը կարող է խոչընդոտել սնանկացմանը և կենսունակ ձեռնարկությունների վերականգնմանը: Որոշ պետություններում անհուսալի կամ վերանայված պարտքերի դեպքում նաև նախատեսված չեն որևիցե հարկային արտոնություններ, ինչը նվազեցնում է պարտատերերի կողմից վերակազմակերպման համար համաձայնություն տալու հավանականությունը: Սա հատկապես կարևոր է ՄՓՄՁ-ների դեպքում...»⁵⁹:

6.44 Նշվածը քննարկման ենթակա հարց է ոչ թե սնանկության օրենսդրության ներքո, որը մշակվել է նշված պայմաններին համապատասխանությամբ, այլ այն կարող է քննարկվել հարկային մարմինների հետ դրա համար ճիշտ ժամանակին:

⁵⁹ St' u The World Bank, "Report on the Treatment of MSME Insolvency", 2017, էջ 34:

Չֆինանսավորվող լուծարման խնդիրները

6.45 Սնանկությանը առերեսվող շատ կազմակերպություններ, հատկապես ՄՓՄՁ-ներ, չեն տիրապետում անհրաժեշտ ֆինանսական միջոցների, որոնք անհրաժեշտ են կազմակերպության լուծարման համար նշանակված սնանկության մասնավոր կառավարչի կողմից կրած անհրաժեշտ ծախսերն ու վճարները ծածկելու համար:

6.46 ՄՓՄՁ-ների սնանկության մասին Համաշխարհային բանկի զեկույցում ուշադրության են հրավիրվում «ակտիվների բացակայության դեպքերը» և մեկնաբանում՝

«...ակտիվների բացակայությամբ գործերը ոչ միայն առնչվում են պարտատերերի փոխհատուցման և տնտեսական արժեքի պահպանման խնդիրներին, այլև վերաբերում են սնանկության համակարգի ամբողջականությանը և դրա՝ պարտապանների կողմից դիսկի պատասխանատվության ստանձնման և արդարացի առևտրային վարքագծի խրախուսման գործում ունեցած դերին:»⁶⁰

6.47 Նմանապես ՄԱԿ ՄԱԻՀ-Ը կատարել է հետևյալ դիտարկումը՝

«Սնանկության գործընթացն սկսելու համար չափանիշներին բավարարող շատ պարտապաններ պաշտոնապես երբևէ չեն լուծարվում կա՛մ այն պատճառով, որ պարտապանները չեն ցանկանում վարույթի հարուցումը, քանի որ պարտապանն օժտված չէ միջոցներով կամ վերջինիս միջոցները բավարար չեն սնանկության վարչական վարույթի ֆինանսավորման համար, կա՛մ քանի որ նման դրության մեջ գտնվող պարտապանները հազվադեպ են քայլեր ձեռնարկում վարույթի հարուցման համար...Եթե սնանկության մասին օրենքը չի նախատեսում առանց ակտիվների կամ նվազ քանակով ակտիվների տիրապետող անվճարունակ կազմակերպությունների նկատմամբ քննության հնարավորություն, ապա այն քիչ է օգտակար արդար առևտրային վարքագծի կամ առևտրային կազմակերպության պատշաճ կառավարման գործում լրացուցիչ չափանիշների ապահովման գործում»⁶¹

6.48 Ստորև ներկայացված խնդիրների լուծման մի քանի տարբերակներ են առկա:

Առաջին տարբերակ՝ լուծարումը ֆինանսավորվում է լուծարողի կողմից

⁶⁰ Տե՛ս World Bank, նշված տեղում, էջ 17:

⁶¹ Տե՛ս UNCITRAL, վերը նշված՝ 1, էջ 61-62:

6.49 Որոշ երկրներում սնանկության մասնավոր կառավարիչը պատրաստ է կատարել նման կազմակերպությունների լուծարման վերաբերյալ հիմնական օրենսդրական պահանջները (չնայած, որ վերջիններս չեն վերականգնելու նրանց կրած ծախսերը և կատարած վճարումները), քանի որ նման աշխատանքը արդյունավետորեն սուբսիդավորվում է սնանկության առավել եկամտաբեր գործերով, որոնք նրանք ստանում են դատական կազով լուծարման գործերով:

6.50 Նշված համակարգի հիմքում ընկած է ռիսկի և պարզևատրման բաժանման սկզբունքը: Որպես լուծարող՝ գրանցված պրակտիկ մասնագետները բախվում են լուծարման գործընթացի ֆինանսավորման համար անհրաժեշտ ակտիվների չտիրապետող կազմակերպությունում լուծարող նշանակվելու ռիսկին: Նման դեպքերում լուծարողից պահանջվում է անձամբ վճարել լուծարման հիմնական ծախսերը: Եվ ընդհակառակը՝ առկա է հավանականություն, որ նրանք կարող են նշանակվել ծախսերի դիմաց վճարման համար բավարար ակտիվներ ունեցող կազմակերպությունում, ինչը ժամանակի ընթացքում կհավասարակշռի չվճարված աշխատանքին:

6.51 Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության մեջ ՄՓՄՁ ձեռնարկությունների գերակշռումը, որոնք ակտիվների ցածր մակարդակի են տիրապետում անգամ վճարունակ լինելու ժամանակ, կարծում ենք, որ այս մոդելը ամենայն հավանականությամբ սնանկության մասնավոր կառավարիչների համար առևտրային տեսանկյունից անիրագործելի է:

Երկրորդ տարբերակ՝ լուծարման տարբերակ պետական միջոցների հաշվին

6.52 Որոշ երկրներում գոյություն ունի լուծարողի պաշտոն, ով որպես լուծարող է նշանակվում այն կազմակերպությունների լուծարման ժամանակ, որոնց դեպքում չի նշանակվել սնանկության մասնավոր կառավարիչ, սակայն լուծարումն իրականացվում է պետական միջոցների հաշվին: Ֆինանսական միջոցների բացակայության պարագայում կատարվում է նվազագույն ծավալի աշխատանք, որն անհրաժեշտ է ձեռնարկության լուծարման գործընթացը մինչև այն հաշվառումից հանելու փուլ հասցնելը:

6.53 Նշված պաշտոնյան հայտնի է որպես «Պաշտոնական կառավարիչ»:

6.54 Կարծում ենք, որ պաշտոնական կառավարչի դերը ընդունելի է, սակայն, գիտակցելով, որ ներկա պահին այս տարբերակը կարող է կենսունակ չլինել՝ հաշվի առնելով պետության համար այն ծախսերը, որոնց այն կհանգեցնի, ստորև կներկայացնենք ևս մի քանի այլ տարբերակներ:

Երրորդ տարբերակ՝ փաստաթղթերը ներկայացնելիս տուրքի վճարումը՝ որպես լուծարման նախապայման

6.55 Որոշ երկրներում լուծարման մասին դիմումը ներկայացնելիս սահմանված են վճարներ, որոնց նպատակը լուծարման գործընթացի հիմնական ծախսերի փոխհատուցումն է: Եթե դիմում ներկայացրած պարտատերը կամ պարտապանը ի վիճակի չէ վճարելու սահմանված տուրքի չափը, ապա լուծարման գործընթացը չի կարող սկսվել: Չնայած այս դեպքում ստեղծվում է առանց ակտիվների լուծարման ֆինանսավորման հնարավորություն, այս մոտեցման դժվարությունը բոլոր անվճարունակ և լուծարման ենթակա կազմակերպությունների համար նման հնարավորություն չստեղծելն է: Սնանկության արդյունավետ ընթացակարգը պետք է ապահովի լուծարման արդյունավետ իրականացում և ոչ կենսունակ կազմակերպությունների գրանցման դադարեցում: Համաձայն իրադարձությունների զարգացման նշված սցենարի՝ պարտապանի կողմից լուծարման սկզբնական ծախսերը վճարելուն ունակ չլինելու դեպքում այն փաստացի պետք է շարունակի գործել որպես գրանցված կազմակերպություն:

Չորրորդ տարբերակ՝ լուծարումը ֆինանսավորվում է պարտապիրոշ կողմից

6.56 Այլընտրանքային տարբերակի էությունը լուծարման գործընթացը սկսելու պահից հետո պարտատիրոջը որոշակի ժամանակահատված տրամադրելն է՝ պարզելու համար, թե արդյոք վերջինս ցանկություն ունի ֆինանսավորելու լուծարման գործընթացը սեփական միջոցների հաշվին: Որոշ իրավական համակարգերում պարտատերերին թույլատրվում է լուծարողի հետ համաձայնագիր կնքել քննության ֆինանսավորման մասին՝ բռնագանձման գործընթացին մասնակցելու հնարավորության ստացման դիմաց:

6.57 Չնայած սա կարող է արդյունավետ մոտեցում լինել բոլոր այն դեպքերում, երբ պարտատերը ցանկանում է մասնակցել բարելավված առողջացման գործընթացներին (այն դեպքերում, երբ պարտապանը կարող է ազատված լինել ակտիվներից կամ կնքած լինել ոչ առևտրային գործարքներ սնանկացման գործընթացը սկսելուն ընդառաջ), այն չի կարող օգտակար լինել այն դեպքերի համար, երբ ակտիվները ի սպառ բացակայում են:

Հինգերորդ տարբերակ՝ գրանցման դադարեցումը՝ առողջացման հնարավորությամբ

6.58 Առանց ակտիվների առկայության լուծարման գործընթացի այլընտրանքային տարբերակ է ակտիվներ չունեցող կազմակերպության գրանցման դադարեցումը՝ առանց սնանկության պաշտոնական գործընթաց սկսելու: Օրինակ՝ Ճապոնիայի սնանկության ընթացակարգի համաձայն՝ դատարանի կողմից լուծարման վերաբերյալ որոշում կայացնելու պահից

կազմակերպության նկատմամբ նշանակվում է հավատարմագրային կառավարիչ: Այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ կազմակերպությունը չի տիրապետում անհրաժեշտ ակտիվների՝ լուծարման գործընթացի ֆինանսավորման նպատակով, ապա լուծարման գործընթացը անհապաղ դադարեցվում է: Դա կարող է տեղի ունենալ նշանակումից անմիջապես հետո կամ գործընթացը սկսելուց հետո ցանկացած փուլում:

6.59 Այնուհետև պարտատերերին կամ այլ շահագրգիռ անձանց հնարավորություն կտրվի սեփական միջոցների հաշվին վերականգնել կազմակերպությունը, եթե հետագայում կվերհանվեն փոխհատուցման կամ պահանջների ներկայացման դեպքեր: Այս մոտեցման առավելությունը այն է, որ պարտատերերին հնարավորություն կտրվի որոշում կայացնել ակտիվների վերադարձման նպատակով կազմակերպության գործունեությունը վերականգնելու ծախսերը կրելու մասին:

6.60 Սակայն նշված մոտեցմանը բնորոշ ռիսկն այն է, որ այն կարող է նպաստել ոչ պաշաճ կորպորատիվ վարքագծի դրսևորմանը: Համոզվելով, որ սնանկության գործընթացից հետո կազմակերպությունը մնում է առանց ակտիվների՝ տնօրենը այս կերպ կարող է խուսափել կազմակերպության սնանկացման և պարտականությունների հնարավոր խախտման վերաբերյալ պատշաճ քննության իրականացումից: Այնուամենայնիվ, մեր կարծիքով՝ սա լավագույն տարբերակն է այն դեպքերում, երբ ֆինանսական ճնշումները զրկում են չֆինանսավորվող լուծարման իրականացման համար Պաշտոնական կառավարչին ֆինանսավորելու հնարավորությունից:

Հիմնական առաջարկներ
<p>Առաջարկվում է փոփոխել սնանկության վերաբերյալ Հայաստանում գործող իրավակարգավորումները՝ ներառելով ՄՓՄՁ սնանկացման հատուկ նոր ընթացակարգ, որը կընդգրկի հետևյալ բնորոշ գծերը՝</p> <ul style="list-style-type: none">• Օրենքը պետք է սահմանի բացառապես ՄՓՄՁ-ների նկատմամբ կիրառման ենթակա հատուկ ընթացակարգ, որը կբովանդակի հստակ դրույթներ կենսունակ ձեռնարկությունների առողջացման պարզեցված և օպտիմալացված ընթացակարգի, ինչպես նաև լուծարման արդյունավետ գործընթացի վերաբերյալ՝ այն դեպքերում, երբ ձեռնարկությունը կենսունակ չդառնա անգամ վերակազմավորված ձևով:• Ձեռնարկության համար ընթացակարգի հասանելիությունը պետք է որոշվի՝ հիմք ընդունելով դիմումի ներկայացման պահին չմարված պարտավորության ընդհանուր արժեքը:• Առողջացման կամ լուծարման գործընթաց սկսելու համար ՄՓՄՁ

հանդիսացող պարտապանը պետք է այնպիսի դրության մեջ լինի, որի պայմաններում վերջինս ի վիճակի չէ կամ առկա է ռիսկ, որ ի վիճակի չի լինի մարել պարտավորությունը դրա ժամկետի վրա հասնելու դեպքում:

- ՄՓՄՁ ընթացակարգի բնույթի և այն բնութագրող գծերի վերաբերյալ մեր դիտարկումները ընդհանուր գծերով ներկայացվել են ավելի վաղ:
- Չֆինանսավորվող լուծարման գործընթացները պետք է փոխանցվեն Պաշտոնական կառավարչին, ով դատարանի պաշտոնատար անձ է:
- Պաշտոնական կառավարչի ինստիտուտի ստեղծման և վերջինիս լիազորություններով օժտման համար ֆինանսական միջոցների բացակայության դեպքում նախընտրելի տարբերակ է գրանցման ինքնաբերաբար դադարեցումը՝ առողջացման հնարավորությամբ:

7. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԵՎ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Սնանկության վերաբերյալ օրենքներով պարտապանի և վարկատուի միջև ծագող հարաբերությունների կարգավորման եղանակը շատ կարևոր է վարկատուների կողմից վարկի տրամադրման պատրաստակամությունը որոշելու համար այն դեպքում, երբ գործի ընթացքը տանում է դեպի սնանկացում: Ծագող թերությունները կարող են մակրոմակարդակում բացասաբար անդրադառնալ պետության տնտեսությունում վարկերի հասանելիության վրա, ինչը կարող է էականորեն անբարենպաստ հետևանքներ ունենալ երկրի ողջ տնտեսության համար:

7.2 Վարկատուները վարկեր են տրամադրում պարտապանին ապահովված կամ չապահովված պարտավորության հիմքերով: Միջազգայնորեն հստակ ընդունված ուղեցույց է առկա պարտապանի սնանկության դեպքում ֆինանսավորողների ինչպես ապահովված, այնպես էլ չապահովված պարտքերի նկատմամբ կիրառվող մոտեցման վերաբերյալ: Ստորև նախ կքննարկվեն ապահովված պարտավորությունների, իսկ այնուհետև՝ նաև չապահովված պարտավորությունների վերաբերյալ առկա լավագույն փորձը և այլ ֆինանսական պայմանները:

ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԿ ՄԱԻՀ առաջարկներ
<p>Սնանկության վերաբերյալ օրենքում հարկ է նախատեսել, որ լուծարման կամ առողջացման ծրագրով նախատեսված դեպքում ապահովված պահանջը պետք է բավարարվի ի հաշիվ ծանրաբեռնված ակտիվների՝ առկայության դեպքում հաշվի առնելով նաև այն պահանջները, որոնք առաջնահերթություն ունեն ապահովված պահանջների նկատմամբ: Ապահովված պահանջների նկատմամբ առաջնահերթություն ունեցող պահանջները պետք է հասցվեն նվազագույնի և հստակ նշվեն սնանկության մասին օրենքում: Այն չափով, որքանով որ ծանրաբեռնված ակտիվների արժեքը չի բավականացնում ապահովված պարտատիրոջ պահանջը բավարարելու համար, ապա ապահովված պարտատերը կարող է մասնակցել որպես չապահովված պարտատեր:</p>

Ներածություն. ղեկավար սկզբունքներ

7.3 Ապահովության տրամադրումը և ստացումը վարկային տնտեսության կարևոր բաղադրատարր է⁶²: Ապահովություն շնորհելու պարտապանի

⁶² St' u World Bank, վերը նշված՝ 3, էջ 5:

ունակությունը կարող է նշանակել, որ վերջիններս կարող են առավել մատչելի գներով հասանելիություն ստանալ վարկերին, քանի որ ապահովված վարկի վերաբերյալ իրավակարգավորումներ նախատեսող օրենքները նվազեցնում են նման վարկավորման նկատմամբ վարկատուի կրած ռիսկը⁶³:

7.4 Ապահովված պարտատերերը պետք է վստահ լինեն, որ իրենց առևտրային իրավունքները կհարգվեն, իսկ այն դեպքերում, երբ պարտապանը անվճարունակ կդառնա, կցուցաբերվի թափանցիկ մոտեցում: Նման իրավունքները օժտված չեն առանձնահատուկ արժեքով, եթե ապահովված կողմը վստահ չէ, որ սնանկության դեպքում իր նկատմամբ կիրառվող ռեժիմը արտացոլելու է մինչև գործընթացն սկսելը պարտապանի հետ կնքված առևտրային պայմանագրի դրույթները:

7.5 Հետևաբար, սնանկության արդյունավետ ռեժիմը պետք է ընդգրկի ապահովված պարտքի բռնագանձման գործուն, թափանցիկ և վստահելի մեթոդներ⁶⁴ ներառյալ.

ա) վարկի պաշտպանությանն ուղղված վստահելի և մատչելի միջոցների ապահովում և պարտավորության չկատարման և սնանկացման ռիսկի հասցնում նվազագույնի՝ ներառյալ տարատեսակ ակտիվներով ապահովում իրականացնելով,

բ) վստահելի ընթացակարգերի ներդրում, որոնց միջոցով վարկատուները և ներդրողները հնարավորություն են ստանում գնահատել, կառավարել և չեզոքացնել սնանկացման ռիսկը, ինչպես նաև օպերատիվ արձագանքել գործարքի կողմի ֆինանսական խնդիրներին, և

գ) վարկային պահանջների կատարման նպատակով հասանելի, թափանցիկ և կանխատեսելի մեխանիզմների խթանմանը աջակցության տրամադրում՝ անկախ կատարմանն ուղղված անհատական կամ կոլեկտիվ քայլերի ձեռնարկման⁶⁵:

7.6 Առաջնահերթությունների դասակարգման և գործընթացը սկսելուց հետո պարտատերերի կողմից պահանջի ներկայացման (օրինակ՝ այն դեպքերում, երբ պարտատերը գործընթացը սկսելուց հետո ֆինանսական աջակցություն է տրամադրում) վերաբերյալ հստակ կանոնների սահմանումը նույնպես կարևոր տարր է, քանի որ այն նպաստում է սնանկությունից հետո պարտապանի ունեցած հնարավորությունների ընդլայնմանը՝ միաժամանակ թույլ տալով ֆինանսավորող կողմերին կիրառել ռիսկերի կառավարման ընթացակարգեր:

⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

⁶⁵ Տե՛ս International Monetary Fund, վերը նշված՝ 8, էջ 5:

Ապահովված իրավունքների պաշտպանության կարևորությունը

7.7 Ապահովված պարտատերերի իրավունքները այլ երկրների իրավական համակարգերի մեծամասնության դեպքում պաշտպանվում են, քանի որ նման դրույթները կարևոր են դիտարկվում տնտեսության մեջ կապիտալի շրջանառության համար: Ֆինանսավորող անձանց կողմից առավել հավանական է ավելի բարենպաստ պայմաններով մեծ գումարների տրամադրումը այն դեպքերում, երբ վերջիններս վստահ են, որ իրենց պարտքը ապահովված է և որ սնանկության դեպքում իրենք օժտված կլինեն առաջնահերթությամբ: Առանց նման դրույթների սահմանման՝ ֆինանսավորողների կողմից փոխառուներին տրամադրման ենթակա գումարի չափը կարող է սահմանափակվել և լինել ավելի թանկ պայմաններով, քան այն դեպքում, երբ նման դրույթներ նախատեսված կլինեին: Ֆինանսավորման տրամադրման պայմանները կարող են դառնալ առավել խիստ:

7.8 Ապահովված պարտատերերի նկատմամբ համապատասխան պաշտպանության և առաջնահերթությունների սահմանումը օգտակար կլինի Հայաստանի տնտեսական աճի համար: Վարկավորման աճին օժանդակելը (ինչը հաճախ նշանակում է կազմակերպության կողմից ապահովված պահանջի հիմունքներով փոխառություն վերցնել) մեր կարծիքով կարևոր նպատակ է, որին սնանկության օրենքները չպետք է խոչընդոտեն: Սա նշանակում է, որ օրենքը չպետք է ապահովված պարտատիրոջը խոչընդոտի ի վերջո ապահովված միջոցի օգտագործմամբ իր պարտքի մարմանը հասնելուն:

Ապահովված իրավունքների իրացումը կորպորատիվ առողջացման ընթացքում

7.9 Քննարկելով այն հարցը, թե արդյոք կորպորատիվ առողջացման ծրագրի մշակման և քննարկման ընթացքում պետք է խոչընդոտել ապահովված պարտատերերին հասնել իրենց ապահովված իրավունքների իրացմանը, կարծում ենք, որ որդեգրված քաղաքականության նկատառումները բավարար հավասարակշռող են: Մի կողմից, նման համատեքստում բռնագանձում թույլ տալու դեպքում հավանական է, որ Հայաստանում առավել բարենպաստ միջավայր կստեղծվի ապահովված վարկավորման համար: Մյուս կողմից, բռնագանձման գործընթացների իրականացումը հաճախ խոչընդոտում է առողջացման գործընթացի հաջող ավարտին կամ խանգարում է դրան: Այդպես տեղի կունենա, եթե ապահովված պարտատերը վերահսկողություն սահմանի կազմակերպության կողմից իրականացվող բիզնեսի կամ այն ակտիվի նկատմամբ, որն էական նշանակություն ունի տվյալ բիզնեսի հաջողության համար: Կազմակերպության և վերջինիս չապահովված պարտատերերի շահերը կստորադասվեն ապահովված պարտատիրոջ շահերի նկատմամբ:

7.10 Նշված խնդրի վերաբերյալ որդեգրվել են մի քանի միջազգայնորեն ընդունված մոտեցումներ: Մոտեցումները ներառում են հետևյալը՝

ա) Պատմականորեն տարբեր իրավական համակարգերում ապահովված պարտատիրոջը չեն խոչընդոտել բռնագանձմանն ուղղված գործողությունների կատարումից անգամ երբ առողջացման գործընթացը մեկնարկած է եղել,

բ) Ավստրալական օրենսդրության համաձայն՝ կամավոր սնանկության (Voluntary Administrator) կառավարչի նշանակումից հետո պարտատերը, ում օգտին ապահովված են պարտապան կազմակերպության ամբողջ ակտիվները կամ դրանց մի մասը, կարող է դրանց անվտանգությունն ապահովելու նպատակով գույքի կառավարիչ (receiver) նշանակել, պայմանով, եթե նման նշանակումը իրականացվում է Կամավոր կառավարչի նշանակումից հետո 13 օրյա ժամկետում կամ եթե առկա է Կամավոր կառավարչի համաձայնությունը կամ դատարանի թույլտվությունը:

գ) Անգլիայում ապահովված պարտատերերը այլևս իրավասու չեն վարչական կառավարիչ նշանակելու, սակայն վերջիններս օժտված են կորպորատիվ առողջացման կառավարիչ նշանակելու իրավունքով: Այնուամենայնիվ, հնարավոր է որոշակի ակտիվով ապահովված պահանջի բռնագանձման թույլտվության տրամադրում:

7.11 Անգլիայում և Ավստրալիայում ընդունված վերոնշյալ երկու մոտեցումները նախատեսված են առողջացմանը և վերականգնմանը աջակցելու համար: Ապահովված պահանջի բռնագանձման սահմանափակումները ծառայում են որպես կորպորատիվ առողջացման գործընթացի խրախուսման և հաջողության հասնելուն հեշտացման քաղաքականության մաս:

7.12 Կարևոր է նշել, որ բռնագանձման նկատմամբ արգելքների առկայության դեպքում որպես կանոն սահմանված են երաշխիքներ, ներառյալ՝ ապահովված պարտատիրոջը հնարավորություն տալ ընտրել սնանկության կառավարչին, կորպորատիվ առողջացման գործընթացի ընթացքում ապահովված ակտիվների պաշտպանություն, ինչպես նաև բռնագանձման համար թույլտվություն ստանալու նպատակով դատարան դիմելու իրավունքի տրամադրում՝ պայմանով, որ ապահովված պարտատերը կարող է մասնակցել գործի քննությանը դատարանում:

7.13 Քաղաքականության ընտրությունը պետք է իրականացվի նշված մրցակցող մոտեցումների միջև՝ սահմանելով պաշտպանության անհրաժեշտ երաշխիքները:

7.14 Մենք արդեն իսկ արտահայտել ենք մեր դիրքորոշումը այն հարցի առնչությամբ, թե արդյոք ապահովված պարտատերը պետք է հնարավորություն ունենա քվեարկելու առողջացման ծրագրին և կարևոր հարց է նաև, թե արդյոք

նշված ծրագրի ընդունման դեպքում այն պետք է կաշկանդի ապահովված պարտատերերին:

Ֆինանսավորումը սնանկության գործընթացի ընթացքում

7.15 Քաղաքականության կարևոր հարց է, թե արդյոք սնանկության գործընթացում ներգրավված ֆինանսական միջոցները պետք է առաջնահերթություն ունենան ապահովված պարտքերի նկատմամբ: Սկզբունքորեն հարցի պատասխանը պետք է լինի՝ «այո», բայց անհրաժեշտ է ապահովված պարտատերերի անվտանգությունը ապահովող երաշխիքներ ևս սահմանել:

Աշխատողների առաջնահերթությունը

7.16 Այնպես, ինչպես աշխատողները պետք է առաջնահերթություն ունենան լուծարման ընթացքում, նույն կերպ էլ վերջիններս պետք է առաջնահերթությամբ օժտված լինեն ապահովված պահանջների իրացման ժամանակ: Չնայած այսպիսի մոտեցումը հիմք է ապահովության աստիճանի նվազեցման համար, սակայն այն լավ է ընկալվում բանկերի և այլ ապահովված ֆինանսավորողների կողմից և սնանկության համակարգի հատկանիշ է տարբեր իրավական համակարգերում և ծառայում է աշխատողների պաշտպանության քաղաքականության իրագործմանը, քանի որ վերջիններս օժտված չեն վարկային ոլորտում բանկերին բնորոշ հնարավորություններով, և հետևաբար, նրանք պետք է պաշտպանված լինեն այս առաջնահերթությամբ:

ՉԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներածություն

7.17 Պարտատերերը (ֆինանսավորողները) հաճախ չապահովված հիմունքներով միջոցներ են տրամադրում և հաճախ կարող են հանդես գալ որպես պարտապանի ամենախոշոր պարտատեր: Սնանկության շատ դեպքերում հենց տոկոսները վճարելուն կամ հիմնական գումարի (կամ պարտքի հիմնական գումարի մասերի) մարումն իրականացնելուն ի վիճակի չլինելն է արագացնում պարտապանի սնանկությունը: Այդ պատճառով, պարտապանի և իր ֆինանսավորողի միջև փոխըմբռնման հասնելուն նպաստելը կարող է հանգեցնել պարտապանի վճարունակության վերականգնմանը: Սնանկության այն օրենքները, պրակտիկան և գործընթացները, որոնք ունակ են աջակցել նման հանգուցալուծմանը, կարևոր նշանակություն ունեն սնանկության արդյունավետ և գործուն համակարգի գոյության համար:

Ոչ ֆորմալ առողջացում

7.18 Ոչ ֆորմալ առողջացումը ըստ էության վերակազմավորման գործընթաց է, որը տեղի է ունենում պարտապան-կազմակերպության և վերջինիս պարտատերերի միջև բանակցությունների միջոցով, որն ուղեկցվում է վերակազմավորման հարցերով մասնագետի աջակցությամբ, մինչև սնանկության գործընթացի պաշտոնական սկիզբը: Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ այն հաճախ իրենից ներկայացնում է պարտապանի և նրա ֆինանսավորողի (կամ ֆինանսավորողների համախմբի) միջև բանակցությունների իրականացում:

7.19 Այն հիմնարար էական սկզբունքները, որոնք ներկայումս ողջ աշխարհում արտացոլում են առաջադեմ ոչ ֆորմալ գործընթացները, հանգում են այսպես կոչված «Լոնդոնյան մոտեցմանը»: Նշված մոտեցումը առաջին անգամ մշակվել է Անգլիայի բանկի կողմից 1970-ական թվականներին՝ որպես սնանկության գործընթացում բանկերին առավել ակտիվ դերի վերապահման ծրագրի մաս, որը պետք է իրականացվեր կենսունակության գնահատման և առողջացման միջոցով, երբ դա անհրաժեշտ էր առողջացման հավանականության մեծացման և վարկի ընդհանուր դրությունը բարելավելու նպատակով: Լոնդոնյան մոտեցման հիմնական սկզբունքները համակարգված բանակցությունների միջոցով ծախսերի նվազեցումը և կենսունակ կազմակերպությունների լուծարումից խուսափելն էին:

7.20 Այնուհետև Լոնդոնյան մոտեցումը կատարելագործվեց և փոխարիվեց Վերակազմակերպման, սնանկության և սնանկության մասնագետների միջազգային ասոցիացիայի (INSOL) (այսուհետ նաև՝ ԻՆՍՕԼ-*խմբ.*) կողմից «Միջազգային հայտարարություն բազմաթիվ պարտատերերի նկատմամբ կիրառվող ընդհանուր մոտեցման սկզբունքների վերաբերյալ» (INSOL International's International Statement of Principles for a Global Approach to Multi-Creditor Workouts, երկրորդ հրատարակություն, որը լույս է տեսել 2017թ. ապրիլին): Սկզբունքների վերաբերյալ այս հայտարարությունը արժանացել է Համաաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների հավանությանը:

7.21 ԻՆՍՕԼ սկզբունքները ոչ պաշտոնական փորձնական գործընթացների լավագույն փորձին հաղորդակից դարձնելու նպատակով ներառում են հետևյալ հիմնարար սկզբունքները՝

- բոլոր պարտատերերի շահերը հավասարակշռվում են նրանց կողմից ֆինանսական դժվարությունների մեջ գտնվող պարտապանին տրված արձագանքին համապատասխան,
- բոլոր պարտատերերը պետք է համաձայն լինեն պարտքի բռնագանձման ժամանակահատվածին, որպեսզի կարողանան պատշաճ գնահատել

պարտապանի ֆինանսական դրությունը և ուսումնասիրել կարգավորման հնարավորությունը,

- պարտատերերի խմբում շահերի բախումը պետք է վեր հանվի ժամանակին և պատշաճ լուծում ստանա,
- պետք է ստեղծվեն արհեստավարժ խորհրդատուների ներգրավմամբ պարտատերերի մեկ կամ մի քանի կոմիտեներ՝ վեճի կարգավորման հնարավորությունը ուսումնասիրելու և խթանելու նպատակով,
- պարտապանը պետք է իր ակտիվների, պարտավորությունների, բիզնեսի և հեռանկարների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությանը հասանելիություն տա պարտատերերին և արհեստավարժ խորհրդատուներին՝ իր ֆինանսական դրությունը պատշաճ գնահատելու և ցանկացած առաջարկ պարտատերերին ներկայացնելու նպատակով, և
- ցանկացած նոր տրամադրված ֆինանսավորման պետք է շնորհվի գերակա կարգավիճակ:

7.22 ԻՆՍՕԼ սկզբունքները ներկայումս լրամշակվում են՝ որպես Բիզնեսի վերակազմավորման ասիական սկզբունքների մաս, որոնք ներկայումս մշակվում են Սնանկության միջազգային ինստիտուտի և Ասիական գործարարական իրավունքի ինստիտուտի համագործակցությամբ: Նախատեսվում է, որ դրանք վերանայված տարբերակով կիրառարակվեն 2021 թվականի սկզբին: Ակնկալվում է, որ լույս տեսնելուց հետո դրանք կվերածվեն Ասիական տարածաշրջանի համար ոչ ֆորմալ առողջացման գործընթացի լավագույն փորձի չափանիշի:

7.23 Ներկայումս ականատես ենք լինում, որ որոշ երկրներում, այդ թվում՝ Սինգապուրում, կիրառվում է դատարանի որոշմամբ նախատեսված մորատորիում՝ ոչ ֆորմալ առողջացմանն ուղղված բանակցություններին աջակցելու նպատակով: Կարծում ենք, որ երկրի իրավական համակարգում սնանկության գործորով նման օրենսդրական աջակցությունը օժտված է առավելություններով:

Հիմնական առաջարկներ
<p>Առաջարկվում է, որ Հայաստանի սնանկության վերաբերյալ օրենսդրությունը օժտված լինի հետևյալ բնորոշ գծերով՝</p> <ul style="list-style-type: none">● Ապահովված պարտավորությունների և պարտատերերի հետ ոչ ֆորմալ աշխատանքի խրախուսումնալից վերաբերյալ վերոնշյալ սկզբունքները պետք է արտացոլվեն սնանկության ողջ գործընթացում՝ արտացոլվելով սնանկության մասին նոր օրենսգրքի նախագծում:● Սնանկության ընթացքում տրամադրված ֆինանսավորումը պետք է ապահովված պահանջի նկատմամբ օժտված լինի առաջնահերթությամբ՝

պայմանով, որ ապահովված պարտատիրոջ դրությունը անհրաժեշտ
չափով պաշտպանված լինի:

- Լուծարման ընթացքում աշխատողների առաջնահերթությունը ենթակա է
պաշտպանության նաև ապահովված պահանջի իրացմամից ստացված
միջոցների հաշվին:

8. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ՝ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի սկզբունքները

Մնանկության գործերով կառավարչի (սնանկության կառավարչի) գործունեության կարգավորման կամ վերահսկողության համար պատասխանատու մարմինը պետք է՝

- ա) անկախ լինի անհատ ներկայացուցիչներից,
- բ) չափանիշներ սահմանի, որոնք կարտացոլեն օրենսդրության և հասարակության ակնկալիքները արդարության, անկողմնակալության, թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ,
- գ) օժտված լինի պատշաճ իրավասություններով և ռեսուրսներով, ինչը թույլ կտա արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները, պատասխանատվությունը և պարտականությունները⁶⁶:

Ներածություն

8.1 Ինստիտուցիոնալ և գործնական կարողությունները կարևոր նշանակություն ունեն սնանկության ռեժիմի հաջողության համար: Մասնավորապես, դատական համակարգի և սնանկության գործով կառավարիչների դերը կարևոր են սնանկության գործընթացների հաջողության համար: Դրանք կարևոր են համակարգի արդյունավետության համար: Համակարգի ամբողջականությունը և վերջինիս ունակությունը պահպանել դրա թափանցիկությունը կարևոր են դարձնում այն, որ.

- (1) Դատարանն իր կարևոր վերահսկողության իրավազորությունն իրականացնում է սնանկության գործերով նշանակված դատավորների կողմից, ովքեր ունեն մասնագիտացված հմտություններ և գործերն արագ քննելու և որոշումներ կայացնելու ունակություն.
- (2) Սնանկության գործերով կառավարիչները, որոնք նշանակվել են վերակազմակերպման և լուծարման աշխատանքների իրականացման նպատակով, պետք է գործեն հմտորեն և արդյունավետ նման բարդ աշխատանքում.
- (3) Կարգավորողն ունի շուկան ղեկավարելու ունակություն և կարողություն, ներառյալ սնանկության գործով կառավարիչների մասնագիտությունը, որպեսզի ապահովվի համակարգի այս կարևոր հատվածի ամբողջականությունը:

8.2 «Սնանկության իրավունքի մասին» ՄԱԿՄԱԻՀ օրենսդրական ուղեցույցը (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ ուղեցույց) «Սնանկության կառավարչի» որակավորման վերաբերյալ ներառում է հետևյալ դիտարկումը.

⁶⁶ Տե՛ս World Bank, վերը նշված՝ 3:

«Սնանկության գործով կառավարչի նշանակման նպատակով որակավորման որոշման հարցին անդրադառնալիս ցանկալի է հավասարակշռության հասնել բարձր որակավորում ունեցող անձի նշանակմանը հանգեցնող, սակայն անհրաժեշտ որակավորում ունեցող նշանակման ենթակա անձանց շրջանակը սահմանափակող ու դատական ծախսերը ավելացնող, և պահանջվող ծառայության որակի երաշխավորման համար չափազանց ցածր պահանջների միջև»:

8.3 Հաջորդիվ ՅՈՒՆՍԻՏՐԱԼ ուղեցույցով սահմանվում է, որ «սնանկության կառավարիչը պետք է պատշաճ որակավորում ունենա, օժտված լինի սնանկության, ինչպես նաև առևտրային, ֆինանսական և գործարարական հարցերի վերաբերյալ օրենսդրության իմացությամբ, ներառյալ՝ հաշվապահությունը»: ՅՈՒՆՍԻՏՐԱԼ ուղեցույցում նաև ընդգծվում է, որ սնանկության կառավարիչը պետք է օժտված լինի այնպիսի անձնային հատկանիշներով, ինչպիսիք են «ազնվությունը, անկողմնակալությունը, անկախությունը և կառավարչական լավ հմտությունները»:

Սնանկության կառավարիչների պարտականությունները

8.4 Հաշվի առնելով սնանկության զանազան գործընթացներում սնանկության կառավարիչների ունեցած կարևոր դերը թե՛ լուծարման, և թե՛ կազմակերպության փրկության ընթացքում, խելամիտ է, որ վերջիններիս վերապահվեն այնպիսի իրավասություններ, որոնք վերապահվում են կազմակերպության պաշտոնատար անձանց: Նշված պարտականությունները պետք է հստակ սահմանվեն՝ անորոշությունից խուսափելու նպատակով: Դրանք են՝

- ա) զգուշության և ջանասիրության դրսևորման պարտականությունը,
- բ) ազնվորեն և բարեխղճորեն գործելու պարտականությունը, ինչպես նաև սեփական իրավասությունների օգտագործումը և պարտականությունների կատարումը՝ սահմանված նպատակին հասնելու համար, և
- գ) սեփական դիրքը իր կամ այլ անձի համար առավելություն ստանալու նպատակով չօգտագործելու պարտականությունը:

Սնանկության կառավարիչների գործունեության կարգավորումը

8.5 Կարգավորող մարմինները հաճախ օժտված են սնանկության վերաբերյալ օրենսդրության դրույթներին համապատասխան նշանակված սնանկության կառավարիչների նկատմամբ վերահսկողության իրավասությամբ: Նման վերահսկողությունն անհրաժեշտ է օրենքի համաձայն սնանկության կառավարչի նկատմամբ սահմանված պարտականությունների կատարման նկատմամբ մոնիթորինգ և կարգավորում իրականացնելու նպատակով: Սակայն,

մասնագիտացված կազմակերպությունները հաճախ կարևոր դեր են խաղում այս ոլորտում:

8.6 Այլ իրավական համակարգերում կիրառվող կարգավորման ռեժիմները ներառում են՝

ա) «Սնանկության և սնանկության մասին» Հնդկաստանի նոր օրենսգրքով նախատեսվում է, որ միայն գրանցված «Սնանկության մասնագետներ»-ն են իրավասու կատարել Օրենսգրքով նման մասնագետների համար սահմանված պարտականությունները: Սնանկության կառավարչի գրանցման նախապայման է հանդիսանում Սնանկության գործերով մասնագիտացված գործակալության անդամությունը, որը հաստատվում է Խորհրդի կողմից (Օրենսգրքին համապատասխան ստեղծված Հնդկաստանի անվճարունակության և սնանկության գործերով խորհուրդը): «Կարգավորվող ինքնակարգավորում» մոդելի ընտրությունը ապահովում է Սնանկության մասնագիտացված գործակալությունների մրցունակ շուկայի ստեղծումը, որոնք կդրդեն իրենց անդամներին մշակել մասնագիտական ստանդարտներ և էթիկայի կանոնագիրք, կապահովեն իրենց անդամների նկատմամբ վերահսկողության իրականացումը և կարգապահական պատասխանատվության ենթարկումը՝ Խորհրդի կողմից սահմանված և վերահսկվող չափանիշներին համապատասխան:

բ) Հոնկոնգում Պաշտոնական կառավարիչը (ով գլխավոր գործադիր տնօրենի կողմից նշանակվող անկախ անձ է) դատարանների հետ համատեղ օժտված է սնանկության կառավարիչների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ և կարող է միջոցներ կիրառել օրենքին անհամապատասխան վարքագծի դրսևորման դեպքում: Մասնագիտական մարմինները սահմանում են չափանիշներ և հրապարակում կանոններ, որոնց նրանց անդամները պետք է համապատասխանեն:

գ) Սինգապուրում սնանկության կառավարիչների կարգապահության և վերահսկողության համար առաջին հերթին պատասխանատու են մասնագիտական մարմինները, ինչպիսիք են՝ Սնանկության կառավարիչների ասոցիացիան, Սինգապուրի դիպլոմավորված հաշվապահների ինստիտուտը և Սինգապուրի իրավաբանների միությունը: ԱԿՐԱ-ն⁶⁷ ևս օժտված է հաշվապահ հանդիսացող սնանկության կառավարիչների կողմից չափանիշների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման դերով, իսկ Պաշտոնական կառավարիչը, ով Արդարադատության նախարարության հանրային ծառայող է, լուծարման գործընթացի իրականացման դեպքում պատասխանատու է լուծարողների գործունեության նկատմամբ մոնիթորինգի իրականացման համար:

⁶⁷ Հաշվապահական հաշվառման և կորպորատիվ կարգավորման մարմինն է, որը գործում է Սինգապուրի Ֆինանսների նախարարությանը կից:

8.7 Խորհրդատվությունների ստացման գործընթացում հիմնական արձագանքները ուղղված էին սնանկության կառավարիչների գործունեության կարգավորման մեխանիզմների ներդրման և վերահսկողության հարցերին:

8.8 Հայաստանում սնանկության կառավարիչների գործունեության կարգավորման համակարգի ներդնումը գլխավորապես քաղաքականության հարց է, որը պետք է ընդունվի հավասարակշռելով՝

ա) գործուն և բազմակողմ կարգավորման անհրաժեշտությունը, որը կերաշխավորի ֆինանսական և բիզնես համայնքների վստահությունը համակարգի ամբողջականության նկատմամբ, և

բ) Հայաստանում առկա ռեսուրսների ու գոյություն ունեցող ինստիտուտների և համակարգերի հնարավորությունների սահմանափակ լինելը:

8.9 Առաջարկվում է կիրառել կարգավորման հետևյալ կառուցվածքը, որը կներկայացվի ստորև.

Սնանկության հարցերի կարգավորման խորհուրդ
Վերահսկողության և կարգավորման բարձրագույն մակարդակ
Վարքագծի կանոնների հաստատում
Լիցենզավորման և կարգապահական հարցերով վերջնական որոշումների կայացում



Մասնագիտական ասոցիացիաներ
Սնանկության վերաբերյալ գործունեությամբ զբաղվել ցանկացող անձանց ուսուցման պատվիրակված լիազորություն
Ընդունելություն հայցող դիմումների քննարկում և առաջարկների ներկայացում Խորհրդին
Ներկայացված բողոքների քննարկում և կարգապահական հարցերի վերաբերյալ Խորհրդին առաջարկների ներկայացում



Սնանկության կառավարիչներ

8.10 Այս համակարգում սնանկության կառավարիչներին միավորումը, որի ներքո վերջիններս գործում են և պետք է անդամակցեն, Մասնագիտական ասոցիացիաներն են: Անհրաժեշտ է սահմանել պահանջ, առ այն, որ սնանկության կառավարիչները կարող են գործունեություն ծավալել, եթե

անդամակցում են մասնագիտական ասոցիացիային: Ասոցիացիայի անդամ դառնալու և հետագայում անդամության պահպանման համար անձը պետք է սնանկության ոլորտում տիրապետի անհրաժեշտ գիտելիքների և փորձի և անդամության ընթացքում ենթարկվի էթիկայի, կոմպետենտության և կարգապահության չափանիշներին և ընթացակարգերին, որոնց պահպանումը պահանջվում է Մասնագիտական ասոցիացիայի կողմից:

8.11 Կարգավորման խորհուրդը, որը պետք է կարգավորի Մասնագիտական ասոցիացիաների գործունեությունը, պետք է կառավարվի համապատասխան պետական գերատեսչության կողմից կամ կարող է բաղկացած լինել տարբեր պետական պաշտոնյաներից և ոլորտային ներկայացուցիչներից, ովքեր շահագրգռված են սնանկության գործուն և արդյունավետ կարգավորման հարցում:

8.12 Կարծում ենք՝ Կարգավորման խորհուրդը կարևոր դեր պետք է խաղա սնանկության կառավարչի ուսուցման, լիցենզավորման, ինչպես նաև կարգապահական ներգործության ապահովման գործում, եթե սնանկության կառավարիչը չի իրականացնում իր պարտականությունները և պարտավորությունները: Կարող է նպատակահարմար դիտարկվել Մասնագիտական ասոցիացիաներին նշված լիազորությունների պատվիրակումը՝ Կարգավորող խորհրդի վերահսկողության ներքո: Դիտարկումներն ու առաջարկները կարող են փոխանցվել Խորհրդին՝ վերջնական որոշման կայացման նպատակով: Այն պետք է նաև հնարավորություն ունենա իրականացնել սեփական քննություն, եթե հանգի այն եզրակացության, որ բողոքը չի քննվել ամբողջությամբ: Կարգավորող խորհրդի համար կարևոր դերի սահմանում կլինի, եթե վերջինս հնարավորություն ունենա կարգավորել Մասնագիտական ասոցիացիաների գործունեությունը: Նկատի է առնվում, որ Մասնագիտական ասոցիացիա դառնալու և այդ դերը կատարելու համար հավատարմագրված մնալու նպատակով կպահանջվի պահպանել Մասնագիտական ասոցիացիայի կանոնադրության և վարքագծի տարատեսակ կանոնագրքերի դրույթները (օրինակ՝ էթիկայի սկզբունքները), ծրագրերը (օրինակ՝ կրթական ծրագրերը) և կարգապահական ընթացակարգերը, որոնք պետք է համապատասխանեն Կարգավորող խորհրդի կողմից սահմանված նվազագույն չափանիշներին և կատարվեն հետևողական ու պատշաճ կերպով: Եթե, օրինակ, դատարանի կողմից պահանջված կարգապահական քննությունը չի իրականացվել կամ քննությունը թերի է իրականացվել, ապա Մասնագիտական ասոցիացիայի հավաստագրումը կարող է հետ կանչվել:

8.13 Առաջարկվող համակարգի կողմից հետապնվող կարևոր արդյունքներից է լուրջ զանցանքների քննության իրականացման և ապացուցված զանցանքների դեպքում համապատասխան սանկցիաների կիրառման ապահովումը: Անհրաժեշտ է, որպեսզի օրենսդրորեն կամ Կարգավորող խորհրդի կողմից

սահմանված ուղեցույցներում գրավոր կերպով ամրագրվեն այն չափանիշները, որոնք հնարավորություն կտան որակել զանցանքը:

8.14 Նման ուղեցույցը կարող է ընդգրկել հարցերի չսահմանափակված հետևյալ շրջանակը՝

ա) արդյո՞ք առկա են խախտման առկայությունը փաստող ապացույցներ,
բ) արդյո՞ք սնանկության կառավարիչը (կամ վերջինիս հետ սերտորեն փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձը) շահույթ է ստացել կազմակերպության գործերի կառավարման արդյունքում,

գ) արդյո՞ք առկա են ապացույցներ, որ շահերի բախման չբացահայտված հանգամանքներում սնանկության կառավարիչը (կամ վերջինիս հետ սերտորեն փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձը) շահույթ է ստացել,

դ) արդյո՞ք առկա են ապացույցներ, որ կոպիտ անփութությունը հանգեցրել է գույքի արժեքի էական կորստի,

ե) արդյո՞ք առկա են ապացույցներ, որ մի կողմի շահերը (անվճարունակ կազմակերպության տնօրեն(ներ), մեկ կամ մի քանի կոնկրետ պարտատերեր կամ կազմակերպության ակտիվների ձեռք բերման գործում շահագրգիռ երրորդ անձ) անարդարացիորեն կամ ոչ պատշաճ կարգով գերադասվել են սնանկության կառավարչի կողմից:

8.15 Ցանկանում ենք շարունակել Մասնագիտական ասոցիացիաների կողմից վերոնշյալ աղյուսակում նշված գործառույթների իրականացման հնարավորության հարցի քննարկումը: Եթե դա դիտվի անհնարին, ապա որպես այլընտրանքային համակարգ՝ կարող է դիտարկվել «Մասնագիտական ասոցիացիաներ» կոչվող միջին օղակի վերացումը, իսկ բոլոր նշված իրավասությունները փոխանցվեն Սնանկության հարցերի կարգավորման խորհրդին: Կարևոր է կարգավորման գործառույթներից յուրաքանչյուրի կատարումը, ինչ վերաբերում է նշված գործառույթները կատարող անձին, ապա դա ավելի քիչ կարևոր է, եթե գործառույթներն իրականացվում են ջանասիրաբար և արդյունավետորեն:

Կարողությունների զարգացում

8.16 Սնանկության կառավարիչների կողմից իրենց պարտականությունները հմտորեն և ծախսարդյունավետ իրականացնելու կարողության հարցը ևս բարձրացվել է խորհրդատվությունների անցկացման գործընթացում: Այսպիսի արդյունքի հնարավոր է հասնել սնանկության կառավարիչ դառնալու համար անձի կրթության և հմտության վերաբերյալ պարտադիր պահանջների սահմանմամբ, ինչպես նաև անդամության պահպանման նպատակով կրթական պահանջների նախատեսմամբ: Կրթական բաղադրատարրը կարող է ապահովվել Մասնագիտական ասոցիացիաների կողմից:

8.17 Կարող են կազմակերպվել նաև սեմինարներ այնպիսի կազմակերպությունների կողմից, ինչպիսին է, օրինակ, Ասիական զարգացման բանկը (ADB):

8.18 Հարկ է նաև դիտարկել Առևտրային դատարանի պրակտիկ օրինակները և նախադեպերի զարգացումը՝ սնանկության կառավարիչների գործունեության ընթացքում տարբեր ասպեկտներով հաշվի առնելու նպատակով: Հետազոտական զեկույցի 5.47-րդ պարագրաֆում նշված է այն ոլորտների ցանկը, որոնց վերաբերյալ հարկ է մշակել և հրապարակել ղեկավար ուղեցույցներ՝ նույնական օգտակար արդյունքների հասնելու նպատակով:

8.19 Սույն Ձեկույցի 4-րդ գլխում ներկայացված է կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնությունների ցանկը, որոնք նմանապես ունակ են ապահովել սնանկության գործընթացի մասնակիցների, մասնավորապես սնանկության կառավարիչների ունակությունների, մասնագիտական ունակությունների շարունակական զարգացումը: Ձեկույցի .4-րդ գլխում նշվում են մի շարք փաստաթղթեր, որոնց դեպքում հնարավոր է տիպային ձևերի պատրաստումը: Սա օգնում է մասնակիցներին հասկանալ, թե ինչ է պահանջվում ոլորտներից յուրաքանչյուրում, ինչպես նաև տիպային փաստաթղթերի տրամադրման շնորհիվ նվազեցնում է ծախսերը:

8.20 Ցանկանում ենք արձանագրել, որ համակարծիք ենք «Ճանապարհային քարտեզի զեկույցում» սնանկության կառավարիչների անհրաժեշտ որակավորման և կրթության որոշման համար առաջակվող քայլերին:

Սնանկության կառավարիչների կողմից գանձման ենթակա վճարները

8.21 Շահագրգիռ անձանց հետ խորհրդակցությունների արդյունքում արձագանք ստացվեց առ այն, որ սնանկության գործերում սնանկության կառավարչի վարձատրության հարցը պետք է կարգավորվի որպես «առաջնահերթություն ունեցող հարց»: Հետևաբար, ստորև ներկայացնում ենք ինչպես մասնագիտական, այնպես էլ երրորդ անձանց կողմից կրած և կազմակերպությանը փոխանցված ծախսերի վերաբերյալ մեր դիտարկումները:

8.22 Երկու դեպքում էլ ուռճացված վճարի տրամադրման պահանջը պետք է դիտարկել որպես մասնագիտական զանցանք, որը կարգավորվում է սնանկության կառավարչի վարքագծի ընդհանուր կանոններով, քանի որ սնանկության կառավարիչները օգտվում են վստահությունից, և մեծ գումարներ պահանջելը հանգեցնում է պարտատերերին պարտքերի վերադարձման նվազեցմանը:

8.23 Ինչ վերաբերում է սնանկության կառավարչին վերադարձվող երրորդ կողմի ծախսերին, ապա շատ պետություններում որպես պատասխան արձագանք ընդունվում է միայն փաստացի կրած արտաքին ծախսերի փոխհատուցման պահանջ ներկայացնելու հնարավորությունը: Ինչը նշանակում է, որ ծախսերին չեն կարող ավելացվել սնանկության կառավարչի կամ գրասենյակի ծախսերը: Սովորաբար ղեկավար ուղեցույցներում գանձման ենթակա ծախսերի օրինակները թվարկելիս կարող են նաև նշվել այն ծախսերը, որոնք փոխհատուցման ենթակա չեն, օրինակ՝ ոչ պրոֆեսիոնալ աշխատակիցների կամ մեկ թղթի համար առավելագույն թույլատրելի վճարից ավելի գումարով լուսապատճենման համար:

8.24 Ինչ վերաբերում է սնանկության կառավարչի վարձատրությանը, ապա այն ավելի բարդ հարց է, իսկ խորհրդակցությունների ընթացքում բարձրացված խնդիրները այս դեպքում սովորական երևույթ են: Որոշ երկրներում սնանկության կառավարիչներին թույլատրվում է իրականացնել վճարումների գանձումը ժամավճարի հիման վրա, սակայն դա կարող է հանգեցնել անընդունելի հետևանքների, եթե կատարվող աշխատանքը համադրելի չէ գույքի արժեքին (և վճարը գանձվում է ժամավճարի հիման վրա): Սա կոչվում է «չափից դուրս ծառայության մատուցում»: Այլ երկրներում թույլատրվում է տոկոս ստանալ անշարժ գույքից, սակայն դա կարող է հանգեցնել ոչ պատշաճ արդյունքերի, եթե գույքի արժեքը չափազանց մեծ է, իսկ կատարված աշխատանքն իր բնույթով՝ պարզ, օրինակ՝ հողամասի վաճառք է իրականացվել: Տարատեսակ աշխատանքների համար տարբեր սանդղակների սահմանումը կարող է հանգեցնել անտեզի կողմնակալությունների դրսևորման:

8.25 Կատարյալ լուծում գոյություն չունի, սակայն նմանատիպ խնդիրների լուծման համար առկա են մի քանի տարբերակներ: Օրինակ, մինչև սնանկության կառավարչին վարձատրության վճարումը այն պետք է հաստատվի պարտատերերի կողմից, և եթե անգամ այն վճարվել է, յուրաքանչյուր պարտատիրոջ պետք է հնարավորություն տրվի վիճարկել այն դատարանում (այնուհետև դատարանը կարող է այն ուղղել մասնագետին՝ բողոքի հիմնավորվածությունը պարզելու նպատակով): Սնանկության կառավարիչը պետք է ներկայացնի բավարար տեղեկատվություն և մանրամասներ՝ բողոքը քննելու համար (այլ իրավական համակարգերում պահանջվող մանրամասների վերաբերյալ առկա են նախադեպեր, որոնք կարող են հարմարեցվել Հայաստանում կիրառման համար):

8.26 Կարևոր է վարձատրության վճարումն իրականացնել համաչափության սկզբունքից ելնելով: Նշվածին հասնելու միջոցներից է ժամավճարի հիման վրա գանձման թույլատրումը, սակայն սահմանելով պայման առ այն, որ ստացված գումարը դիտարկվի դրա նպատակահարմարությունը պայմանավորող մի շարք հանգամանքներ հաշվի առնելով, օրինակ՝ գույքակազմի արժեքը (այլ իրավական

համակարգերում նշված հանգամանքների վերաբերյալ առկա են նախադեպեր, որոնք կարող են հարմարեցվել այստեղ կիրառման համար):

Հիմնական առաջարկներ

Առաջարկվում է ստեղծել կարգավորող համակարգ, որը կհամապատասխանի վերոնշյալ դիտարկումներին, և՛

- Սնանկության կառավարիչները պետք է ունենան օրենսդրորեն ամրագրված պարտականություններ, որոնք նույնական կլինեն կազմակերպության պաշտոնատար անձանց պարտականություններին: Այդ պարտականություններն են՝

ա) ջանասիրության և զգուշության դրսևորման պարտականությունը,

բ) արդար և բարեխիղճ գործելու պարտականությունը, ինչպես նաև իր պարտականությունները և պարտավորությունները օրենքով սահմանված նպատակներին համապատասխան կատարելը, և

գ) սեփական դիրքը ոչ պատշաճ օգտագործելով իր կամ երրորդ անձի շահը չհետապնդելու պարտականությունը:

- Չափանիշների սահմանման, սնանկության կառավարիչների ուսուցման, հաշվառման և կարգապահական պատասխանատվության (անհրաժեշտության դեպքում) վերաբերյալ դրույթներ սահմանելիս առաջարկում ենք հաշվի առնել սույն զեկույցի այս բաժնում ներկայացված կառուցվածքը:
- Համակարգը պետք է ընդգրկի նաև վերևում նշված տիպին համապատասխան մասնագիտական ասոցիացիաների պարտականությունները, և սանկցիաներ՝ դրանց չկատարման պարագայում:
- Կարողությունների զարգացումը պետք է կազմակերպվի առաջարկներին համապատասխան:
- Սնանկության կառավարչի կողմից ծախսերի փոխհատուցում ստանալիս հարկ է հաշվի առնելի վերոնշյալ միջազգային փորձը:

Ղեկավար սկզբունքներ

Ուժեղ ինստիտուտները և նորմատիվ իրավական ակտերը վճռական նշանակություն ունեն սնանկության արդյունավետ համակարգի համար: Ինստիտուցիոնալ համակարգը բաղկացած է երեք հիմնական բաղադրատարրերից՝ սնանկության համար պատասխանատու ինստիտուտներ, օպերացիոն համակարգ, որի միջոցով մշակվում են գործերը, որոշումները և պահանջները, որոնք անհրաժեշտ են այդ ինստիտուտների ամբողջականության պահպանման համար. ընդունված է այն տեսակետը, որ սնանկության համակարգի ամբողջականությունը դրա հաջողության գրավականն է...⁶⁸

Սնանկության վերաբերյալ օրենսդրությունը ընդհանուր առևտրային իրավունքի համակարգի մասն է և դրա պատշաճ կիրառումը էապես կախված է ոչ միայն լավ զարգացած առևտրային իրավական համակարգից, այլև օրենքի կիրառման համար լավ զարգացած ինստիտուցիոնալ հիմքի առկայությունից:⁶⁹

Իրավական համակարգերի մեծ մասում սնանկության վարույթն իրականացվում է դատական մարմնի կողմից՝ հաճախ տնտեսական կամ ընդհանուր իրավասության դատարանների, իսկ որոշ դեպքերում՝ սնանկության գործերով մասնագիտացված դատարանների կողմից: Երբեմն դատավորները տիրապետում են հատուկ գիտելիքների և պատասխանատու են միայն սնանկության գործերի համար, մինչդեռ մեկ ալ տարբերակում սնանկության գործերը դատավորի լայն պարտականությունների մի մասն է կազմում ընդամենը: Որոշ իրավական համակարգերում ոչ դատական կամ քվազիդատական մարմինների կողմից իրականացվում են այն պարտականությունները, որոնք այլ իրավական համակարգերում ապահովվում են դատարանների կողմից⁷⁰:

Ներածություն

9.1 Դատական համակարգը կարևոր դեր ունի ցանկացած պետության սնանկության համակարգի հաջողության համար: Հայաստանը այս առումով բացառություն չէ:

⁶⁸ Տե՛ս World Bank, վերը նշված՝ 3, էջ 8:
⁶⁹ Տե՛ս UNCITRAL, վերը նշված 1, էջ 33:
⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

Դատարանի դերը

9.2 Սնանկության գործընթացի շատ ասպեկտների անբաժանելի մասն է դատարանի ներգրավվածությունը Օրինակ, պարտատերը և այլ շահագրգիռ անձինք հնարավորություն ունեն դիմել դատարան՝ անվճարունակ կազմակերպության լուծարման պահանջով:

9.3 Դատարանը նշված ոլորտում իրականացնում է նաև վերահսկողական կարևոր լիազորություն: Օրինակ, դատարան կարող են ներկայացվել հետևյալ տիպի գործերը՝

ա) եթե սնանկության գործընթացի ընթացքում վեճ է ծագել, ապա կարող է սկսվել դատաքննություն՝ այն լուծելու նպատակով,

բ) եթե շահագրգիռ կողմը համաձայն չէ սնանկության կառավարչի որոշման հետ, ապա նա կարող է բողոքարկել այն դատարան,

գ) ցանկացած շահագրգիռ կողմ կարող է վիճարկել սնանկության ցանկացած գործընթաց, եթե վերջինս ենթարկվել է չարաշահումների, օրինակ՝ պարտատերերի ձայների քանակը հաշվելիս:

9.4 Ինչպես բխում է վերոնշյալից՝ դատարանը կարևոր վերահսկողական իրավասություն է իրականացնում:

Դատավորների կարողությունը

9.5 «Ճանապարհային քարտեզի զեկույցում» սնանկության համակարգի դատական բաղադրատարրի վերաբերյալ արտահայտվել են մտահոգություններ, որոնք առաջին հերթին վերաբերում են դատավորների պատրաստվածության և կարողությունների խնդրին: Համաձայն ենք նրանց կողմից կատարված մի շարք առաջարկներին (որոնք հակիրճ շարադրված են սույն Ռազմավարական զեկույցի 3.18-3.19-րդ կետերում), մասնավորապես աշխատանքային ծանրաբեռնվածության թեթևացման և ձգձգումները նվազագույնի հասցնելու նպատակով լրացուցիչ թվով դատավորների նշանակման անհրաժեշտությանը՝ ապահովելով դատավորների մասնագիտական ուսուցման և որակավորման անդադար բարձրացումը, համակարգչային և այլ տեխնոլոգիաների հասանելիությունը դատական համակարգին, և սնանկության հարցերով վերաքննիչ դատարանի ստեղծումը (եթե վերջին առաջարկը իրագործելի չէ, ապա պրակտիկայում վերաքննիչ կոլեգիայի կազմում հնարավորիս պետք է ընդգրկվեն տնտեսական գործերով (իդեալական դեպքում՝ սնանկության գործերով) փորձ ունեցող դատավորները):

9.6 Շահագրգիռ անձանց հետ խորհրդակցությունների ընթացքում ստացված արձագանքի ընդհանուր թեման է սնանկության վարույթի հետաձգման կամ խաթարման նպատակով դատական համակարգի օգտագործմամբ չարաշահման

ենթադրյալ փորձերի գերակշռությունը: Նման կարծիքների հիմնավոր լինելու դեպքում կարող է ի չիք դարձվել սնանկության համակարգերի ամբողջականության վերաբերյալ առկա վստահությունը: Այդ իսկ պատճառով կարևոր է չհանդուրժել նման չարաշահումները:

9.7 Չարաշահումների նման փորձերի կանխման հիմնական միջոցը արագ և կանխատեսելի դատական ակտերի կայացումն է: «Կանխատեսելի» ասելով նկատի ունենք, թե ողջ պետությունում «Սնանկության մասին» օրենքը ինչպես է մեկնաբանվում և կիրառվում՝ օրենքի հասկացության նկատմամբ անորոշությունը բացառելու նպատակով: Ինչ վերաբերում է «արագ» բառին, ապա նկատի ունենք, որ անհրաժեշտ են բավարար թվով սնանկության գործերով մասնագիտացված դատավորներ, որպեսզի ներկայացված գործերը ընդգրկվեն քննության ենթակա գործերի ցանկում հնարավորինս կարճ ժամկետներում, իսկ որոշումներն ընդունվեն անմիջապես դատական նիստից հետո: Այն բանից հետո, երբ ակնհայտ կդառնա, որ գործընթացի չարաշահումները չեն հանգեցնի «Սնանկության մասին» օրենքով հաստատված ընթացակարգի հետաձգմանը, ամենայն հավանականությամբ նման խախտումները կդադարեն, քանի որ կողմերը պարզապես այլևս շահագրգռվածություն չեն ունենա ընտրելու այդ ճանապարհը:

9.8 Բացի այդ, այն դեպքերում, երբ դատարան ներկայացված հայցադիմումները համարվում են անհիմն, դատարանին պետք է հասանելի լինի սանկցիայի կիրառման հնարավորություն՝ պարտավորեցնելով պարտված կողմին վճարել պարտապանի և վերջինիս կառավարչի գործունեության հետ կապված ծախսերը: Չնայած իրավական պաշտպանության այս միջոցը հարկ է օգտագործել հազվադեպ, դրա հասանելիությունը կզսպի չհիմնավորված գործողությունների կատարումը:

Հիմնական քաղաքական ընտրություն՝ սնանկության գործընթացների նկատմամբ դատական վերահսկողության դերը

9.9 Առաջարկում ենք սնանկության գործերով դատավորների ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված ևս մեկ այլընտրանքային տարբերակ: Ներկայումս սնանկության տարբեր գործընթացների նկատմամբ փուլերի գերակշռող մասում դատարանն օժտված է հաստատման և վերահսկողության բարձրագույն իրավասությամբ: Այլընտրանք կարող է լինել այն, որ օրենքի միջոցով կառուցվածքային առումով սահմանվեն տարատեսակ գործընթացների իրականացման ընթացքը, իսկ Դատարանի դերը սահմանափակվի զուտ բարդ խնդիրների, հարցերի և վեճերի լուծմամբ: Նշված մոդելի համաձայն՝ Դատարանը հիմնականում օգնում է անհրաժեշտության դեպքում, սակայն գործընթացը ընթանում է լիցենզավորված և կարգավորվող սնանկության կառավարչի վերահսկողության ներքո՝ առանց Դատարանի

միջամտության: Այսինքն, Դատարանի կողմից բոլոր քայլերի հաստատման պահանջ սահմանված չէ: Դատարանի դերն այն է, ինչին վերջինս տիրապետում է ամենից լավ՝ լուծել բարդ և վիճելի հարցերը:

9.10 Անկախ ընտրված մոտեցումից՝ կարևոր է, որ սնանկության գործընթացի ընթացքում ցանկացած տուժող կողմ հնարավորություն ունենա դիմել դատարան՝ խնդրելով վերանայել գործընթացի ընթացքը և ցանկացած վեճի վերաբերյալ որոշում կայացնել:

9.11 Բացի այդ, օրենսդրությամբ պետք է երաշխիքներ ամրագրված լինեն, որոնք կկանխեն գործընթացի չարաշահումը և հնարավորություն կտան ցանկացած չարաշահման դեպք հասցնել դատարան:

9.12 Նշված տարբերակը քննարկելու նպատակը սնանկության տարատեսակ գործընթացների հետ կապված ծախսերը և ձգձգումները նվազագույնին հասցնելն է՝ սնանկության կառավարչի դերի մեծացման և համապատասխանաբար դատարանի կողմից որոշումները հաստատելու դեպքերի նվազեցմամբ այն պարագայում, երբ առկա չէ վեճ կամ վիճելի հարց:

9.13 Այս մոտեցումն ընդունվել է մի շարք երկրներում, քանի որ այն նվազեցնում է դատական համակարգի նկատմամբ առկա ծանրաբեռնվածությունը, և որոշ մեկնաբաններ կարծում են՝ որոշ որոշումներ առավել լավ ընդունվում են սնանկության կառավարիչների կողմից, որոնց առևտրային հարցերով դատողությունը հիմնված է առավել մեծ գործարարական փորձի վրա:

9.14 Քաղաքականության ընտրությունը պայմանավորված չէ ծայրահեղություններով՝ հրաժարվել դատարանի մասնակցությունից կամ նախատեսել դատարանի էական միջամտություն: Փոխարենը, այդ կարելի է դիտարկել որպես ներկայումս դատարանին փոխանցման ենթակա բոլոր հարցերի դիտարկման և այն հարցի քննարկման հնարավորություն, թե կարող է արդյոք այդ հարցերի մի մասը (և եթե այո, ապա որոնք) հանվել դատարանի կողմից պարտադիր հաստատման ենթակա հարցերի ցանկից և փոխարենը՝ դատարան ներկայացվեն միայն վեճի կամ կարևոր նշանակություն ունենալու դեպքում:

Հիմնական առաջարկներ
<p>Հիմնական առաջարկներն են՝</p> <ul style="list-style-type: none">• Հարկ է բոլոր հնարավոր միջոցներով խրախուսել դատավորների մասնագիտացումը սնանկության գործերով, ներառյալ՝ վերաքննիչ վարույթում:

-
- Հարկ է քայլեր ձեռնարկել դատարանում անհիմն հայցերի հարուցումը կանխելու նպատակով:
 - Իրականացնել դատավորների կարողությունների բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ:
 - Հարկ է քննարկել, թե արդյոք ներկայումս դատարանի քննությանը կամ հաստատմանը ենթակա հարցերը կարող են լուծվել պարտատերերի քվեարկությամբ կամ նշանակված սնանկության կառավարչի որոշմամբ (պայմանով, որ նշված հարցի հետ կապված ցանկացած հարց կամ սնանկության կառավարչի կողմից հայցվող ցանկացած հարցի լուծում կարող է ներկայացվել դատարան):

10. ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի սկզբունքները

Սնանկության գործընթացը կարող է պարունակել միջազգային տարրեր, և պետության իրավական համակարգում պետք է սահմանված լինեն հստակ կանոններ՝ կապված իրավազրության, օտարերկրյա դատական ակտի ճանաչման, տարբեր պետությունների դատարանների համագործակցության և իրավունքի ընտրության հարցերի հետ: Անդրսահմանային հարցերի արդյունավետ լուծման հիմնական գործոնները սովորաբար ներառում են՝

- ա) սնանկության օտարերկրյա վարույթի արագ և հստակ ճանաչում,
- բ) սնանկության օտարերկրյա վարույթի ճանաչման հարցում դատական աջակցության տրամադրում,
- գ) օտարերկրյա սնանկության կառավարչի կողմից դատարաններին և այլ իրավասու մարմիններին դիմելու հնարավորության ապահովում,
- դ) սնանկության օտարերկրյա վարույթի ընթացքում դատարանի և սնանկության կառավարչի միջև համագործակցության ապահովում, և
- ե) ներպետական և օտարերկրյա պարտատերերի միջև խտրականության բացառում⁷¹:

Անդրսահմանային սնանկություն

10.1 Միջազգային առևտուրը շարունակում է աճել: Ասվածը պահանջում է, որպեսզի անվճարունակության գործընթացները արդյունավետ իրականացվեն նաև սահմաններից դուրս, երբ ֆինանսական վատ դրությունը հանգեցնում է միջազգային առևտրի մասնակիցներից մեկի անվճարունակությանը: Օրենսդրության մեջ արդյունավետ և համագործակցային գործընթացների բացակայության պայմաններում, որոնք վերաբերում են անվճարունակության միջազգային ասպեկտներին, գործընթացը դառնում է դժվար, թանկ, և արդյունքում լուծումը հաճախ ձգձգվում է:

10.2 Համաձայն միջազգային կարևոր փաստաթղթերի⁷², հաշվի առնելով, որ սնանկության վարույթը կարող է ունենալ միջազգային ասպեկտներ՝ ներպետական իրավական համակարգը պետք է սահմանի հստակ կանոններ՝ կապված իրավազրության, օտարերկրյա դատարանների վճիռների ճանաչման, տարբեր երկրների դատարանների միջև համագործակցության և օրենքի

⁷¹ Տե՛ս World Bank, վերը նշված՝ 3, International Monetary Fund, վերը նշված՝ 8, էջ 46:

⁷² The World Bank, above; International Monetary Fund, above at page 46.

ընտրության հետ: Անդրսահմանային հիմնախնդիրների արդյունավետ մշակման հիմնական գործոնները սովորաբար ներառում են.

- (a) Պարզ և արագ գործընթաց օտարերկրյա սնանկության վարույթի ճանաչման համար.
- (b) Աջակցություն, որը կտրամադրվի օտարերկրյա սնանկության վարույթի ճանաչման պահից.
- (c) Սնանկության գործերով օտարերկրյա կառավարիչների հնարավոր հասանելիությունը դատարաններին և այլ մարմիններին.
- (d) Միջազգային սնանկության վարույթում դատարանների և սնանկության գործերով օտարերկրյա կառավարիչների համագործակցությունը, և
- (e) Խտրականության բացառումը օտարերկրյա և ներքին պարտատերերի միջև:

Պատմական ենթադրույթ

10.3 1997 թվականի մայիսի 30-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեան առաջարկեց բոլոր պետություններին վերանայել սնանկության վերաբերյալ իրենց օրենսդրության անդրսահմանային տարրերը՝ պարզելու համար, թե արդյոք դրանք համապատասխանում են սնանկության ժամանակակից համակարգի արդյունավետությանը, և բարենպաստ եզրակացություն տալ ՄԱԿՄԱԻՀ կողմից մշակված Տիպային օրենքին՝ հաշվի առնելով միջազգային մակարդակով անդրսահմանային սնանկությունը կարգավորող օրենսդրության համապատասխանեցման անհրաժեշտությունը: Այդ պահից ի վեր՝ Տիպային օրենքն ընդունվել է 51 իրավական համակարգերում (2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ):

10.4 Մեր առաջարկն է՝ Հայաստանում նախաձեռնվող ցանկացած օրենսդրական փոփոխություն պետք է ներառի նաև Մոդելային օրենքի ընդունումը: Նման իրավական ակտը առավել մեծ վստահություն և արդյունավետություն կբերի անդրսահմանային սնանկության միջազգային այն հարցերի լուծման ուղղությամբ, որոնք ազդում են Հայաստանի վրա, և այս պատճառաբանությամբ առավել գրավիչ կլինի երկրում օտարերկրյա ներդրումների համար:

Տիպային օրենքի նպատակն ու բովանդակությունը

10.5 Անդրսահմանային սնանկության մասին ՄԱԿՄԱԻՀ Տիպային օրենքի նպատակը (Տիպային օրենք) աջակցելն է՝

-
- դատարանների և օտարերկրյա ներկայացուցիչների միջև համագործակցությանը,
 - առևտրի և ներդրումների համար իրավական որոշակիության ապահովմանը,
 - անդրսահմանային սնանկության արդար և արդյունավետ կառավարմանը,
 - պարտապանի ակտիվների արժեքի մեծացմանը և պաշտպանությանը,
 - խնդրահարույց ձեռնարկությունների առողջացմանը

10.6 Տիպային օրենքի հիմնական ուղղություններն են՝

- օտարերկրյա ներկայացուցիչների համար դատարան ուղղակի հասանելիության ապահովումը,
- ճանաչման սկզբունքները և ընթացակարգերը, օգնություն և աջակցության ցուցաբերումը,
- դատարանների փոխգործակցության իրավական շրջանակները,
- զուգահեռ ընթացող վարույթների փոխհարաբերակցությունը,
- հարգել միջազգային ծագումը, աջակցել միասնականությանը և բարեխղճությանը:

10.7 Տիպային օրենքի հիմնական կառուցվածքով նախատեսվում է՝

- ճանաչման վերաբերյալ դիմումների ընդունումը,
- օտարերկրյա ներկայացուցիչների և պարտատերերի ուղղակի հասանելիությունը դատարանին,
- օտարերկրյա դատարաններ հարցումների ներկայացումը,
- համագործակցությունը դատարանների և պաշտոնատար անձանց միջև, և
- զուգահեռ ընթացող վարույթներ հավասարակշռումը:

10.8 Օտարերկրյա վարույթի ճանաչումը Տիպային օրենքով նախատեսվող էական նախապայմանն է և բոլոր առավելությունների բանալին: Ճանաչման և դատական պաշտպանության ստացման գործընթացը ներառում է օտարերկրյա դիմումի ներկայացումը և հիմնական շահի կենտրոնի որոշումը (կամ ՀՇԿ) և օտարերկրյա հիմնական կամ ոչ հիմնական վարույթի ճանաչումը (ՕՀՎ կամ ՕՈՀՎ): Հնարավոր է նաև ժամանակավոր դատական պաշտպանության տրամադրում:

10.9 ՀՇԿ-ի որոշումը սկսվում է հերքվող կանխավարկածից առ այն, որ գրանցված գրասենյակը կամ պարտապանի մշտական բնակության վայրը հանդիսանում է վերջինիս ՀՇԿ-ն: Երրորդ անձանց կողմից այս ենթադրությունը ստուգելու օբյեկտիվ չափանիշները ներառում են՝

- որտե՞ղ է պարտապանը գրանցված կամ հաշվառված կամ ապրում.
 - որտե՞ղ է տնօրենների նստավայրը կամ որտե՞ղ են նրանք հանդիպում,
 - պարտապանի գործունեության և բիզնեսի բնույթը,
 - որտե՞ղ են իրականացվում պարտապանի վարչական գործառույթները:
-

10.10 Տիպային օրենքի 19-րդ հոդվածը նախատեսում է ժամանակավոր դատական պաշտպանության շնորհման հնարավորություն՝ մինչև ՕՀՎ կամ ՕՈՀՎ որոշումը, իսկ 20-րդ հոդվածը նախատեսում է ինքնաբերաբար դատական պաշտպանություն պարտապանի դեմ գործողություններ սկսելը կամ շարունակելը կասեցնելու, ինչպես նաև հարկադիր կատարման կամ օտարման կամ ապահովված իրավունքի իրացումը կասեցնելու միջոցով (միայն ՕՀՎ դեպքում):

10.11 21-րդ հոդվածը նախատեսում է պարտապանի ակտիվների կամ պարտատիրոջ շահերի վերջնական դատական պաշտպանության հնարավորությունը և սահմանում է այնպիսի իրավասություններ, ինչպիսիք են հանրային փորձաքննությունը և փաստաթղթերի ներկայացման պարտադիրությունը (ՕՀՎ կամ ՕՈՀՎ): 22-րդ հոդվածը պատշաճ պաշտպանություն է երաշխավորում պարտատերերի և այլ շահագրգիռ անձանց համար: Դատարանների և պաշտոնատար անձանց հասմագործակցության մասին դրույթները նախատեսված են 25-27-րդ հոդվածներով, որոնցով նախատեսվում են սնանկության հարցերում միջազգային համագործակցության շրջանակները:

10.12 Հոդված 25 (1)-ը պարտավորեցնում է դատարաններին հնարավորինս համագործակցել օտարերկրյա դատարանների և ներկայացուցիչների հետ, իսկ 25 (2)-րդ հոդվածը նախատեսում է դատարանների միջև հաղորդակցումը:

10.13 28-րդ և 29-րդ հոդվածները նախատեսում են զուգահեռ ընթացող վարույթների հավասարակշռումը ՕՀՎ բացումից հետո: Տեղական վարույթը կարող է սկսվել միայն այն դեպքում, երբ պարտապանը տեղում ակտիվներ ունի: Եթե օտարերկրյա և ներպետական վարույթները ընթանում են միաժամանակ, անհրաժեշտ է համագործակցության իրականացում (ինչպես որ նախատեսված է 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածներով) և դատական պաշտպանության տրամադրման հետևողականություն՝ 19-րդ և 21-րդ հոդվածներին համապատասխան:

Առաջարկ

10.14 Առաջարկում ենք Հայաստանի կողմից Տիպային օրենքի ընդունում և դրա ներառում սնանկության վերաբերյալ օրենսդրության մեջ: Ներկայացված առաջարկն ունի երկու պատճառ: Առաջին, Տիպային օրենքի առկայությունը՝ որպես Հայաստանի ներպետական օրենսդրության մաս, ներդրումներ իրականացնելիս կոփտարկվի որպես իրավական համակարգի գրավիչ բաղադրատարր: Երկրորդ, Տիպային օրենքն առաջարկում է միջազգային սնանկության կարգավորման նպատակով (բաղադրատարրն առկա է Հայաստանում) հստակ և ոչ ծախսատար, լավագույն միջազգային փորձին

համապատասխանող միջոցներ: Այս առումով Տիպային օրենքը կնպաստի նման հարցերում առավել որոշակիության և արդյունավետության:

Հիմնական առաջարկներ

Առաջարկվում է ՅՈՒՆՍԻՏՐԱԼ անդրսահմանային սնանկության մասին Տիպային օրենքի ներառում Հայաստանի սնանկության մասին օրենսդրության համակարգում:

11. ԱՅԼ ՀԱՐՅԵՐ

Ներածություն

11.1 Հետազոտական աշխատանքներն իրականացնելիս ծագել են այլ կարևոր հարցեր, որոնք կհիշատակվեն ստորև:

Գույքի վաճառք

11.2 Գույքի վաճառքի ընթացքում իրականացվող բոլոր գործընթացների վերաբերյալ ստացվել է նշանակալի արձագանք: Այդ արձագանքները կարելի է ամփոփել (ինչպես դա կատարվել է նախկին հրապարակումներում) որպես թափանցիկության և կարգավորման բացակայության հետևանք՝ հատկապես գնի և մեթոդոլոգիայի մասով:

11.3 Վերացարկվելով ստացված արձագանքների կոնկրետ ասպեկտներից՝ կարծում ենք, որ գույքերի վաճառքն իրականացնելիս գոյություն ունեն 2 այլընտրանքային մոտեցումներ՝

ա) առաջին, մանրամասն կանոններ նախատեսել գնահատման և աճուրդի իրականացման վերաբերյալ, որպեսզի պահպանման ենթակա նվազագույն չափանիշներ սահմանված լինեն, և այդ իսկ կերպ բարելավել հաշվետվողականությունը և թափանցիկությունը (այս մոտեցումը առաջարկվում է «Ճանապարհային քարտեզի զեկույցում»),

բ) ձգտել տարբեր միջոցների գործադրմամբ հասնել միևնույն արդյունքին՝ հնարավորություն տալով սնանկության կառավարչին (կազմակերպության անունից վաճառք իրականացնելիս) կամ ապահովված պարտատիրոջը (գրավադրված ակտիվների նկատմամբ) գույքի վաճառքն իրականացնելիս հետևել ընդհանուր և ոչ թե կոնկրետ չափանիշներին և պարտականություններին: Այսինքն, սնանկության կառավարչի կողմից գույքի վաճառքն իրականացնելիս պետք է հիմք ընդունել ընդհանուր չափանիշները, որոնց պահպանման պարտականությունը սնանկության կառավարչի համար սահմանված է 8.4-ով, ցուցաբերել զգուշավորություն և շրջահայեցություն, գործել արդար, բարեխիղճ և չօգտագործել սեփական դիրքը ոչ պատշաճ կերպով՝ իր կամ այլ անձի համար առավելության հասնելու համար: Նշված պարտականություններից ցանկացածի խախտումը կհանգեցնի սնանկության կառավարչի պարտականությանը՝ փոխհատուցելու կազմակերպության կրած վնասները, որպես օրինակ նշենք՝ խախտման արդյունքում շուկայական արժեքից ցածր գնով ապրանքի վաճառքի հետևանքով կազմակերպության կրած վնասը: Խախտումը կհանգեցնի նաև սնանկության կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման, եթե վերջինիս վարքագիծը եղել է ոչ թե պարզապես անփոյթ, այլ անպատշաճ: Այն դեպքում, երբ ապահովված պարտատերը վաճառում է գրավի առարկա հանդիսացող գույքը, օրենքով վերջինիս համար կարող է պատշաճ հոգածության

պարտականություն նախատեսվել առ այն, որ եթե ակտիվը ունի շուկայական գին, ապա վաճառքի գործընթացում հնարավոր լինի հասնել դրան, իսկ եթե շուկայական արժեքը բացակայում է, ապա համապատասխան միջոցներ կիրառվեն, որոնք հնարավորություն կտան տվյալ հանգամանքերում վաճառքն իրականացնել ողջամիտ գնով: Եվ կրկին, նշված պարտականություններից ցանկացածի խախտումը կհանգեցնի ապահովված պարտատիրոջ կողմից կազմակերպությանը պատճառված վնասի փոխհատուցման պարտականությանը:

11.4 Պատշաճ կարգավորված, պատշաճ գործող սնանկության միջավայրում հարկ է նախընտրությունը տալ երկրորդ մոտեցմանը, քանի որ սնանկության կառավարիչը (կամ ապահովված ակտիվների վաճառքն իրականացնող ապահովված պարտատերը) պարտավոր է պատշաճ գործել և հասնել շուկայական արժեքին: Նշված պարտականություններից ցանկացածի խախտումը կհանգեցնի կազմակերպության կրած վնասների փոխհատուցման պարտականության, իսկ սնանկության կառավարչի դեպքում՝ կարգավորման ռեժիմին համապատասխան սանկցիայի վրա հասնելուն:

11.5 Այնուամենայնիվ, եթե սնանկության կառավարիչները օժտված չեն նշված գործառույթների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ պատրաստվածությամբ և հնարավորություններով, կամ եթե սնանկության կառավարիչների նկատմամբ վերահսկողական գործընթացները արդյունավետ չեն գործում, ապա առաջին մոտեցումը կդիտարկվի որպես ընդունելի տարբերակ՝ քանի դեռ սնանկության կառավարիչը և կիրառվող վերահսկողությունը անհրաժեշտ զարգացման մակարդակի չեն հասել և արդյունավետ չեն գործում: Ստացված արձագանքները մանրամասն հաշվի առնելու նպատակով գույքի արդյունավետ վաճառքի վերաբերյալ կարգավորումներ ներդնելը նշված սցենարի դեպքում հարկ է կատարել ժամանակավոր հիմունքներով, սակայն զուգակցելով սնանկության կառավարչի վարքագծի մոդելի մշակմամբ՝ այն հարմար ժամանակին ներդնելու նպատակով:

Սնանկության մասին օրենքը՝ որպես պարտքերի հավաքագրման գործիք

11.6 Անվիճելի ժամկտանց պարտքերի բռնագանձման հարցում սնանկության մասին օրենքների օգտագործումը բխում է օրենքի իրավաչափ նպատակներից՝ պայմանով, որ այն չի խոչընդոտում առողջացման փորձերին: Սովորաբար, այդ մասին կարելի է գտնել կազմակերպության լուծարման մասին օրենքի հատվածներում:

11.7 Այդ գործընթացում, սովորաբար, պահանջվում է, որ կազմակերպությանը որոշակի ձևի դիմում ներկայացնի, որով կպահանջվի, որ պարտատիրոջ առջև առկա պարտքը մարվի ողջամիտ ժամկետում. 21 օրը վերջնաժամկետի

օրինակելի տարբերակ է համարվում: Եթե վճարումը չի իրականացվում նշված ժամանակահատվածում և պարտքի վերաբերյալ առկա չէ իրական վեճ (և բացակայում է կազմակերպության կողմից պարտապանի նկատմամբ նույն գումարի չափով կամ ավելի մեծ չափով գումարի հակընդդեմ հայցադիմում), ապա 21-օրյա ժամկետը լրանալուց հետո կգործի կազմակերպության սնանկության կանխավարկածը: Պարտատերը կարող է դատարանում սկսել լուծարման գործընթացը և ապավինել այն կանխավարկածին, որ արդյունքում կազմակերպությունը կլուծարվի, եթե, իհարկե, կազմակերպությունը դատարանում չապացուցի կա՛մ իրական վեճի առկայությունը, կա՛մ, որ կազմակերպությունը վճարունակ է:

11.8 Օրենքով սահմանված պահանջի ներկայացման այս գործընթացը ծառայում է 3 հիմնական նպատակներին՝

- ա) արդյունավետ միջոցներ տրամադրել ֆինանսական դժվարություններ ունեցող կազմակերպությունից պարտքերի բռնագանձման համար,
- բ) պարզեցնել կազմակերպության լուծարման համար անհրաժեշտ դատական ընթացակարգերի մեծ մասը՝ սնանկության կանխավարկածի սահմանմամբ և հստակ կարգավորումներ նախատեսելով առ այն, թե երբ է նման կանխավարկածը ծագում և ենթակա հերքման,
- գ) խրախուսել անվճարունակ (կամ սնանկության մոտեցող) պարտապանին որոշել՝ արդյոք նա պետք է սկսի կորպորատիվ առողջացման գործընթաց:

11.9 Առաջարկում ենք, որ օրենքով նախատեսված գործընթացը սահմանվի «Սնանկության մասին» նոր օրենսգրքում:

Սնանկության մասին և այլ օրենքների ու քաղաքականության դրույթների ոչ հստակ և ոչ համապատասխան լինելու մասին

11.10 Գլուխ 4-ում ամրագրված են մի շարք խնդիրներ՝ կապված սնանկության գործող օրենսդրության կիրառման անհամապատասխանության և անորոշության հետ: Գործող սնանկության օրենսդրության մեջ առկա են նաև ոչ հստակ կամ երկիմաստ դրույթներ: Նշված հարցերը խնդրահարույց են, քանի որ դրանք հանգեցնում են տվյալ հարցով օրենքի կիրառման անորոշության և անհետևողական որոշումների ընդունման տարբեր գործերով և տարբեր դատարաններում:

11.11 «Սնանկության մասին» նոր օրենսգրքի մշակումը հնարավորություն կտա վերացնել նշված խնդիրները և անորոշությունները՝ հստակություն ներդնելով նոր Օրենսգրքում: Օրենսգրքով կարող է նախատեսվել, որ դրա դրույթները կիրառվում են՝ անկախ այլ գործող օրենքներին հակասելու դեպքում:

11.12 Ստորև կներկայացնենք, թե ինչպես սա կարող է դիտարկվել պահանջների բավարարման առաջնահերթությունները որոշելու հարցում:

Պահանջների բավարարման առաջնահերթություններ

11.13 Կազմակերպության ակտիվները, որոնք վերադարձվում են լուծարողի կողմից, սովորաբար, բաշխվում են հետևյալ առաջնահերթությամբ՝

ա) լուծարողի կրած ծախսերը,

բ) աշխատակիցների իրավունքները (օրինակ՝ չվճարված աշխատավարձ, կենսաթոշակային վճարները, չվճարված արձակուրդը և արձակման նպաստը), և

գ) չապահովված պարտերերը՝ համաչափության սկզբունքով:

11.14 Երբեմն կարող է անորոշություն ծագել աշխատակիցների առաջնահերթության իրավունքի բնույթի և չափի վերաբերյալ: Այդ անորոշությունը կարող է վերացվել վերանայված «Սնանկության մասին» նոր օրենսգրքում նախատեսված առաջնահերթության հստակ բնույթը և աստիճանը, ինչպես նաև այնպիսի դրույթներ սահմանելով, ըստ որոնց՝ առաջնահերթությունը կիրառվում է՝ անկախ այլ գործող ցանկացած օրենքում նախատեսված կարգավորման:

11.15 Որոշ իրավական համակարգերում առաջնահերթությամբ է օժտված չվճարված հարկը: Սա պետական քաղաքականության, և ոչ թե օրինագծի կողմից կարգավորման ենթակա հարց է: Սակայն, հարկ ենք համարում նշել, որ ՄԱԿՄԱԻՀ «Սնանկության օրենքի մասին օրենսդրական ուղեցույցի» 74-րդ պարագրաֆում կատարված են հետևյալ դիտարկումները.

«Հաճախ առաջնահերթություն է տրվում կառավարության հարկային պահանջներին՝ պետական եկամուտները պաշտպանելու նպատակով, սակայն դա հիմնավորվում է նաև մի շարք այլ դիտարկումներով: Նշված հիմնավորումների շարքում է այն պնդումը, որ վերակազմակերպումը կարող է ձեռնտու լինել, քանի որ հարկային մարմինները կխրախուսվեն հետաձգել հարկերի գանձման իրականացումը խնդրահարույց ձեռնարկություններից՝ պայմանով, որ սնանկության դեպքում նրանց առաջնահերթություն կտրամադրվի, և, հաշվի առնելով, որ կառավարությունը չի հանդիսանում առևտրային պարտատեր, ապա նրա մասնակցությունը կարող է որոշ առևտրային պարտքերի բռնագանձման գործընթացներից բացառվել: Այնուամենայնիվ, այդպիսի պահանջներին առաջնահերթություն տրամադրելը կարող է խաթարել վարույթի արդյունավետությունը, քանի որ հարկերի գանձումից հրաժարումը կարող է վտանգել հարկային օրենսդրության միատեսակ կիրառումը և կարող է պետական սուբսիդիայի տեսք ընդունել, որը խաթարում է սնանկության արդյունավետ ռեժիմն ապահովելուն կոչված դիսցիպլինան: Սա կարող է հանգեցնել հարկային մարմինների կողմից պարտապանների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելիս և առևտրային

հիմունքներով պարտքեր հավաքագրելիս բարեհոգության դրսևորման, ինչը հակառակ պարագայում կօգներ կանխել սնանկությունը և ակտիվների վաճառքը...»:

11.16 Նույնպիսի դիտարկումներ կարելի է գտնել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Կարգավորված և արդյունավետ սնանկության ընթացակարգեր» (1999) փաստաթղթում: Վերջինիս՝ «Սնանկության և պարտատիրոջ իրավունքների արդյունավետ համակարգի սկզբունքների և ղեկավար դրույթների մասին» 2001 թվականի հրատարակության 146-րդ պարագրաֆում Համաշխարհային բանկը դեմ է արտահայտվել «առաջնահերթությունից օգտվող... պարտքերի կատեգորիաների ավելացման միտումին, օրինակ՝ նման կարգավիճակ շնորհելով յուրաքանչյուր նոր հարկատեսակին, պարտավորությանը կամ աշխատողի յուրաքանչյուր լրացուցիչ իրավունքին»:

11.17 Թե արդյո՞ք Հայաստանում չվճարված հարկի նկատմամբ պետք է առաջնահերթություն սահմանվի՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական քաղաքականության հարցն է: Օրենսգրքի նախագիծը մշակելիս դրանում նշված քաղաքականությունը պետք է հասկանալի լեզվով արտացոլվի:

Տեղեկատվության թափանցիկություն

11.18 Սնանկության գործընթացի ընթացքում տեղեկատվության թափանցիկությունը որպես խնդիր է նշվել: Առաջատար պրակտիկայի տեսանկյունից պետք է գոյություն ունենան տեղեկատվական մեխանիզմներ, որոնք թույլ կտան պարտատերերին և այլ շահագրգիռ անձանց տեղեկացված լինել պարտապանին և նրա սնանկության գործընթացին վերաբերող հարցերի գոյության մասին: Նշված տեղեկատվությանը տիրապետող ռեստորավարը պետք է հասանելի լինի վերոնշյալ անձանց շրջանակի համար: Բացի այդ, բոլոր փաստաթղթերը և էլեկտրոնային հաղորդագրությունները, որոնք դուրս են եկել այն կազմակերպության անունից, որի նկատմամբ հարուցված է սնանկության վարույթ, պետք է տեղեկատվություն պարունակեն առ այն, որ կազմակերպությունը ենթակա է սնանկության:

Հաշտարարության հասանելիությունը

11.19 Հաճախ սնանկությունը հետևանք է պարտապանի և նրա միայն մեկ պարտատիրոջ հետ ձևավորված հարաբերություններին, օրինակ՝ բանկի, վարձատուի կամ հարկային մարմնի: Մասնավորապես, նման իրավիճակում հաշտարարությունը կարող է օգնել, սակայն այն կարող է օգնել նաև ընդհանուր առմամբ, օրինակ՝ այն դեպքերում, երբ ծրագիրը քննարկվում է պարտատերերի

հետ: Վերանայված Օրենսգրքում հարկ է ամրագրել և խրախուսել հաշտարարությունը:

Էլեկտրոնային հաղորդակցություն

11.20 Խորհրդակցությունների արդյունքում բարձրացված մեկ այլ կարևոր հարց է պատշաճ ծանուցմանը վերաբերող խնդիրը: Օրինակ, ներկայիս պայմանները կողմերին հնարավորություն չեն տալիս հաղորդակցվել էլեկտրոնային եղանակով: Նշված խնդիրը լուծելու նպատակով կարելի է հիմք ընդունել այլ իրավական համակարգերում ձևավորված լավագույն պրակտիկան, որտեղ թույլատրվում է էլեկտրոնային ծանուցման կիրառումը և փաստացի ամրագրված է սնանկության գործընթացը սկսելուն պես բոլոր պարտատերերի ծանուցման պահանջը, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով:

Պարտատերերի ժողով

11.21 Շահագրգիռ անձանց հետ խորհրդակցությունների արդյունքում ստացված արձագանքից նաև ակնհայտ է, որ անհրաժեշտ է մշակել մի շարք կանոններ՝ պարտատերերի ժողովների պատշաճ կազմակերպման համար: Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել պարտատերերի քվեարկության ձևին: Դրանով պայմանավորված՝ առկա են հաշվարկի տարբեր շեմեր, որոնք հետագայում կարող են օգտագործվել քվեարկության համար:

11.22 Սույն զեկույցում անդրադարձել ենք, թե քվեարկության պարագայում ձայները ինչպես պետք է տրվեն և հաշվարկվեն (և ինչպես իրականացնել պարտատերերի ժողովներ) ՄՓՄՁ սնանկության համատեքստում: Առաջարկում ենք վերանայված «Սնանկության մասին» օրենսգրքով պարտատերերի ժողովների դեպքում նախատեսել ձայների մեծամասնության հաշվարկման տարբեր համակարգեր: Այսինքն, յուրաքանչյուր պարտատեր օժտված լինի մեկ ձայնի իրավունքով կամ ձայնը հաշվի առնվի՝ նկատի ունենալով պահանջի արժեքը, կամ հաշվի առնել երկու մեծամասնություններն էլ (և այդ դեպքում ինչպե՞ս պետք է որոշվի արդյունքը, երբ մեծամասնությունը մի կերպ է քվեարկել, իսկ արժեքի մասով մեծամասնություն ունեցող մասը՝ մեկ այլ կերպ): Գոյություն ունեն մի շարք միջազգային նախադեպեր, որոնք որոշում են պարտատերերի ժողովների անցկացման կանոնները, ինչպես նաև ձայների տարբեր մեծամասնություններ են սահմանում, և նշված խնդիրները կարող են լուծվել 4-րդ Գլխում առաջարկված օրենսդրական բարեփոխումներն իրականացնելիս:

Այլ արձագանքներ

11.23 Այլ լրացուցիչ կարևոր արձագանքներ հարկ է հաշվի առնել վերանայված «Սնանկության մասին» օրենսգրքով: Ստորև կթվարկենք պարտատերերի հետ

անցկացված խորհրդակցությունների արդյունքում հիշատակված երեք հիմնական խնդիրները, որոնք դեռևս չեն ներկայացվել սույն Ձեկույցում՝

- լուծարման գործընթացի ընթացքում նպատակահարմար կլիներ հնարավորություն սահմանել պարտատերերին ներկայացնել պարտավորությունների համաձայնեցման մասին ծրագիր և քննարկել այն լուծարման ցանկացած փուլում,
- Գլուխ 4-ում հղում է կատարվում հիմնադրամի ստեղծմանը՝ աշխատողների չբավարարված պահանջները պետության կողմից բավարարելու նպատակով: Եթե Հայաստանի Հանրապետությունը ունակ է ստեղծել նման հիմնադրամ, ապա վերջինիս գործունեության ուղղությունները կարող են ընտրվել՝ հիմք ընդունելով միջազգային պրակտիկան, իսկ դրա գործունեությունը կարող է կարգավորվել «Սնանկության մասին» վերանայված օրենսգրքով,
- նախատեսված է, որ հարկ է աջակցել կանխամտածված և կեղծ սնանկության դեպքերի բացահայտմանը: Միջազգային նախադեպերը հասնում են նշված նպատակին՝ շնորհիվ օրենսդրորեն ամրագրված դրույթի առ այն, որ սնանկության կառավարիչը կանխամտածված և կեղծ սնանկության դեպքերի մասին պարտավոր է հայտնել իրավապահ մարմիններին: Նշվածը որպես սնանկության կառավարչի պարտականություն կարող է ամրագրվել «Սնանկության մասին» վերանայված օրենսգրքում:

Հիմնական առաջարկներ
<p>Առաջարկվում է, որ նոր «Սնանկության մասին» օրենսգրքը անդրադառնա հետևյալ հարցերին՝</p> <ul style="list-style-type: none">● Օրենսդրորեն պարզեցված ընթացակարգի սահմանում անվիճելի պարքերի բռնագանձման համար,● Հստակություն բոլոր այն հարցերի առնչությամբ, որոնք ներկայումս համարվում են ոչ հստակ, հակասող կամ որոնց վերաբերյալ օրենքներում է առկա հակասություն,● Հանրամատչելի ռեեստրի ստեղծում, որը կբովանդակի ընթացող սնանկության գործընթացների մասին տեղեկատվություն,● «Սնանկության մասին» նոր օրենսգրքում հաշտարարության գործընթացի ամրապնդումը,● Նմանապես հարկ է դիտարկել նշված գլխում հիշատակված նաև այլ հարցերը:

12. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ . ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

12.1 Սույն զեկույցում ներկայացվել է Հայաստանի իրավական ավանդույթների ուսումնասիրությունը, քաղաքացիական իրավունքի համակարգը և դատական աստիճանակարգությունը, ինչպես նաև սնանկության մասին Հայաստանի գործող օրենսդրության նկարագրությունը:

12.2 Սույն Զեկույցը սահմանում է շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններից ստացված դիտարկումները՝ սնանկության մասին գործող օրենքների վերաբերյալ՝ համաձայն սույն Զեկույցի 4-րդ գլխի կարճ ամփոփագրի:

12.3 Սույն նյութը, ինչպես նաև վերջերս կատարված և Գլուխ 3-րդում ամփոփված ռազմավարական աշխատանքը, օրենքի բարեփոխման վերաբերյալ կարևոր առաջարկներ է պարունակում, որոնք զետեղված են սույն Զեկույցի տարբեր գլուխներում: Զեկույցում առաջակվում է նաև ռազմավարություն, որը ներկայացված է ստորև:

12.4 Այնուամենայնիվ, կարևոր է մատնանշել Գլուխ 4-ը, այն է՝ Սնանկության մասին նոր օրենք/օրենսգիրք մշակելու անհապաղ անհրաժեշտությունը, որը պետք է համապարփակ կարգավորի սնանկության ոլորտում առաջացող բոլոր ընթացակարգային և նյութաիրական հարաբերությունները: Այս եզրակացությունն ամրապնդվում է սնանկության մասին գործող օրենքում առկա անորոշություններով և մի շարք բացերով, որոնք պետք է լուծվեն օրենսդրության մեջ հստակություն և հետևողականություն ապահովելու համար:

12.5 Հարցումները և ուսումնասիրությունները հիմք են հանդիսացել հետևյալ առաջարկությունները կատարելու համար.

ա) հաստատապես առաջարկվում է նախաձեռնել սնանկության մասին օրենսդրության պաշտոնական բարեփոխումների գործընթաց՝ օրենքում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենքի ընդունման միջոցով՝ ստորև նշված կետերով: Սույն Զեկույցն առաջարկում է որոշ նոր դիտարկումներ, թե ինչպես կարող է իրականացվել այս գործընթացը: Թե շահագրգիռ կողմերի, թե սեփական դիրքորոշումն այն է, որ բարեփոխումների գործընթացը պետք է լինի համապարփակ և ներառվի սնանկության նոր օրենսգրքում, և ոչ թե փոփոխելով կամ լրացնելով գործող օրենքի դրույթները.

բ) այն համապատասխանում է միջազգային լավագույն փորձին և առաջարկվում է ժամանակակից կորպորատիվ առողջացման ինստիտուտի ներդրումը՝ որպես սնանկության մասին օրենքի կարևոր մաս.

գ) այն համապատասխանում է միջազգային լավագույն փորձին և առաջարկվում է փոքր և միջին ձեռնարկատիրական ոլորտին և նրանց

կարիքներին հարմարեցված համապատասխան ռեժիմի ներդնումը սնանկության օրենսդրության մեջ.

դ) այն համապատասխանում է միջազգային լավագույն փորձին և առաջարկվում է իմպլեմենտացնել Անդրսահմանային սնանկության մասին ՄԱԿՄԱԻՀ մոդելային օրենքը սնանկության օրենսդրության մեջ.

ե) հաստատապես առաջարկվում է՝

ե.1) նախաձեռնությունների իրականացում՝ ուղղված դատական համակարգի և սնանկության գործերով կառավարիչների կարողությունների զարգացմանը.

ե.2) սնանկության գործերով կառավարիչների կարգավորումների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի որդեգրում.

զ) առաջարկվում է օրենքի բարեփոխումների շրջանակում հաշվի առնել շահագրգիռ անձանց կողմից ներկայացվածն Հավելված Ա-ում նկարագրված շատ այլ հարցեր ևս, որոնք կարող են քննարկվել որպես առաջին կետում նշված բարեփոխումների մաս:

12.6 Վերոնշյալ առաջարկություններն **իրացնելու համար** առաջարկվում է իրականացնել ստորև նշված քայլերը:

Քայլ առաջին- Որոշում բարեփոխելու սնանկության մասին ՀՀ օրենսդրությունը.

12.7 Սկզբունքորեն պետք է որոշում կայացնել, թե սույն Ռազմավարական զեկույցում նշված եզրակացությունների և օժանդակ նյութերի հիման վրա պետք է քայլեր ձեռնարկել սնանկության մասին ՀՀ օրենսդրությունը բարեփոխելու համար:

Քայլ երկրորդ- Որոշում նախաձեռնելու ad hoc բարեփոխում, կամ որպես այլընտրանք՝ սնանկության մասին համապարփակ օրենսգրքի պատրաստում

12.8 Բարեփոխումը կարող է իրականացվել ad hoc (այսինքն՝ գործող դրույթների փոփոխություններ կամ լրացումներ նախաձեռնելով), կամ Սնանկության մասին համապարփակ օրենսգրքի մշակում, որը փոխարինում է գործող օրենքին (չնայած դրա առանձին մասեր կապահպանվեն, որոնցում փոփոխությունները անհրաժեշտ չեն):

12.9 Երկու մոտեցումներն էլ կձառայեն սույն Ձեկույցում բարձրացված խնդիրների լուծմանը: Այնուամենայնիվ, Սնանկության մասին համապարփակ նոր

օրենսգիրքը, հավանաբար, առավել համապատասխան, համապարփակ և կայուն կլինի, քանի որ օրենսգրքի յուրաքանչյուր մաս պետք է կազմված լինի այնպես, որ համակարգի և համահունչ լինի օրենսգրքի մյուս մասերի հետ:

12.10 Հետևաբար, օրենքի բարեփոխումների հետագա աշխատանքները սկսելու համար պետք է որոշում կայացնել, թե այս երկու այլընտրանքային գործընթացներից որ մեկն է ընտրվելու:

Քայլ երրորդ- Որոշում օրենքի բարեփոխումների գործընթացում նոր կառուցվածքային կոմպոնենտների ներառման մասին

12.11 Կան որոշ առաջարկություններ, որոնք վերաբերում են օրենքում լրացվող նոր կառուցվածքային բաղադրիչներին (կամ սնանկության նոր օրենսգրքի մաս, կամ գործող օրենքում լրացում կատարելու միջոցով): Դրանք են.

- ՄՓՄՁ ռեժիմի ներդնում.
- Կորպորատիվ առողջացման ռեժիմի վերանայում.
- Անդրսահմանային սնանկության մասին ՄԱԿ ՄԱԻՀ մոդելային օրենքի ընդունում.
- Պարտատերերի և պարտապանների միջև փոխգործակցության լուծման ժամանակակից գործընթացների ներդնում.
- Սնանկության գործով կառավարչի նկատմամբ կիրառվող վերահսկողական ռեժիմի ապահովում.
- Գույքի վաճառքի նկատմամբ կիրառվող գործընթացների բարեփոխման ապահովում.
- Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների ընթացքում հայտնաբերված այլ ոլորտների և գործընթացների բարեփոխումների ապահովում:

12.12 Որոշ առաջարկություններ են առկա օրենքի գործողության ամբողջականությունն ու արդյունավետությունը խթանելու համար: Դրանք են.

- Սնանկության գործով կառավարիչների կարողությունների զարգացման ուղղված նախաձեռնություններ.
- Դատական համակարգի կարողությունների զարգացման ուղղված նախաձեռնություններ:

12.13 Անհրաժեշտ է սկզբունքային որոշում կայացնել, թե վերոհիշյալ առաջարկներից որին պետք է հետևել և զարգացնել այս բարեփոխումների գործընթացի շրջանակներում: Որպեսզի առավել պարզ լինի, այս քայլով բոլոր դեպքերում չի որոշվում կոնկրետ առաջարկությունը օրենքի մեջ ընդունելը: Խնդիրը հարկ է լուծել ստորև նշված քայլերով, և գործընթացի ավարտին որոշելու, թե արդյոք որևէ առաջարկություն ընդունվում է, թե ոչ: Այնուամենայնիվ, եթե պարզ է, որ առաջարկությունը չի ընդունվելու, այդ հարցը կարող է բացառվել հետագա գործընթացից:

Քայլ չորրորդ- Առաջարկությունների կատարման ուղղությամբ ազգային և միջազգային խորհրդատուների հետ աշխատելու համար աշխատանքային խմբի ստեղծում (կամ գործող աշխատանքային խմբին համապատասխան իրավասությունների տրամադրում)

12.14 Կարևոր է, որ ազգային և միջազգային փորձագետները ունենան պատշաճ լիազորված աշխատանքային խումբ, որի հետ կարող են համագործակցել, և աշխատանքային խումբը կարող է շարունակել զարգացնել բարեփոխումների նախագիծը՝ վերը նշված հարցերի վերաբերյալ ընդունված որոշումների օգտին:

Քայլ հինգերորդ- Նոր օրենսգրքի (կամ գործող օրենքում առաջարկվող փոփոխությունների) կառուցվածքի և օրենքի յուրաքանչյուր տարրի առաջարկվող բնութագրերի մշակում

12.15 Ազգային և միջազգային փորձագետները աշխատելու են աշխատանքային խմբի հետ՝ պատրաստելու նոր օրենսգրքի (կամ գործող օրենքում առաջարկվող փոփոխությունների) ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև ընդհանուր նկարագրում նշված յուրաքանչյուր տարրի մանրամասները: Չնայած այն առաջարկվող նոր օրենսգրքի մշակումը չէ, սակայն այն բավական մանրամասնորեն կներկայացնի, թե ինչ է առաջարկվում, որպեսզի օրենսգրքի մշակումը հնարավորություն լինի կատարել մանրամասների հիման վրա, եթե կայացվի այդ վերջնական քայլը կատարելու մասին որոշումը: Շրջանառության համար մեկնաբանություններ ևս առկա կլինեն, որը կքննարկի էական փոփոխությունները, առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ կարծիքներ ստանալու համար (նշվածը կներառի հաջորդող որոշ նյութի վերարտադրությունը, որը ներկայացնում է առաջարկվող որոշ բարեփոխումների հիմնավորումները):

12.16 Սնանկության մասին առաջարկվող օրենսգրքի ընդհանուր նկարագիրը կլինի այս գործընթացի արդյունքը, որը ներառում է ակտի կառուցվածքը, ինչպես նաև դրանում ներառված յուրաքանչյուր ասպեկտի մանրամասն նկարագիրը: Նշվածը կուղեկցի նաև առաջարկվող բացատրություններով: Երբ ընդհանուր նկարագիրն ու մեկնաբանությունը կընդունվեն աշխատանքային խմբի կողմից, գործընթացը պատրաստ կլինի վեցերորդ քայլին:

Քայլ վեցերորդ- Առաջարկվող հատուկ փոփոխությունների վերաբերյալ շահագրգիռ կողմերի խորհրդատվությունը

12.17 Այնուհետև ընդհանուր նկարագիրը և մեկնաբանությունները կփոխանցվեն հիմնական շահագրգիռ կողմերին՝ օրենքի առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ վերջին խորհրդակցությունների գործընթացը սկսելու համար:

12.18 Խորհրդակցության այդ գործընթացից հետո փորձագետները կաշխատեն աշխատանքային խմբի հետ՝ որոշելու, թե որ փոփոխությունները պետք է կատարվեն խորհրդակցությունների ընթացքում ստացված կարծիքների արդյունքում: Նշվածը կարող է ներառել խորհրդատուների զեկույցը, որում ներկայացված են կարծիքները և քննարկված է, թե արդյոք առաջարկվող փոփոխություններն ընդունվում են, և եթե այո, ապա ինչպես:

Վերջնական քայլ- Վերանայված օրենսգրքի (կամ գործող օրենքում փոփոխությունների) մշակում

12.19 Այս քայլը ներառում է Սնանկության նոր օրենսգրքի (կամ գործող օրենքում փոփոխությունների) նախագծի մշակումը՝ հիմնված նախապես շրջանառված ընդհանուր նկարագրի և մեկնաբանությունների վրա, և ներառում է խորհրդակցությունների արդյունքում ընդունված առաջարկությունները:

12.20 Այս քայլը ներառում է նաև կարողությունների զարգացման նախաձեռնությունների իրականացումը ինչպես պրակտիկ մասնագետների, այնպես էլ դատական համակարգի ներկայացուցիչների հետ: